

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Բնական գիտությունների ֆակուլտետ**  
*«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»*  
**ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ**

|   |   |
|---|---|
| <b>1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը</b> | Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա<br>061101.00.6           |
| <b>2. Բուհը</b>                                     | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի<br>Իջևանի մասնաճյուղ |
| <b>3. Ծրագիրը հավաստարմագրված է</b>                 | –   |
| <b>4. Շնորհվող որակավորումը</b>                     | Ինֆորմատիկայի բակալավր                                      |
| <b>5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին</b>         | 2022/23   |
| <b>6. Ուսումնառության լեզուն</b>                    | Հայերեն   |
| <b>7. Ուսուցման ձևը</b>                             | Առկա  |

|   |
|---|
| <b>8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները</b>  |
| Ծրագրի դիմորդը պետք է ունենա.<br><ul style="list-style-type: none"><li>միջնակարգ կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական կրթություն,</li><li>ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:</li></ul> |

|   |
|---|
| <b>9. Ծրագրի նպատակները և խնդիրները</b>   |
| <b>Ծրագրի նպատակն է.</b><br><ol style="list-style-type: none"><li>ձևավորել անհրաժեշտ գիտակրթական հենք և մասնագիտական ներուժ Հայաստանի Հանրապետությունում ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի զարգացման համար,</li><li>պատրաստել ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի բնագավառի մասնագետներ նախագծային, արտադրա-տեխնոլոգիական, գիտական և գիտահետազոտական, կազմակերպչական և կառավարման գործունեության համար, որոնք ունակ կլինեն.<ul style="list-style-type: none"><li>համադրելու հիմնարար և կիրառական մաթեմատիկայի գիտելիքները տարբեր համակարգերի մոդելավորման, տեղեկատվությունների որոնման, տվյալների հենքերի ստեղծման, պահպանման և օգտագործման նպատակով,</li><li>աշխատելու գիտական և գիտաարդյունաբերական բնագավառներում,</li><li>կատարելու տարբեր ոլորտներում հետազոտությունների արդյունքների և գործընթացների արդյունավետության վերլուծություն:</li></ul></li></ol> <b>Ծրագրի հիմնական խնդիրներն են.</b> <ul style="list-style-type: none"><li>ապահովել մաթեմատիկական մոդելների և մեթոդների, ալգորիթմների, ծրագրային ապահովման նախագծման և թեստավորման մեթոդների հետազոտում և մշակում, գիտական տեխնոլոգիաների և ծրագրային փաթեթների օգտագործում կիրառական խնդիրների լուծման համար,</li><li>ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրույթների, նախագծման, վերլուծության և մշակման հիմնարար սկզբունքների ու մեթոդների յուրացումը և ձևավորել գործնական կիրառման կարողություններ,</li><li>ձևավորել գրավոր, բանավոր և գրաֆիկական հաղորդակցության ու թիմային աշխատանքի կարողություններ,</li><li>նախապատրաստել շրջանավարտներին բազմաբնույթ մասնագիտական կարիերայի ու աշխատատեղերի, ինչպես նաև շարունակական մասնագիտական կատարելագործման համար,</li><li>ստեղծել անհրաժեշտ կրթական նախադրյալներ ծրագրի շրջանավարտների կրթությունը մագիստրոսի ու հետազոտողի ծրագրերով ուսումնառությունը շարունակելու համար:</li></ul> |

|  |
|--|
| <b>10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները</b>  |
| <b>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն</b><br><i>Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</i><br>Ա1.Ներկայացնելու և բացատրելու ծրագրավորման ժամանակակից սկզբունքները, մեթոդները (կառուցվածքային մեթոդ, օբյեկտակողմնորոշված մեթոդ, համակարգային մեթոդ, միկրոկոնտրոլերների և |

սարքերի ծրագրավորման մեթոդ), արդի տեղեկատվական տեխնոլոգիաները:

**Ա2.**Թվարկելու ծրագրավորման արդի լեզուները, դասակարգելու և ներկայացնելու դրանց առանձնահատկությունները, կիրառման ոլորտները, հիմնավորելու տարբեր խնդիրների ծրագրային իրականացման համար կոնկրետ լեզվի ընտրությունը:

**Ա3.**Բացատրելու գուգահեռ և բաշխված ծրագրավորման, տարբեր լեզուներով աջակցվող web-ծրագրավորման, գրաֆիկական միջերեսի ծրագրավորման, տեխնիկական համակարգերի և միկրոկոնտրոլերների ծրագրավորման առանձնահատկությունները, սկզբունքները և մեթոդները, ներկայացնելու ծրագրերի օրինակներ:

**Ա4.**Ներկայացնելու գիտական և տնտեսական տարբեր ոլորտներում մեծածավալ տվյալների մշակման և վերլուծության մեթոդները, ծրագրային համակարգերի կիրառման սկզբունքները, բացատրելու և վերլուծելու դրանց ներդրման նպատակահարմարությունը և արդյունավետությունը, բերելու ծրագրային համակարգերի կիրառման հայտնի օրինակներ:

**Ա5.**Ներկայացնելու և նկարագրելու ժամանակակից համակարգիչների, գերհամակարգիչների և համակարգչային ցանցերի ճարտարապետական առանձնահատկությունները, անվտանգության և պաշտպանվածության ապահովման սկզբունքները և մեթոդները, կիրառման ոլորտները և ուղղությունները, մեկնաբանելու դրանց օգտագործման հնարավորությունները ՀՀ-ում և տարածաշրջանում:

**Ա6.**Ներկայացնելու ռոբոտատեխնիկական օբյեկտների ծրագրային ապահովման սկզբունքները և դրանց վրա հիմնված ավտոմատ կառավարման համակարգերի սխեմատեխնիկական իրականացման հիմնական հասկացությունները և եղանակները:

**Ա7.**Բացահայտելու, ներկայացնելու, վերլուծելու և մեկնաբանելու ծրագրային համակարգերի ապարատային և ծրագրային լուծումների մարքեթինգային բնութագրիչները և ցուցանիշները:

### **Բ. Գործնական մասնագիտական կարողություններ**

#### ***Մյս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.***

**Բ1.**Լուծելու մասնագիտական ոլորտի խնդիրներ՝ օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար գաղափարները, մոդելները, սկզբունքները, դրույթները, խնդիրների լուծման եղանակները:

**Բ2.**Օգտվելու խնդիրների մաթեմատիկական մոդելավորման և մոդելների ծրագրավորման մեթոդներից, մաթեմատիկական վերլուծական և վիճակագրական գործիքներից, էլեկտրոնային համակարգերի նախագծման և տեխնիկապես իրագործման ծրագրային և ապարատային միջոցներից, ինչպես նաև վիրտուալ հարթակների գործիքակազմից:

**Բ3.**Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ավգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:

**Բ4.**Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:

**Բ5.**Նախագծելու անվտանգ և պաշտպանված հաշվողական համակարգեր և ցանցեր՝ կիրառելով համակարգչային և ցանցային ճարտարապետության առանձնահատկությունները, դրանց ապարատային և տարրային հենքի կառուցվածքը:

**Բ6.**Հավաքագրելու մասնագիտական տեղեկատվություն ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ պահանջող տարբեր պարզ և բարդ խնդիրների լուծման համար՝ օգտագործելով հաղորդակցման և որոնողական ժամանակակից տարբեր համակարգեր, նորարարական մեթոդներով իրականացնելու հավաքագրված մասնագիտական տվյալների քանակական և որակական վերլուծություններ, կատարելու տրամաբանական եզրահանգումներ:

**Բ7.**Նախագծելու և կառուցելու ավտոմատ կառավարման համակարգեր (ռոբոտներ), մշակելու դրանց սխեմատեխնիկական իրականացման միջոցները և ծրագրային ապահովումը:

**Բ8.**Ուսումնասիրելու ծրագրային համակարգերի սպառման շուկաները, պլանավորելու, նախագծելու և կառուցելու շուկայում պահանջված ծրագրային համակարգեր, հավաքագրելու և վերլուծելու ծրագրային համակարգերի ներդրման և շահագործման ցուցանիշները:

**9. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**

***Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.***

**91.** Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

**92.** Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

**93.** Որոշելու իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:

**94.** Ստանձնելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

**95.** Մասնագիտական հանրություն կառուցելու տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ բանավոր ու գրավոր խոսք մայրենի և որևէ օտար լեզվով:

**96.** Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:

**11. Ծրագրի ուսումնական պլանը**

Կցված է

**12. Ուսումնական պլանի քարտեզը**

Կցված է

**13. Գնահատման ձևերը**

- Հետազոտական աշխատանք
- Լուսապատկերաշար
- Ռեֆերատ
- Էսսե
- Թղթապանակ
- Մասնագիտական գրականության վերլուծություն
- Խմբային աշխատանքի ներկայացում
- Գրավոր կարճ հաղորդագրություններ
- Տարաբնույթ առաջադրանքներ
- Ձեկուցումներ
- Ուսումնական նախագծեր
- Գործնական աշխատանք
- Թեմատիկ աշխատանք
- Կիսամյակային ամփոփիչ աշխատանք
- Ինքնագնահատում, փոխգնահատում
- Բանավոր հարցում
- Ստուգողական աշխատանք
- Ընթացիկ քննություններ
- Ստուգարքներ
- Եզրափակիչ քննություններ
- Ավարտական աշխատանքի պաշտպանություն

**14. Երջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները**

«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել տեղեկատվական տեխնոլոգիաների բազմաբնույթ ոլորտներում գործող պետական և մասնավոր հիմնարկներում, կազմակերպություններում և ձեռնարկություններում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները.

Գիտահետազոտական ինստիտուտներում՝

- գիտաշխատող,
- ինժեներ-մաթեմատիկոս,
- ինժեներ-ծրագրավորող,

Պետական և մասնավոր հիմնարկներում՝

- ինժեներ-մաթեմատիկոս,
- ինժեներ-ծրագրավորող,
- տեղեկատվական բազաներ ստեղծող և սպասարկող մասնագետ,
- վիճակագրական վերլուծությունների մասնագետ,
- արտադրանքի վերահսկման բաժինների ծրագրային մասնագետ
- և այլն:

Լրացուցիչ մանկավարժական դասընթացներ անցնելուց հետո ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել նաև ՀՀ ԿԳՆ ավագ, հիմնական և միջին դպրոցներում որպես ուսուցիչ, ուսումնակրթական ինժեներական լաբորատորիաներում որպես դասընթացավար:

Հնարավոր աշխատավայրերն են. ՀՀ ԿԳՆ դպրոցներ, քոլեջներ, բուհեր, գիտահետազոտական ինստիտուտներ, ՊՆ հատուկ ստորաբաժանումներ, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող բազմաբնույթ կազմակերպություններ:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը մագիստրատուրայում:

### 15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա կրթական ծրագիրն իրականացնելու համար ֆակուլտետում առկա են 9 լսարաններ, որոնցից երկուսը հազեցված են տեխնիկական միջոցներով՝ համակարգիչ և տեսասարք, երկու համակարգչային սրահներ՝ յուրաքանչյուրը հազեցած 20 համակարգիչներով և տեսասարքերով, միկրոկոնտրոլերների ծրագրավորման լաբորատորիա: Մասնաճյուղում հասանելի է ինտերնետ կապը՝ էլեկտրոնային գրադարաններից օգտվելու համար:

### 16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

- ԵՊՀ ԻԿՄ կրթական ծրագիր
- ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակ

### 17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

Մասնաճյուղում իրականացվող «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի ուսանողներն ուսումնասիրելու են նաև ժամանակակից և պահանջված ծրագրավորման տարբեր լեզուներ, համակարգեր, տեխնոլոգիաներ և տեսություններ, մասնավորապես C# և Java լեզուները, զուգահեռ ծրագրավորման MPI տեխնոլոգիան, Web-ծրագրավորում, կոմպյուտերային ցանցեր, կրիպտոգրաֆիայի մաթեմատիկական հիմունքներ, միկրոկոնտրոլլերների ծրագրավորում, տեղեկատվական անվտանգություն և այլն: Ուսումնառության ընթացքում ուսանողը կկատարի հետազոտական աշխատանք մասնագիտական մի շարք առարկաների շրջանակում: Բուհում ստացած կրթությունը թույլ կտա ծրագրի շրջանավարտներին լինել տեղեկացված համակարգչային գիտության ժամանակակից ուղղությունների և զարգացման միտումների վերաբերյալ, կողմնորոշվել ապագա կարիերայի հարցերում և լինել մրցունակ և պահանջված ազգային և տարածաշրջանային աշխատաշուկայում:

### 18. Պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող պահանջներ

#### 1. Ընդհանրական կարողություններ

#### Դասավանդման/մանկավարժական

#### *Դասավանդողը պետք է ունակ լինի.*

- ներկայացնելու դասընթացի նպատակները և խնդիրները, մեկնաբանելու և պարզաբանելու դասընթացի կրթական վերջնարդյունքները և դրանց կապն ու համադրումը համապատասխան կրթական ծրագրի վերջնարդյունքների հետ,
- կիրառելու դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ,
- կիրառելու ուսանողներին մոտիվացնող և նրանց ակտիվությունը խրախուսող մեխանիզմներ և մեթոդներ,
- սահմանելու կրթական ընդհանուր նպատակ և ջանքեր ներդնելու դրա իրականացման ուղղությամբ,
- զարգացնելու ուսանողների վերլուծական, փաստերն ու իրողությունները ընդհանրացնելու, երևույթները համակողմանիորեն գնահատելու, եզրակացություններ կատարելու և տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունները,
- կազմելու դասընթացի փաթեթ:

## Հետազոտական

### ***Դասավանդողը պետք է ունակ լինի.***

- իրականացնելու գիտահետազոտական աշխատանքներ,
- վերլուծելու մանկավարժական սեփական գործունեության արդյունավետությունը,
- կիրառելու միջառարկայական և համալիր հետազոտությունների մեթոդաբանություններ,
- ճիշտ ընտրելու և համադրելու հետազոտությունների իրականացման և կիրառվող ուսուցման մեթոդներ

## Հաղորդակցման

### ***Դասավանդողը պետք է ունակ լինի.***

- ուսանողի հետ հաստատելու միջանձնային և կառուցողական հարաբերություններ,
- արդյունավետ պլանավորելու դասընթացը և դասապրոցեսը, կառավարելու լսարանը, բոլոր ուսանողներին դարձնելու ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցներ,
- հաղորդակցվելու որևէ օտար լեզվով,
- պահպանելու մանկավարժական և մասնագիտական էթիկայի կանոնները,
- պահպանելու բարձրագույն կրթության ոլորտի իրավական նորմերը:

## SZS կիրառության

### ***Դասավանդողը պետք է ունակ լինի.***

- ուսումնական գործընթացում ազատ կիրառելու համակարգչային հիմնական ծրագրերը (MS Office փաթեթ՝ Word, Excel, Power-Point, Internet, e-mail ),
- պատրաստելու և ներկայացնելու լուսացուցադրություններ,
- օգտագործելու առցանց ուսուցման տեխնոլոգիաներ,
- կիրառելու Moodle հարթակը դասապրոցեսը իրականացնելու համար:

## **2.Մասնագիտական կարողություններ**

### ***Դասավանդողը պետք է ունակ լինի.***

- ներկայացնելու և մեկնաբանելու դասավանդման ոլորտի հիմնախնդիրները և ուսումնասիրության ժամանակակից մեթոդաբանական հիմքերը,
- սահմանելու դասավանդվող դասընթաց(ներ)ի հիմնական հասկացությունները, ուսումնասիրության հայեցակարգային մոտեցումները,
- ուսուցման գործընթացում ստեղծելու միջառարկայական կապեր,
- ձևակերպելու դասավանդվող առարկայի ոլորտում խնդիրներ, ընտրելու անհրաժեշտ ուսումնական նյութեր և ուսուցման միջոցներ,
- կիրառելու ոլորտի խնդիրների ուսումնասիրման մեթոդական առաջավոր փորձը և դրսևորելու ստեղծագործական մոտեցումներ:

## **3.Շնորհանուր պահանջներ**

### ***Գիտական գործունեություն***

- Որակավորման կամ գիտական աստիճանի առկայություն դասավանդվող դասընթացի/մոդուլի ոլորտում:
- Գիտական աստիճանի և կոչման առկայություն (ցանկալի է բակալավրատում, պարտադիր՝ մագիստրատուրայի համար):
- Հետազոտական աշխատանքների առկայություն մանկավարժության կամ դասավանդվող դասընթացի /մոդուլի ոլորտում:
- Մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովների:

### ***Գիտամանկավարժական կամ պրակտիկ աշխատանքի փորձ***

- Գիտական կամ մանկավարժական աշխատանքի փորձառություն՝ բացի «դասախոս» տարակարգի համար (նվազագույնը 3 տարի):
- Մասնակցություն որակավորման բարձրագույն դասընթացներին վերջին 5 տարիների ընթացքում:
- Մասնագիտական պրակտիկ գործունեության փորձառություն (ցանկալի է):

**«ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

**Ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.**

| <b>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն</b> |   | <b>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ</b> |  |
|--|---|--|--|
| Ա1   | Ներկայացնելու և բացատրելու ծրագրավորման ժամանակակից սկզբունքները, մեթոդները (կառուցվածքային մեթոդ, օբյեկտակողմնորոշված մեթոդ, համակարգային մեթոդ, միկրոկոնտրոլերների և սարքերի ծրագրավորման մեթոդ), արդի տեղեկատվական տեխնոլոգիաները:   | Բ1   | Լուծելու մասնագիտական ոլորտի խնդիրներ՝ օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար գաղափարները, մոդելները, սկզբունքները, դրույթները, խնդիրների լուծման եղանակները:  |
| Ա2   | Թվարկելու ծրագրավորման արդի լեզուները, դասակարգելու և ներկայացնելու դրանց առանձնահատկությունները, կիրառման ոլորտները, հիմնավորելու տարբեր խնդիրների ծրագրային իրականացման համար կոնկրետ լեզվի ընտրությունը:   | Բ2   | Օգտվելու խնդիրների մաթեմատիկական մոդելավորման և մոդելների ծրագրավորման մեթոդներից, մաթեմատիկական վերլուծական և վիճակագրական գործիքներից, էլեկտրոնային համակարգերի նախագծման և տեխնիկապես իրագործման ծրագրային և ապարատային միջոցներից, ինչպես նաև վիրտուալ հարթակների գործիքակազմից:   |
| Ա3   | Բացատրելու զուգահեռ և բաշխված ծրագրավորման, տարբեր լեզուներով աջակցվող web-ծրագրավորման, գրաֆիկական միջերեսի ծրագրավորման, տեխնիկական համակարգերի և միկրոկոնտրոլերների ծրագրավորման առանձնահատկությունները, սկզբունքները և մեթոդները, ներկայացնելու ծրագրերի օրինակներ:   | Բ3   | Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները: |
| Ա4   | Ներկայացնելու գիտական և տնտեսական տարբեր ոլորտներում մեծածավալ տվյալների մշակման և վերլուծության մեթոդները, ծրագրային համակարգերի կիրառման սկզբունքները, բացատրելու և վերլուծելու դրանց ներդրման նպատակահարմարությունը և արդյունավետությունը, բերելու ծրագրային համակարգերի կիրառման հայտնի օրինակներ:                          | Բ4   | Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:   |
| Ա5   | Ներկայացնելու և նկարագրելու ժամանակակից համակարգիչների, գերհամակարգիչների և համակարգչային ցանցերի ճարտարապետական առանձնահատկությունները, անվտանգության և պաշտպանվածության ապահովման սկզբունքները և մեթոդները, կիրառման ոլորտները և ուղղությունները, մեկնաբանելու դրանց օգտագործման հնարավորությունները ՀՀ-ում և տարածաշրջանում: | Բ5   | Նախագծելու անվտանգ և պաշտպանված հաշվողական համակարգեր և ցանցեր՝ կիրառելով համակարգչային և ցանցային ճարտարապետության առանձնահատկությունները, դրանց ապարատային և տարրային հենքի կառուցվածքը:   |
| Ա6   | Ներկայացնելու ռոբոտատեխնիկական օբյեկտների ծրագրային ապահովման սկզբունքները և դրանց վրա հիմնված ավտոմատ կառավարման համակարգերի սխեմատեխնիկական իրականացման հիմնական հասկացությունները և եղանակները:  | Բ6   | Հավաքագրելու մասնագիտական տեղեկատվություն ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ պահանջող տարբեր պարզ և բարդ խնդիրների լուծման համար՝ օգտագործելով հաղորդակցման և որոնողական ժամանակակից տարբեր համակարգեր, նորարարական մեթոդներով իրականացնելու հավաքագրված մասնագիտական տվյալների քանակական և  |

|   |  |    |  |
|---|--|----|--|
|   |  |    | որակական վերլուծություններ, կատարելու տրամաբանական եզրահանգումներ:   |
| Ա7  | Բացահայտելու, ներկայացնելու, վերլուծելու և մեկնաբանելու ծրագրային համակարգերի-ապարատային և ծրագրային լուծումների մարքետինգային բնութագրիչները և ցուցանիշները:                      | Բ7 | Նախագծելու և կառուցելու ավտոմատ կառավարման համակարգեր (ռոբոտներ), մշակելու դրանց սխեմատիկական իրականացման միջոցները և ծրագրային ապահովումը:  |
|   |  | Բ8 | Ուսումնասիրելու ծրագրային համակարգերի սպառման շուկաները, պլանավորելու, նախագծելու և կառուցելու շուկայում պահանջված ծրագրային համակարգեր, հավաքագրելու և վերլուծելու ծրագրային համակարգերի ներդրման և շահագործման ցուցանիշները: |
| <b>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</b> |  |    |  |
| Գ1  | Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:   | Գ4 | Ստանձնելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքերի իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:   |
| Գ2  | Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: | Գ5 | Մասնագիտական հանրություն կառուցելու տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ բանավոր ու գրավոր խոսք մայրենի և որևէ օտար լեզվով:  |
| Գ3  | Որոշելու իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:        | Գ6 | Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:   |

**«ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ԿԻՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ**

| Ուսումնական մոդուլի անվանումը                                  | Մոդուլի թվանիշը | Ծրագրի կրթական վերջնարդյունքները |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |   |
|--|-----------------|----------------------------------|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|---|
|  |                 | Ա1                               | Ա2 | Ա3 | Ա4 | Ա5 | Ա6 | Ա7 | Բ1 | Բ2 | Բ3 | Բ4 | Բ5 | Բ6 | Բ7 | Բ8 | Գ1 | Գ2 | Գ3 | Գ4 | Գ5 | Գ6 |   |
| Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1                                 | 0302/B05        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  | +  |   |
| Ռուսերեն-1   | 0305/B03        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  | +  |   |
| Հայոց պատմության հիմնահարեր-1                                  | 0304/B01        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  |    |   |
| Անգլերեն -1  | 0305/B02        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  | +  |   |
| Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2                                 | 0302/B12        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  | +  |   |
| Ռուսերեն-2   | 0305/B09        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  | +  |   |
| Հայոց պատմության հիմնահարեր-2                                  | 0304/B07        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  |    |   |
| Անգլերեն -2  | 0305/B08        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  | +  |   |
| Քաղ.պաշտպան. և արտակարգ իրավիճակ. բնակչ. առաջին բուժօգնություն | 0001/B11        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    | + |
| Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ                        | 0105/B04        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  |    |   |
| Փիլիսոփայության հիմունքներ                                     | 0304/B14        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  |    |   |
| Ֆիզդաստիարակություն  | 0001/B06        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    |    |    | + |
| Ֆիզդաստիարակություն  | 0001/B10        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    |    |    | + |
| Ֆիզդաստիարակություն  | 0001/B13        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    |    |    | + |
| Ֆիզդաստիարակություն  | 0001/B15        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    |    |    | + |
| Իրավունքի հիմունքներ   | 0304/B16        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  |    |   |
| Տնտեսագիտության հիմունքներ                                     | 0201/B16        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  |    |   |
| Գործարարության հիմունքներ                                      | 0201/B16        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  |    |   |
| Քաղաքագիտության հիմունքներ                                     | 0304/B16        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  |    |   |
| Մշակութաբանության հիմունքներ                                   | 0202/B16        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  |    |   |
| Կրոնագիտության հիմունքներ                                      | 0304/B16        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  |    |   |
| Բարոյագիտության հիմունքներ                                     | 0303/B16        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  |    |   |
| Սոցիոլոգիայի հիմունքներ  | 0303/B16        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  |    |   |
| Հոգեբանության հիմունքներ                                       | 0303/B16        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    | +  |    |   |
| Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր                          | 0105/B16        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    |    |    |    |   |
|  |                 |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |   |
| Մաթեմատիկական անալիզ և գծային հանրահաշվի տարրեր -1             | 0105/B17        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  |    | + |
| Դիսկրետ մաթեմատիկա-1   | 0104/B18        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  | +  | + |
| ԷՀՄ և ծրագրավորում-1   | 0104/B19        | +                                | +  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  | +  | +  |    |    |   |
| Դիսկրետ մաթեմատիկա-2   | 0104/B22        |                                  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  | +  | + |
| ԷՀՄ և ծրագրավորում-2   | 0104/B21        | +                                | +  |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    | +  | +  | +  |    |    |   |

|  |          |   |   |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   |   |
|--|----------|---|---|---|--|---|---|--|--|---|--|---|---|--|--|--|--|--|---|--|--|---|---|---|
| Մաթեմատիկական անալիզ և գծային հանրահաշվի տարրեր-2                              | 0105/B20 |   |   |   |  |   |   |  |  | + |  | + | + |  |  |  |  |  | + |  |  | + |   |   |
| Մասնագիտական անգլերեն  | 0305/B25 |   |   |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  | + |  |  |   | + |   |
| Հետազոտության պլանավորում և մեթոդներ   | 0104/B24 | + |   |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  | + |   | + |
| Մաթեմատիկական անալիզ և գծային հանրահաշվի տարրեր-3                              | 0105/B23 |   |   |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   | + |   |
| Ավտոմատներ, հաշվարկելիություն, լուծելիություն                                  | 0104/B26 | + |   |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   | + |   |
| Կոմպլեքս անալիզ  | 0105/B28 |   |   |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
| Համակարգիչների տարրային հենքի ֆիզիկա և էլեկտրոնիկա                             | 0105/B29 |   |   |   |  | + | + |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   | + | + |
| Թվային անվտանգության հիմունքներ, թվային անվտանգության սարքածրագրային միջոցներ  | 0104/B30 | + | + |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
| ՀԲ* ԷՀՄ ճարտարապետություն և օպերացիոն համակարգեր                               | 0104/B27 |   |   |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   | + | + |
| Դիֆերենցիալ հավասարումներ  | 0105/B31 |   |   |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
| Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն                | 0105/B33 |   |   |   |  |   | + |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
| ՀԲ* Ֆունկցիոնալ անալիզ   | 0105/B32 |   |   |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
| Համակարգչային ցանցերի և ցանցային անվտանգության ներածություն                    | 0104/B34 | + |   |   |  | + |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
| Ծրագրային լուծումների որակի ապահովման հիմունքներ                               | 0104/B35 | + | + |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
| ՀԲ* Մաթեմատիկական մոդելավորում և թվային մեթոդներ                               | 0104/B36 |   |   |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
| Տվյալների հենքեր և տվյալագիտության հիմունքներ                                  | 0104/B38 | + |   |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
| Կոմբինատոր ալգորիթմներ և վերլուծություն  | 0104/B39 |   |   |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
| Զուգահեռ ծրագրավորում  | 0104/B37 | + | + | + |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
| Կրիպտոգրաֆիայի մաթեմատիկական մեթոդներ  | 0104/B40 | + | + | + |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
| Մաթեմատիկական կիրառությունների տարրեր  | 0104/B41 |   |   |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
|  |          |   |   |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   |   |
| GUI ծրագրավորում   | 0104/B42 | + | + | + |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
| ՀԲ* Տվյալների կառուցվածքներ  | 0104/B43 | + | + |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
| ՀԲ* Web ծրագրավորում (Java, C#, PHP, Python ծրագրավորման լեզուների բազայի վրա) | 0104/B44 | + | + | + |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
| Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ   | 0105/B45 |   |   |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |
| Մաթեմատիկական տրամաբանություն  | 0104/B46 |   |   |   |  |   |   |  |  |   |  |   |   |  |  |  |  |  |   |  |  |   |   | + |

|   |          |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |
|---|----------|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
|   |          |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |
| Էլեկտրատեխնիկա և էլեկտրոնային սարքեր  | 0104/B47 |   |   |   |   |   | + |   |   |   |   | + | + |   | + |   | + |   | + | + |   |
| ՀԲ* Էլեկտրոնիկա և սխեմատեխնիկա  | 0104/B48 |   |   |   |   |   | + | + |   |   |   | + |   |   | + |   | + |   | + | + |   |
| ՀԲ* Կառավարվող համակարգերի մշակում և ծրագրային ապահովում                                      | 0104/B49 |   |   |   |   |   |   |   |   |   |   |   | + |   | + | + |   | + |   | + | + |
| Տեխնիկական համակարգերի ավտոմատ կառավարման հիմունքներ  | 0104/B50 |   |   | + |   |   | + |   |   |   | + |   |   |   | + |   | + |   | + | + |   |
| Ճանաչման մեթոդները արհեստական բանականությամբ կառավարվող համակարգերում                         | 0104/B51 |   |   |   |   |   |   |   |   |   |   |   | + |   | + | + |   | + |   | + | + |
|   |          |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |
| Դյուրակիր և համացանցային համակարգերի անվտանգություն   | 0104/B52 | + | + |   |   |   | + |   |   |   |   | + | + |   |   |   |   |   | + |   |   |
| Ցանցային անվտանգության հիմունքներ   | 0104/B53 | + | + |   |   |   | + |   |   |   |   | + | + |   |   |   |   |   | + |   |   |
| Թվային անվտանգության ստուգում, խոցելությունների հայտնաբերում                                  | 0104/B54 | + | + |   |   |   | + |   |   |   |   | + | + |   |   |   |   |   | + |   |   |
| ՀԲ* Անվտանգ ծրագրային ապահովում և անվտանգության ճարտարագիտություն                             | 0104/B55 | + | + |   |   |   | + |   |   |   |   | + | + | + |   |   |   |   | + |   |   |
| Թվային անվտանգության առաջատար լուծումներ  | 0104/B56 | + | + |   |   |   | + |   |   |   |   | + | + | + |   |   |   |   | + |   |   |
| ՀԲ* Թվային անվտանգության համակարգերի կառավարում և անվտանգության ծառայությունների կազմակերպում | 0104/B57 | + | + |   |   |   | + |   |   |   |   | + | + | + |   |   |   |   | + |   |   |
|   |          |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |
| Մասնագիտական պրակտիկա-1   | 0104/B58 |   |   |   | + | + |   | + | + | + | + | + | + | + |   | + | + | + | + | + |   |
| Մասնագիտական պրակտիկա-2   | 0104/B60 |   |   |   | + | + |   | + | + | + | + | + | + | + |   | + | + | + | + | + |   |
| Ավարտական աշխատանք  | 0104/B59 | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + | + |

**«ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ**

| Ուսումնական մոդուլի անվանումը                           | Կրեդիտներ | Ուսումնական բեռնվածությունը, ժամ |            |            |          |            | Կիսամյակներ |           |           |           |          |          |          |          |          |          |          |          |          |          |          |          | Գնահատման ձևը |
|---|-----------|----------------------------------|------------|------------|----------|------------|-------------|-----------|-----------|-----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|---------------|
|   |           |                                  |            |            |          |            | 1           |           | 2         |           | 3        |          | 4        |          | 5        |          | 6        |          | 7        |          | 8        |          |               |
|   |           | Ըրդ.                             | Դվմ.       | Գրծ./սեմ.  | Լաբ.     | Ինք.       | Կրդ.        | Լ.ս.ժ     | Կրդ.      | Լ.ս.ժ     | Կրդ.     | Լ.ս.ժ    | Կրդ.     | Լ.ս.ժ    | Կրդ.     | Լ.ս.ժ    | Կրդ.     | Լ.ս.ժ    | Կրդ.     | Լ.ս.ժ    | Կրդ.     | Լ.ս.ժ    |               |
| <b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>                     | <b>38</b> | <b>1140</b>                      | <b>180</b> | <b>390</b> | <b>0</b> | <b>570</b> | <b>14</b>   | <b>16</b> | <b>16</b> | <b>18</b> | <b>4</b> | <b>6</b> | <b>4</b> | <b>6</b> | <b>0</b> |               |
| <b>Պարտադիր դասընթացներ</b>                             | <b>34</b> | <b>1020</b>                      | <b>120</b> | <b>390</b> | <b>0</b> | <b>510</b> | <b>14</b>   | <b>16</b> | <b>16</b> | <b>18</b> | <b>0</b> | <b>2</b> | <b>4</b> | <b>6</b> | <b>0</b> |               |
| Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1                          | 2         | 60                               | 0          | 30         | 0        | 30         | 2           | 2         |           |           |          |          |          |          |          |          |          |          |          |          |          |          | Ստ.           |
| Ռուսերեն-1  | 4         | 120                              | 0          | 60         | 0        | 60         | 4           | 4         |           |           |          |          |          |          |          |          |          |          |          |          |          |          | Ստ.           |
| Հայոց պատմության հիմնահարցեր-1                          | 2         | 60                               | 15         | 15         | 0        | 30         | 2           | 2         |           |           |          |          |          |          |          |          |          |          |          |          |          |          | Ստ.           |
| Անգլերեն-1  | 4         | 120                              | 0          | 60         | 0        | 60         | 4           | 4         |           |           |          |          |          |          |          |          |          |          |          |          |          |          | Ստ.           |
| Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ                 | 2         | 60                               | 30         | 0          | 0        | 30         | 2           | 2         |           |           |          |          |          |          |          |          |          |          |          |          |          |          | Ստ.           |
| Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2                          | 2         | 60                               | 0          | 30         | 0        | 30         |             |           | 2         | 2         |          |          |          |          |          |          |          |          |          |          |          |          | Ստ.           |
| Ռուսերեն-2  | 4         | 120                              | 0          | 60         | 0        | 60         |             |           | 4         | 4         |          |          |          |          |          |          |          |          |          |          |          |          | Ստ.           |
| Հայոց պատմության հիմնահարցեր-2                          | 2         | 60                               | 15         | 15         | 0        | 30         |             |           | 2         | 2         |          |          |          |          |          |          |          |          |          |          |          |          | Ստ.           |
| Անգլերեն-2  | 4         | 120                              | 0          | 60         | 0        | 60         |             |           | 4         | 4         |          |          |          |          |          |          |          |          |          |          |          |          | Ստ.           |
| Քաղ. պաշտպան. և արտակարգ իրավիճ. բնակչ. առաջին բուժօգն. | 4         | 120                              | 30         | 30         | 0        | 60         |             |           | 4         | 4         |          |          |          |          |          |          |          |          |          |          |          |          | Ստ.           |
| Փիլիսոփայության հիմունքներ                              | 4         | 120                              | 30         | 30         | 0        | 60         |             |           |           |           |          |          | 4        | 4        |          |          |          |          |          |          |          |          | Ստ.           |
| Ֆիզդաստիարակություն                                     | 0         | 0                                |            |            |          | 0          |             | 2         |           | 2         |          | 2        |          | 2        |          |          |          |          |          |          |          |          | Ստ.           |
| <b>Կամընտրական դասընթացներ</b>                          | <b>4</b>  | <b>120</b>                       | <b>60</b>  | <b>0</b>   | <b>0</b> | <b>60</b>  |             |           |           |           | <b>4</b> | <b>4</b> |          |          |          |          |          |          |          |          |          |          | ստ.           |
| Տնտեսագիտության հիմունքներ                              | 2         | 60                               | 30         | 0          | 0        | 30         |             |           |           |           | 2        | 2        |          |          |          |          |          |          |          |          |          |          | ստ            |
| Գործարարության հիմունքներ                               | 2         | 60                               | 30         | 0          | 0        | 30         |             |           |           |           | 2        | 2        |          |          |          |          |          |          |          |          |          |          |               |
| Քաղաքագիտության հիմունքներ                              | 2         | 60                               | 30         | 0          | 0        | 30         |             |           |           |           | 2        | 2        |          |          |          |          |          |          |          |          |          |          |               |
| Մշակութաբանության հիմունքներ                            | 2         | 60                               | 30         | 0          | 0        | 30         |             |           |           |           | 2        | 2        |          |          |          |          |          |          |          |          |          |          |               |
| Կրոնագիտության հիմունքներ                               | 2         | 60                               | 30         | 0          | 0        | 30         |             |           |           |           | 2        | 2        |          |          |          |          |          |          |          |          |          |          |               |
| Բարոյագիտության հիմունքներ                              | 2         | 60                               | 30         | 0          | 0        | 30         |             |           |           |           | 2        | 2        |          |          |          |          |          |          |          |          |          |          |               |
| Իրավունքի հիմունքներ                                    | 2         | 60                               | 30         | 0          | 0        | 30         |             |           |           |           | 2        | 2        |          |          |          |          |          |          |          |          |          |          |               |

|   |            |             |             |             |            |             |           |           |           |           |           |           |           |           |           |           |           |           |           |           |          |            |
|---|------------|-------------|-------------|-------------|------------|-------------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|----------|------------|
| Սոցիոլոգիայի հիմունքներ   | 2          | 60          | 30          | 0           | 0          | 30          |           |           |           |           | 2         | 2         |           |           |           |           |           |           |           |           |          |            |
| Հոգեբանության հիմունքներ  | 2          | 60          | 30          | 0           | 0          | 30          |           |           |           |           | 2         | 2         |           |           |           |           |           |           |           |           |          |            |
| Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր   | 2          | 60          | 30          | 0           | 0          | 30          |           |           |           |           | 2         | 2         |           |           |           |           |           |           |           |           |          |            |
| <b>ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ-1</b>  | <b>174</b> | <b>5220</b> | <b>1230</b> | <b>1155</b> | <b>45</b>  | <b>2790</b> | <b>17</b> | <b>16</b> | <b>15</b> | <b>14</b> | <b>25</b> | <b>24</b> | <b>29</b> | <b>28</b> | <b>30</b> | <b>26</b> | <b>28</b> | <b>26</b> | <b>30</b> | <b>28</b> | <b>0</b> | <b>0</b>   |
| <b>ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ-2</b>  | <b>174</b> | <b>5220</b> | <b>1230</b> | <b>1080</b> | <b>120</b> | <b>2790</b> | <b>17</b> | <b>16</b> | <b>15</b> | <b>14</b> | <b>25</b> | <b>24</b> | <b>29</b> | <b>28</b> | <b>30</b> | <b>26</b> | <b>28</b> | <b>26</b> | <b>30</b> | <b>28</b> | <b>0</b> | <b>0</b>   |
| <b>ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ-3</b>  | <b>174</b> | <b>5220</b> | <b>1230</b> | <b>1065</b> | <b>135</b> | <b>2790</b> | <b>17</b> | <b>16</b> | <b>15</b> | <b>14</b> | <b>25</b> | <b>24</b> | <b>29</b> | <b>28</b> | <b>30</b> | <b>26</b> | <b>28</b> | <b>26</b> | <b>30</b> | <b>28</b> | <b>0</b> | <b>0</b>   |
| <b>Պարտադիր դասընթացներ</b>   | <b>150</b> | <b>4500</b> | <b>1080</b> | <b>945</b>  | <b>45</b>  | <b>2430</b> | <b>17</b> | <b>16</b> | <b>15</b> | <b>14</b> | <b>25</b> | <b>24</b> | <b>25</b> | <b>24</b> | <b>25</b> | <b>21</b> | <b>20</b> | <b>18</b> | <b>23</b> | <b>21</b> | <b>0</b> | <b>0</b>   |
| Մաթեմատիկական անալիզ և գծային հանրահաշվի տարրեր -1                            | 9          | 270         | 75          | 45          | 0          | 150         | 9         | 8         |           |           |           |           |           |           |           |           |           |           |           |           |          | Եզ.գն.     |
| Դիսկրետ մաթեմատիկա-1  | 4          | 120         | 30          | 30          | 0          | 60          | 4         | 4         |           |           |           |           |           |           |           |           |           |           |           |           |          | Առ.եզ.գն.  |
| ԷՀՄ և ծրագրավորում-1  | 4          | 120         | 15          | 45          | 0          | 60          | 4         | 4         |           |           |           |           |           |           |           |           |           |           |           |           |          | Եզ.գն.     |
| Մաթեմատիկական անալիզ և գծային հանրահաշվի տարրեր-2                             | 6          | 180         | 45          | 30          | 0          | 105         |           |           | 6         | 5         |           |           |           |           |           |           |           |           |           |           |          | Եզ.գն.     |
| Դիսկրետ մաթեմատիկա-2  | 4          | 120         | 30          | 30          | 0          | 60          |           |           | 4         | 4         |           |           |           |           |           |           |           |           |           |           |          | Եզ.գն.     |
| ԷՀՄ և ծրագրավորում-2  | 5          | 150         | 15          | 60          | 0          | 75          |           |           | 5         | 5         |           |           |           |           |           |           |           |           |           |           |          | Եզ.գն.     |
| Մասնագիտական անգլերեն   | 4          | 120         | 0           | 60          | 0          | 60          |           |           |           |           | 4         | 4         |           |           |           |           |           |           |           |           |          | Առ.ընթ.գն. |
| Հետազոտության պլանավորում և մեթոդներ  | 2          | 60          | 30          | 0           | 0          | 30          |           |           |           |           | 2         | 2         |           |           |           |           |           |           |           |           |          | Առ.ընթ.գն. |
| Մաթեմատիկական անալիզ և գծային հանրահաշվի տարրեր-3                             | 9          | 270         | 75          | 60          | 0          | 135         |           |           |           |           | 9         | 9         |           |           |           |           |           |           |           |           |          | Եզ.գն.     |
| Ավտոմատներ, հաշվարկելիություն, լուծելիություն                                 | 10         | 300         | 60          | 75          | 0          | 165         |           |           |           |           | 10        | 9         |           |           |           |           |           |           |           |           |          | Եզ.գն.     |
| Կոմպլեքս անալիզ   | 5          | 150         | 45          | 30          | 0          | 75          |           |           |           |           |           |           | 5         | 5         |           |           |           |           |           |           |          | Եզ.գն.     |
| Համակարգիչների տարրային հենքի ֆիզիկա և էլեկտրոնիկա                            | 8          | 240         | 45          | 45          | 30         | 120         |           |           |           |           |           |           | 8         | 8         |           |           |           |           |           |           |          | Եզ.գն.     |
| Թվային անվտանգության հիմունքներ, թվային անվտանգության սարքածրագրային միջոցներ | 4          | 120         | 30          | 15          | 0          | 75          |           |           |           |           |           |           | 4         | 3         |           |           |           |           |           |           |          | Առ.եզ.գն.  |
| <b>ՀԲ* ԷՀՄ ճարտարապետություն և օպերացիոն համակարգեր</b>                       | <b>8</b>   | <b>240</b>  | 60          | 60          | 0          | 120         |           |           |           |           |           |           | 8         | 8         |           |           |           |           |           |           |          | Եզ.գն.     |

|   |           |            |            |            |          |            |          |          |          |          |          |          |          |          |          |          |          |          |          |           |           |          |             |             |
|---|-----------|------------|------------|------------|----------|------------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|-----------|-----------|----------|-------------|-------------|
| <p>10. <b>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառնությունն ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p> <p><b>Գ5.</b> Մասնագիտական հանրություն կառուցելու տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ բանավոր ու գրավոր խոսք մայրենի և որևէ օտար լեզվով:</p>   |               |                  |
| <p>11. <b>Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>հաղորդակցական մեթոդ</li> <li>մտազրոհ</li> <li>ուսանողական պորտֆոլիո</li> <li>խմբային աշխատանք</li> <li>գրավոր և բանավոր թարգմանություն</li> <li>աշխատանք տեղեկագրով</li> <li>ռեֆերատ</li> <li>ինքնուրույն աշխատանք:</li> </ol>   |               |                  |
| <p>12. <b>Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Ստուգարքը համարվում է ստուգված ուսանողի՝ մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ/ և վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում.</p> <ul style="list-style-type: none"> <li>գրավոր և բանավոր թարգմանություններ,</li> <li>ռեֆերատ,</li> <li>պրեզենտացիա,</li> <li>խմբային աշխատանք,</li> <li>ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ, CV, դիմում, մոտիվացիոն նամակ):</li> </ul>   |               |                  |
| <p>13. <b>Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Բաժին 1.</b> Պաշտոնական գրագրություն: Ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ, դիմում: <b>Բաժին 2.</b> Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Հայոց պատմությունը</p>   |               |                  |

|  |
|--|
| <p>համաշխարհային համատեքստում: Թարգմանություններ հայերենից անգլերեն:</p> <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Mkhitaryan, Ye., (2004) Basic English for University Students, YSU Press, Yerevan.</li> <li>2. Cincotta, Howard (Ed.). (1994). An Outline of American History. United States Information Agency.</li> <li>3. Kirn, Elaine. (1989). About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division.</li> <li>4. Myers, Sondra (Ed.). (1997). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College.</li> <li>5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, &amp; Grognet, Allene Guss. (1995). By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc.</li> </ol> |
|--|

|                         |  |                         |
|-------------------------|--|-------------------------|
| <b>1.0105/ B04</b>      | <b>2.Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ</b> | <b>3. 2 ECTS կրեդիտ</b> |
| <b>4.2 Ժամ/շաբ.</b>     | <b>5.30/0/0</b>                                  |                         |
| <b>6. 1-ին կիսամյակ</b> | <b>7.Մտուցաբք</b>                                |                         |

**8.Դասընթացի նպատակն է՝** ուսումնասիրել կենսոլորտի կառուցվածքի տեսական հիմնահարցերը և «մարդ-կենսոլորտ» համակարգում նրանց փոխազդեցությունը, ինչպես նաև պատրաստել որակյալ մասնագետներ, որոնք կարող են գնահատել շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը, որպես հասարակության գործունեության արդյունք և նախագուշացնելու կամ կանխարգելելու անթրոպոգեն գործունեության ոչ ցանկալի հետևանքները: Նպաստել հասկանալու էկոլոգիական հիմնախնդիրների էությունը և զարգացնել այդ խնդիրները լուծելու ունակությունը: ույն ընտրության:

**Դասընթացի խնդիրները.**

1. Ուսանողների տալ հիմնարար գիտելիքներ՝ էկոլոգիայի հիմնական հասկացությունների և օրենքների, էկոլոգիական համակարգերի և գործընթացների, շրջակա միջավայրի էկոլոգիական հնարավորությունների, բնական և տեխնոգեն միջավայրերի, ժամանակակից զարգացման տենդենցների, էկոլոգիական մշակույթի, որպես գործոնի ձևավորման, էկոլոգիական ճգնաժամերի, էկոլոգիայի բնագավառում միջազգային իրավական նորմերի, Հայաստանի Հանրապետությունում գործող էկոլոգիական օրենսդրության մասին:
2. Ուսանողների մոտ զարգացնել հմտություններ բնագիտությունից, էկոլոգիայից, բնապահպանությունից՝ ձևավորելով դիտարկելու, ստեղծագործելու, հետազոտելու ունակությունները, տրամաբանական և գիտական լեզվամտածողությունները, եզրակացություն անելու կարողությունները:
3. Դաստիարակել քաղաքացիական դիրքորոշում և պատասխանատվություն՝ մարդկության և բնական միջավայրի նկատմամբ:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. Սահմանելու էկոլոգիայի հիմնական հասկացությունները, էկոլոգիական հիմնական և կարևոր օրենքները, սկզբունքները, օրինաչափությունները և կանոնները:
2. Նշելու շրջակա միջավայրի զարգացման կոնցեպցիաները և թվարկելու մթնոլորտի, ջրոլորտի և հողոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցություն ունեցող աղտոտող նյութերը և ներկայացնելու նրանց վերլուծության մեթոդները:
3. Բացատրելու, թե ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ բնակչության վրա շրջակա միջավայրի աղտոտման հետևանքները:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. էկոլոգիական գնահատական տալու շրջակա միջավայրի հիմնական գործոններին:
2. Նախագուշակական միջոցառումներ ներկայացնելու՝ գերծ պահելու շրջակա միջավայրը էկոլոգիական աղետներից:
3. Անցկացնելու մոնիտորինգ և գնահատելու տարածաշրջանի էկոլոգիական իրավիճակը, համապատասխան եզրակացություն տալ այն նպաստող գործոնների մասին, որոնք կբարելավեն տարածաշրջանի էկոլոգիան:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. Ցուցաբերելու ինքնուրույն ուսումնասիրելու ունակություն:
2. Հետազոտություններ անելու, ստացած տեղեկությունը արհեստավարժ օգտագործելու խնդիրների լուծման նպատակով:
3. Կիրառելու կանխատեսման մեթոդը՝ որոշելու համար, թե այս կամ այն գործոնն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ տվյալ էկոհամակարգի վրա:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ2.** Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ,

|   |  |  |
|---|--|--|
| <p>աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p>  |  |  |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <p>1. Պասիվ դասախոսություն</p> <p>2. Ակտիվ դասախոսություն</p> <p>✓ <i>հարց ու պատասխան</i></p> <p>✓ <i>զրույց</i></p> <p>3. Ինտերակտիվ դասախոսություն</p> <p>✓ <i>«Power Point» համակարգչային ծրագրով դրվագների ցուցադրում</i></p> <p>✓ <i>հարց ու պատասխան</i></p> <p>✓ <i>բանավեճ</i></p> <p>✓ <i>զրույց</i></p>   |  |  |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>1. Բանավոր քննում ըստ նախապես ներկայացված հարցաշարի կամ դասախոսի կողմից առաջադրված թեմայով ռեֆերատի գեկուցում:</p> <p>2. Այն ուստնողները, որոնք ամբողջական դասընթացի մաս կազմող 5 և ավելի թեմաներից կամ ինքնուրույն աշխատանքների թեմաներից գնահատվել են «ստուգված», ապա ստանում են «Ստուգված»:</p>   |  |  |
| <p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Էկոլոգիայի համառոտ պատմությունը: Էկոլոգիայի կառուցվածքը, առարկան և օբյեկտը: Լիբիխի, մինիմումի, Վիյամի գործունեության անկախության և Շելֆորդի տոլերանտության օրենքները: <b>Թեմա 2.</b> Էկոհամակարգի գործունեության սկզբունքները: Էկոհամակարգի կառուցվածքը: Պրոդուցենտներ, կոնսումենտներ, ռեդուցենտներ /ավտոտրոֆներ, հետերոտրոֆներ/: <b>Թեմա 3.</b> Օրգանիզմների գոյության միջավայրը և պայմանները: Կենսական, ոչ կենսական, մարդածին, սահմանափակող գործոններ: Օրգանիզմների հարմարվելը միջավայրի պայմաններին: <b>Թեմա 4.</b> Էներգիայի և նյութերի հոսքը Էկոհամակարգում: Էկոհամակարգերի էներգետիկական դասակարգումը: Էներգիայի և նյութերի փոխանցումը Էկոհամակարգերում, էներգիայի կորուստները սննդային շղթաներում: Ազոտի, ֆոսֆորի, ծծմբի, ածխածնի շրջանառությունը: <b>Թեմա 5.</b> Մարդու առողջության էկոլոգիական ասպեկտները: Միջավայրի քիմիական, կենսաբանական աղտոտումը, միջավայրի աղտոտումը աղմուկով, սննդամթերքների աղտոտումը: Գյուղատնտեսական և ուրբանիստական համակարգեր: <b>Թեմա 6.</b> Անսպառ և սպառվող պաշարները: Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա: Արդյունաբերության առաջընթացը և բնապահպանության հիմնախնդիրները: Արդյունաբերության էկոլոգիացման սկզբունքները: <b>Թեմա 7.</b> Քարոլորտի կառուցվածքը: Մթնոլորտի կառուցվածքը, նշանակությունը: Ջուրը երկրի վրա և նրա հատկությունները: Կենսոլորտի կառուցվածքը: Հողը, նրա կառուցվածքը և նշանակությունը բնության մեջ: <b>Թեմա 8.</b> Պոպուլյացիայի բնութագիրը, ծնելիություն և մահացություն, պոպուլյացիայի սեռային կազմը, պոպուլյացիաների միջև գոյություն ունեցող փոխազդեցության ձևերը, գիշատիչ-գոհ փոխհարաբերությունը: <b>Թեմա 9.</b> Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրները և դրա էկոլոգիական հետևանքները: Ջրոլորտի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Քարոլորտի և բնահողի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Երկրի կլիմայի փոփոխության և անսպասարկման հիմնախնդիրները:</p> |  |  |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <p>1. Գրիգորյան Կ., Եսայան Ա., Ժամհարյան Հ., Խոյեցյան Ա., Մովսեսյան Հ., Փիրումյան Գ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, 2010:</p> <p>2. Գրիգորյան Ա., Աղայան Ա., ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ներկա վիճակը, Երևան, 2008:</p> <p>3. Մելքումյան Լ., Գալստյան Մ., Բնապահպանության հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2010:</p> <p>4. Շահինյան Ս., Թամրազյան Ն., Էկոլոգիա, Երևան, 2002:</p> <p>5. Вало́ва В.Д. Основы экологии: Учебное пособие.-5-е изд., Москва, 2005.</p>   |  |  |

|  |  |                 |
|--|--|-----------------|
| 1.0001/B11   | 2. Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն | 3.4 ECTS կրեդիտ |
| 4. 4 ժամ/շաբ.  | 5.30/30/0  |                 |
| 6. 2-րդ կիսամյակ   | 7.Ստուգարք   |                 |
| 8.Դասընթացի նպատակն է սովորողների մոտ ձևավորել ԱԻ-ների մասին պատկերացում, ԱԻ-ներում գործելու հմտություններ, փրկարարական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ հմտություններ և |  |                 |

|   |
|---|
| <p>տարաբնույթ պատահարների ժամանակ հնարավոր վնասվածքների և այլ ախտահարումների դեպքում առաջին բուժօգնության ցուցաբերման անհրաժեշտ կարողություններ:</p> <p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b><br/> <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնելու տարաբնույթ ԱԻ-ների հետևանքով ստեղծված իրավիճակները և դրան դիմակայելու ուղիները:</li> <li>2. Ներկայացնելու տեղեկատվություն ԱԻ-ում և պատերազմի ժամանակ պետության կողմից բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների մասին:</li> <li>3. Մեկնաբանելու ՀՀ-ում հավանական ԱԻ-ներից բխող ռիսկերի գնահատման մեթոդները:</li> <li>4. Ներկայացնելու համաճարակային իրավիճակներում վարակի տարածման հնարավոր ուղիներն ու բացատրելու դրանցից պաշտպանության ձևերը:</li> <li>5. Ներկայացնելու առաջին բուժօգնություն ցուցաբերելու հիմնահարցերը:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Գնահատելու տուժածի վիճակը (առաջնային և երկրորդային զննում), վնասվածքի տեսակն ու ծանրությունը և ցույց տալ առաջին բուժօգնություն:</li> <li>2. Դրսևորելու նախընտրելի վարքագիծ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում:</li> <li>3. Ցուցաբերելու առաջին բուժօգնություն տարաբնույթ վնասվածքների և ախտահարումների դեպքերում:</li> <li>4. Օգտագործելու ձեռք բերված կարողությունները ԱԻ և պատերազմի ժամանակ պետության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքում:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները գործնականում:</li> <li>2. Աշխատելու թիմում և լուծելու բարդ խնդիրներ:</li> <li>3. Վերլուծելու իրավիճակը և կատարելու անհրաժեշտ գործողություններ իր և շրջապատի համար:</li> </ol> |
| <p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքը.</b><br/> <b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:<br/> <b>Գ6.</b> Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:</p>   |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. դասախոսություն</li> <li>2. սեմինար</li> <li>3. հարցադրումներ և քննարկումներ,</li> <li>4. լաբորատոր աշխատանքներ,</li> <li>5. տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր.</li> </ol>   |
| <p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշները</b><br/> Դասընթացն ավարտվում է <b>ստուգաբքով</b>: Ստուգաբքն անցկացվում է բանավոր հարցման միջոցով: Հարցերի 50%-ին պատասխանելու դեպքում ստուգաբքը համարվում է հանձնված:</p>  |
| <p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b><br/> <b>Բաժին 1. Արտակարգ իրավիճակներ ու պատահարներ:</b><br/> <b>Թեմա 1.</b> Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: <b>Թեմա 2</b> Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները:<br/> <b>Բաժին 2. Քաղաքացիական պաշտպանություն:</b><br/> <b>Թեմա 3</b> Բնակչության գործողությունները ահաբեկո-թյունների և նրանց սպառնալիքի ժամանակ: <b>Թեմա 4</b> Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: <b>Թեմա 5</b> Բնակչության պաշտպանության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: <b>Թեմա 6</b> Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: <b>Թեմա 7.</b> Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը:<br/> <b>Բաժին 3. ԱԻ-ում բնակչության առաջին բուժօգնություն:</b><br/> <b>Թեմա 8</b> Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: <b>Թեմա 9.</b> Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: <b>Թեմա 10.</b> Սուր հիվանդություններ և թունավորումներ: <b>Թեմա 11.</b> Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: <b>Թեմա 12.</b> Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:</p>   |

|   |
|---|
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Մարկարյան Ռ., Ջանջուղազյան Ն., Օհանջանյան Ս., Հարությունյան Ա., Հարությունյան Վ., Բաղդասարյան Լ., Հասարթյան Ռ., Վարդանյան Ջ., Քաղպաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր, Եր., 2006:</li> <li>2. Հեղինակների կոլլեկտիվ, Մինչքոշկական օգնությունը բնակչությանը արտակարգ իրավիճակներում, ուսումնական ձեռնարկ, Եր., 2007:</li> <li>3. Մանասյան Կ., Սիրտ-թոքային վերակենդանացման մինչքոշկական մեթոդների ուսուցումը (ուսումնամեթոդական աշխատանք), Եր., 2007:</li> <li>4. Աղայան Ս., Փոխադրական անշարժացում, ուսումնամեթոդական աշխատանք, Եր., 2011:</li> <li>5. Մանուկյան Ս., Ճաղարյան Գ., Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր, ուսումնական ձեռնարկ, Եր., 2017:</li> </ol> |
|---|

|   |                               |                  |
|---|-------------------------------|------------------|
| 1. 0304/B14   | 2. Փիլիսոփայության հիմունքներ | 3. 4 ECTS կրեդիտ |
| 4. 4 ժամ/շաբ.   | 5. 30/0/30                    |                  |
| 6. 4-րդ կիսամյակ  | 7. Ստուգաք                    |                  |
| <p><b>8. Դասընթացի նպատակն է</b> ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված և լավ մասնագետի համար:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Բացահայտել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները:</li> <li>2. Բացատրել կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները:</li> <li>3. Հիմնարար գիտությունների տվյալների փիլիսոփայական մեկնաբանությունների միջոցով աջակցել ուսանողի համակարգված աշխարհայացքի, քաղաքակրթական զարգացումների, արդի միտումներին և այդ համատեքստում ազգային մրցունակ համակարգի մասին պատկերացումների ձևավորմանը:</li> </ol>   |                               |                  |
| <p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Սահմանելու կեցության համընդհանուր օրենքները, կատեգորիաները, հիմնական ձևերն ու առանձնահատկությունները:</li> <li>2. Բացահայտելու ճանաչողության, գիտության էության առանձնահատկությունները:</li> <li>3. Ներկայացնելու աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի փիլիսոփայական հայեցակարգի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները, ճշմարտության և մոլորության, գիտելիքների և հավատի, ռացիոնալ և իռացիոնալ սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Տարբերելու գիտականը ոչ գիտականից, ճշմարիտը կեղծից, էականը ոչ էականից:</li> <li>2. Վերլուծելու հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացները և դրանց պատճառահետևանքային կապերը:</li> <li>3. Կողմնորոշվելու մարդ-մարդ և մարդ-բնություն փոխհարաբերություններում:</li> </ol> <p><b>գ. քննհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Տեղին և ժամանակին գործածելու փիլիսոփայական մտածողության կոնցեպտուալ ապարատը:</li> </ol> |                               |                  |
| <p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p>  |                               |                  |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. դասախոսություն</li> <li>2. սեմինար</li> <li>3. քննարկում</li> <li>4. զեկուցում</li> </ol>  |                               |                  |

|   |
|---|
| 5. ռեֆերատ:   |
| <b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b><br><i>Ստուգարք</i>   |
| <b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b><br><b>Թեմա 1.</b> Փիլիսոփայության առարկան: <b>Թեմա 2.</b> Կեցություն և մատերիա: <b>Թեմա 3.</b> Դիալեկտիկա: <b>Թեմա 4.</b> Բնություն: <b>Թեմա 5.</b> Մարդ և պրակտիկա: <b>Թեմա 6.</b> Գիտակցություն և ճանաչողություն: <b>Թեմա 7.</b> Գիտություն: <b>Թեմա 8.</b> Հասարակություն:   |
| <b>14. Հիմնական գրականության ցանկ.</b><br>1. Դավիթ Անհաղթ, Երկեր, Եր., 1980:<br>2. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 1, Եր., 1987:<br>3. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 2, Եր., 1987:<br>4. Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայության պատմություն, Եր., 1980:<br>5. Կյուրեղյան Է., Փիլիսոփայություն, Եր., 2004:<br>6. Փիլիսոփայության բառարան, Եր., 1975: |

|                                 |                              |                   |
|---------------------------------|------------------------------|-------------------|
| <b>1.0001/B05, B10</b>          | <b>2.Տիզդաստիարակություն</b> | <b>3.0 կրեդիտ</b> |
| <b>4.2 ժամ/շաբ.</b>             | <b>5.0/60/0</b>              |                   |
| <b>6.1-ին, 2-րդ կիսամյակներ</b> | <b>7.Ստուգարք</b>            |                   |

**8.Դասընթացի նպատակն է** հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի.

- ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը,
- նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը,
- բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց,
- նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը,
- զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն:

**Դասընթացի խնդիրներն են.**

1. հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,
2. ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,
3. ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,
4. ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,
5. ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Սահմանելու անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները:
2. Թվարկելու կոփման կանոնները և բացատրել դրանց նշանակությունը:
3. Ներկայացնելու ֆիզիկական դաստիարակության պարապմունքների ժամանակ անվտանգության պահպանման կանոնները:
4. Ներկայացնելու առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքները:
5. Առանձնացնելու վնասակար սովորությունները և բացատրելու դրանց կործանարար ազդեցությունը

անձի մտավոր և ֆիզիկական զարգացման վրա:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. Կատարելու նորմատիվներին համապատասխան ֆիզիկական վարժություններ (ակրոբատիկ վարժություններ, վազք, հեռացատկ):
2. Ցուցաբերելու շարժողական ընդունակություններ ու ֆունկցիոնալ կարողություններ ուսուցանվող մարզաձևերում:
3. Ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. Աջակցելու կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս անցկացվող մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի ու սպորտային միջոցառումների կազմակերպմանը:
2. Դասընթացի ժամանակ կազմակերպելու թիմային մրցախաղեր տարբեր սպորտաձևերից:
3. Կազմելու իր և ընկերների առողջ կենսակերպի ապահովման ուսումնամարզական պարապմունքների պլան:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքը.**

**Գ2.** Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

**Գ6.** Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. Վերահսկողական ուսումնական պարապմունքներ .

- տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ),
- մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
- ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
- անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ),
- ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ),

2. արտաուսումնական պարապմունքներ.

- ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում,
- վերականգնողական միջոցառումների իրականացում,
- մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի,
- ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով,
- մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում,
- մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշները**

Դասընթացն ավարտվում է ստուգաքրով: Ստուգաքրը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:

**13. Դասընթացի բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**1-ին կիսամյակ**

**Թեմա 1.** Ֆիզիկական դաստիարակություն, նրա դերն ու նշանակությունը ընդհանուր կրթական համակարգում: Ֆիզկուլտուրայի և սպորտի հիգիենիկ հիմունքները: Անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները: Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: **Թեմա 2.** Մարմնի կոփման կանոնները և դրանց նշանակությունը: Վազք: Վազքի տեխնիկայի ուսուցում: Վազք. փոփոխական արագությամբ, արգելքների հաղթահարումով, 60 մ /ցածր մեկնարկից/, 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: Հեռացատկ: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում: Հեռացատկ տեղից: **Թեմա 3.** Սպորտային խաղերի դերն ու նշանակությունը ուսանողի մտավոր և ֆիզիկական դաստիարակության, ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման գործում: Սպորտային խաղ վոլեյբոլ. խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում, գնդակի ընդունում և փոխանցում 2 ձևերով: Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ուսուցում: Գնդակի վարում և փոխանցում 2 ձևերով: Չամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկայի ուսուցում: **Թեմա 4.** Ուսանողի առողջ կենցաղավարության հիմունքները, նրա արդյունավետության չափանիշները, պայքարը բացասական երևույթների դեմ: Երկկողմանի խաղ (վոլեյբոլ, բասկետբոլ):

**2-րդ կիսամյակ**

**Թեմա 1.** Ընդհանուր ֆիզիկական և սպորտային պատրաստության դերը ֆիզիկական դաստիարակության գործում: Շարժողական ընդունակությունների կատարելագործման հիմունքները: Մարմնամարզություն:

Ակրորատիկ վարժություններ. գլուխկոնձի առաջ, ետ, «կամուրջ» պատկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնձի երկարությամբ: **Թեմա 2.** Ֆիզիկական բեռնվածության ծավալը ուսանողական տարիքում, նրա միջոցով ֆիզիկական զարգացման և մարմնակազմության հնարավորություններն ու շտկման պայմանները: Մարմնամարզություն: Մարզանստարանի վրա հենում պատկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: **Թեմա 3.** Ինքնուրույն պարապմունքների մեթոդական հիմունքները, նրանց ձևերը և տարիքային և սեռային առանձնահատկությունները: Սպորտային խաղ վոլեյբոլ. վերնից սկզբնահարվածի տեխնիկայի ուսուցում: Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս. տեխնիկական և տակտիկական տարրերի ուսուցում: Սպորտային խաղ բասկետբոլ. գնդակին տիրապետման տեխնիկայի ուսուցում, պաշտպանության տեխնիկայի ուսուցում, գնդակի նետում զամբյուղի մեջ: **Թեմա 4.** Սպորտային խաղ վոլեյբոլ: Հարձակողական հարվածի տիրապետման տեխնիկայի ուսուցում: Խաղի պաշտպանության տեխնիկայի ուսուցում: Երկկողմանի խաղ: **Թեմա 5.** Ինքնուրույն պարապմունքների հիգիենան և ինքնահսկումը: Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական վազք: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Երկար վազքի տեխնիկայի առանձնահատկությունները: Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): Հեռացատկ: Հեռացատկ տեղից զույգ ոտքերի հրումով: **Թեմա 6.** Մասնակցությունը սպորտային մրցումների, դրանց ֆիզիկական և հոգևոր դաստիարակչական նշանակությունը: **Թեմա 8.** Ստուգարքային ձևերի նախապատրաստում:

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Սամվելյան Լ., Պետրոսյան Գ., Թումանյան Հ., Գրիգորյան Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Եր., 2007:
2. Ազիզյան Գ., Վանեսյան Հ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:
3. Ավագյան Է., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:
4. Բաբայան Հ., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
5. Բաբայան Ս., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
6. Բոյախյան Գ., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:
7. Թումանյան Հ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
8. Մելիքսեթյան Ռ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:
9. Մելքոնյան Հ., Կալաջյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:
10. Նահապետյան Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:

| 1. 0001/B13, B15  | 2. Ֆիզդաստիարակություն | 3.0 ECTS կրեդիտ |
|---|------------------------|-----------------|
| 4.2 Ժամ/շաբ.  | 5.0/60/0               |                 |
| 6.3-րդ, 4-րդ կիսամյակներ  | 7. Ստուգարք            |                 |
| <p><b>8. Դասընթացի նպատակն է</b> հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի.</p> <ul style="list-style-type: none"> <li>• ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը,</li> <li>• նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը,</li> <li>• բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը,</li> <li>• զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն,</li> <li>• կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց:</li> </ul> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,</li> <li>2. ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,</li> </ol> |                        |                 |

|   |
|---|
| <ol style="list-style-type: none"> <li>3. ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,</li> <li>4. ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,</li> <li>5. ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:</li> </ol>   |
| <p><b>9. Դասընթացի ավարտին ուսանող ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնելու մասսայական սպորտի, բարձր նվաճումների սպորտի և ուսանողական սպորտի առանձնահատկությունները, թվարկել սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման փուլերը,</li> <li>2. Ներկայացնելու ուսանողական սպորտային մրցումների համակարգի կառուցվածքը, ունիվերսիադաների և օլիմպիական խաղերի տարբերությունները, թվարկել նրանց դաստիարակչական հատկությունները, ներկայացնել տեղեկություններ օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների վերաբերյալ:</li> <li>3. Հիմնավորելու կոնկրետ սպորտաձևի ընտրումը կանոնավոր պարապմունքների համար, թվարկելու հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համակարգերի կիրառման բնութագրերը:</li> <li>4. Թվարկելու տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները, մեկնաբանելու անհատի վրա դրանց ներգործության բնութագրերը:</li> <li>5. Ներկայացնելու արտադրական ֆիզիկական կուլտուրայի, արտադրական մարմնամարզության առանձնահատկությունները և մեկնաբանելու նրանց անհրաժեշտությունը մասնագիտական գործունեության մեջ:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Պահպանելու ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները:</li> <li>2. Սպորտով կանոնավոր պարապելու դեպքում իրականացնել օրգանիզմի վիճակի ինքնահսկողություն կիրառելով նրա հիմնական մեթոդները և ցուցանիշները, վարել ինքնավերահսկման օրագիր,</li> <li>3. Ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ:</li> <li>4. Կատարելու շարժողական գործողություններ ֆիզիկական վարժությունների կատարման մատուցված մեթոդներով և ցուցաբերելու նորմատիվներին համապատասխան արդյունքներ:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Դասախոսի անմիջական հսկողությամբ ուսանողների խմբում իրականացնելու թեմատիկ հանձնարակականի փոխադարձ վերահսկողություն:</li> <li>2. Աջակցելու ընկերներին թեմատիկ շարժողական գործողությունների, հնարքների կատարման ժամանակ, ներկայացնելու իր կարծիքը ընկերների ֆիզիկական պատրաստվածության վերաբերյալ:</li> <li>3. Վերլուծելու դասախոսի կողմից իրեն և խմբին տրված անհատական և խմբային հանձնարարականների իրականացման արդյունքները:</li> <li>4. Կազմակերպելու մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի պարապմունքներ, սպորտային միջոցառումներ կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս:</li> <li>5. Կողմնորոշվելու տարբեր իրավիճակներում, ցուցաբերել առաջին բուժօգնություն վնասվածքների դեպքում:</li> </ol> |
| <p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքը.</b></p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ6.</b> Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:</p>  |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <p>1. Վերահսկողական ուսումնական պարապմունքներ .</p> <ul style="list-style-type: none"> <li>• տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ),</li> <li>• մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),</li> <li>• ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),</li> <li>• անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ),</li> </ul>  |

|   |
|---|
| <ul style="list-style-type: none"> <li>• ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ),</li> </ul> <p>2. արտատումնական պարապմունքներ.</p> <ul style="list-style-type: none"> <li>• ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում,</li> <li>• վերականգնողական միջոցառումների իրականացում,</li> <li>• մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի,</li> <li>• ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով,</li> <li>• մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում,</li> <li>• մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:</li> </ul>  |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշները</b></p> <p>Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ստուգարքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:</p>   |
| <p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b></p> <p><b>3-րդ կիսամյակ</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ուսանողական սպորտը, բուհում սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման առանձնահատկությունները: <b>Թեմա 2.</b> Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլը: <b>Թեմա 3.</b> Վազքի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում, վազք փոփոխական արագությամբ, վազք 60 մ, 100 մ /ցածր մեկնարկից/: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Հեռացատկ տեղից, տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Վազք արգելքների հաղթահարումով: Վազք 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: <b>Թեմա 4.</b> Ուսանողական սպորտային մրցումների համակարգը, ունիվերսիադաներ, օլիմպիական խաղեր: Օլիմպիզմը և օլիմպիական դաստիարակությունը: <b>Թեմա 5.</b> Սպորտային խաղ վոլեյբոլ, խաղի կանոնների ամրապնդում, սկզբնահարվածի ուսուցում և ամրապնդում: Գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: <b>Թեմա 6.</b> Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ամրապնդում: <b>Թեմա 7.</b> Կանոնավոր պարապմունքների համար սպորտաձևի ընտրման դրդապատճառները և հիմնավորումը: Հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համամակարգերի համառոտ հոգեֆիզիոլոգիական բնութագրերը: <b>Թեմա 8.</b> Սպորտային խաղ սեղանի թենիս, խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում: <b>Թեմա 9.</b> Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ», կանգ թիակների վրա պառկած դրությունից: <b>Թեմա 10.</b> Մարմնամարզություն: Ցատկ այծիկի վրայից՝ ոտքերը զատած եղանակով:</p> <p><b>4-րդ կիսամյակ</b></p> <p><b>Թեմա 1.</b> Տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները: Անհատի ֆիզիկական, շարժողական և հոգեկան հատկությունների վրա դրանց ներգործության բնութագրերը: <b>Թեմա 2.</b> Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: <b>Թեմա 3.</b> Մարզապարապմունքների արդյունավետության հսկողությունը, ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները: <b>Թեմա 4.</b> Սպորտային խաղ վոլեյբոլ: Վերևից սկզբնահարվածի, հարձակողական հարվածի տիրապետման, խաղի պաշտպանության տեխնիկաների ուսուցում և ամրապնդում: <b>Թեմա 5.</b> Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս, նրանց տեխնիկական և տակտիկական տարրերի ամրապնդում: <b>Թեմա 6.</b> Սպորտով կանոնավոր պարապելու դեպքում օրգանիզմի վիճակի ինքնահսկողությունը, նրա հիմնական մեթոդները, ցուցանիշները և ինքնավերահսկման օրագիրը: <b>Թեմա 7.</b> Սպորտային խաղ բասկետբոլ, գնդակին տիրապետելու, պաշտպանության, գամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկաների ամրապնդում: <b>Թեմա 8.</b> Սպորտային խաղեր վոլեյբոլ և բասկետբոլ: Երկկողմանի խաղ: <b>Թեմա 9.</b> Առաջին բուժօգնությունը վնասվածքների դեպքում: <b>Թեմա 10.</b> Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): <b>Թեմա 11.</b> Հեռացատկ տեղից զույգ ոտքերի հրումով: <b>Թեմա 12.</b> Արտադրական ֆիզիկական կուլտուրա, արտադրական մարմնամարզություն, նրանց նշանակությունը մասնագիտական գործունեության մեջ և նրանց առանձնահատկությունները: <b>Թեմա 13.</b> Ստուգարքային ձևերի նախապատրաստում:</p> |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Սամվելյան Լ., Պետրոսյան Գ., Թումանյան Հ., Գրիգորյան Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Եր., 2007:.</li> <li>2. Ազիզյան Գ., Վանեսյան Հ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:</li> <li>3. Ավագյան Է., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:</li> <li>4. Բաբայան Հ., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզրաստիարակության գործընթացում, Եր., 2000:</li> <li>5. Բաբայան Մ., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:</li> </ol>   |

6. Բոյախյան Գ., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:  
 7. Թումանյան Հ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:  
 8. Մելիքսեթյան Ռ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:  
 9. Մելքոնյան Հ., Կալաջյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:  
 10. Նահապետյան Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ)**

|   |                                     |                        |
|---|-------------------------------------|------------------------|
| <b>1.0201/B16</b>   | <b>2.Տնտեսագիտության հիմունքներ</b> | <b>3.2 ECTS կրեդիտ</b> |
| <b>4.2 Ժամ/շաբ.</b>   | <b>5.30/0/0</b>                     |                        |
| <b>6.3-րդ կիսամյակ</b>  | <b>7.Ստուգարք</b>                   |                        |
| <p><b>8.Դասընթացի նպատակն է</b> ուսանողների մոտ ձևավորել համակարգված տրամաբանական մտածողություն և տալ տնտեսագիտական ընդհանուր գիտելիքներ:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ուսանողներին մեկնաբանել տնտեսագիտության հիմնարար օրենքները կատեգորիաները, ցուցանիշները:</li> <li>2. Ուսանողներին բացատրել շուկայական տնտեսության սկզբունքները:</li> <li>3. Ուսուցանել ուսանողներին օգտվել մասնագիտական գրականությունից, օրենքներից:</li> <li>4. Ուսանողներին զինել միկրո և մակրո ցուցանիշները հասկանալու, վերլուծելու կարողություններով:</li> </ol>  |                                     |                        |
| <p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Սահմանելու և մեկնաբանելու շուկայական տնտեսության առանձնահատկությունները, սկզբունքները, տնտեսական օրենքները:</li> <li>2. Ներկայացնելու շուկայի մոդելները, ռեսուրսների շուկաները և դրանց առանձնահատկությունները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնելու միկրո, մակրո ցուցանիշները, ֆինանսաբանկային համակարգը:</li> <li>2. Վերլուծելու տնտեսական իրավիճակները:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատելու թիմում:</li> <li>2. Տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, հմտորեն հաղորդակցվելու հանրության հետ:</li> </ol> |                                     |                        |
| <p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p>   |                                     |                        |
| <p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնասության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. դասախոսություններ</li> <li>2. սեմինարներ, քննարկումներ և բանավեճեր</li> <li>3. խմբային աշխատանքներ</li> <li>4. ռեֆերատներ:</li> </ol>   |                                     |                        |
| <p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:</p>  |                                     |                        |
| <p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Տնտեսագիտության տեսության առարկան և մեթոդը: <b>Թեմա 2.</b> Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները: <b>Թեմա 3.</b> Տնտեսության շուկայական համակարգը և եկամտի շրջապտույտը: <b>Թեմա 4.</b> Անհատական շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: <b>Թեմա 5.</b> Սպառողի վարքի տեսություն: <b>Թեմա 6.</b> Արտադրության ծախսերի տնտեսություն: <b>Թեմա 7.</b> Շուկայի կառուցվածքը և գնի ու արտադրության ծավալի որոշումը: <b>Թեմա 8.</b> Ձեռնարկությունների ու կազմակերպությունների տիպերը և տեսակները: <b>Թեմա 9.</b> Ռեսուրսների գների ձևավորումը: <b>Թեմա 10.</b> Մակրոտնտեսական ցուցանիշներ: Ազգային հաշիվների</p>  |                                     |                        |

|  |
|--|
| <p>համակարգը: <b>Թեմա 11.</b> Մակրոտնտեսական կայունություն և տատանումներ: <b>Թեմա 12.</b> Փողը և բանկային համակարգը, դրամավարկային քաղաքականություն: <b>Թեմա 13.</b> Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: <b>Թեմա 14.</b> Միջազգային առևտրի տեսություն: <b>Թեմա 15.</b> Վճարային հաշվեկշիռ և արժույթային կուրսեր:</p> <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Գորթնի Ջ., Տնտեսագիտություն, ԵՊՏՀ հրատ., Եր., 1999:</li> <li>2. Սամուելսոն Ս., Նորթհանուս Ու., Տնտեսագիտություն, Եր., 1997:</li> <li>3. Макконнелл К.Р., Брю С.Л. Экономика. 17-ое изд., Москва, 2009.</li> <li>4. Экономическая теория. Учебник под ред. В. Камаева, Москва, 1998</li> </ol> |
|--|

| 1.0201/B16   | 2.Գործարարության հիմունքներ | 3.2 ECTS կրեդիտ |
|--|-----------------------------|-----------------|
| 4.2ժամ/շաբ.  | 5.30/0/0                    |                 |
| 6.3-րդ կիսամյակ  | 7.Ստուգաք                   |                 |
| <p><b>8.Դասընթացի նպատակն է հաղորդել ներկայիս տնտեսական պայմաններում գործարարություն կազմակերպելու և վարելու համար իրավական, տնտեսական և կազմակերպչական գիտելիքներ և հմտություններ:</b></p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Փոխանցել համակարգված գիտելիք գործարարության կազմակերպման վերաբերյալ:</li> <li>2. Մշակել կազմակերպա-կառավարչական հմտություններ գործարարությամբ զբաղվելու համար:</li> <li>3. Հաղորդել գիտելիքներ գործունեության սուբյեկտների պատասխանատվության վերաբերյալ:</li> </ol>   |                             |                 |
| <p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Բնութագրելու գործարարության միջավայրը և տեսակները:</li> <li>2. Տարբերելու ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը:</li> <li>3. Իմանալու ձեռնարկության պետական գրանցման փաստաթղթերի փաթեթը:</li> <li>4. Թվարկելու գործունեության տեխնիկա-տնտեսական հիմնավորման պահանջները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Մշակելու բիզնես-գաղափարներ և վերլուծության միջոցով, ընտրել լավագույնը</li> <li>2. Կազմակերպելու սեփական գործ և որոշել դրա արդյունավետությունը:</li> <li>3. Գնահատելու ռիսկը և կողմնորոշվելու ստեղծված ցանկացած իրավիճակում:</li> <li>4. Հայթայթելու, վերլուծելու և տեղին օգտագործելու գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվությունը:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. աշխատելու թիմում</li> <li>2. մոտիվացնելու</li> <li>3. առաջնորդելու</li> <li>4. աշխատելու տեղեկատվության հետ:</li> </ol> |                             |                 |
| <p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p>  |                             |                 |
| <p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. գործնական խաղ /թիմային աշխատանք/</li> <li>2. դասախոսություն, սեմինար</li> <li>3. ինքնուրույն աշխատանք /գեկոյց,ռեֆերատ,/</li> <li>4. ճանաչողական էքսկուրսիաներ:</li> </ol>  |                             |                 |
| <p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված ստուգաքը անց է կացվում գրավոր:</p>   |                             |                 |
| <p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Գործարարության էությունը և ֆունկցիաները: <b>Թեմա 2.</b> Գործարարության միջավայրը և տեսակները: <b>Թեմա 3.</b> Գործարարության սուբյեկտները: <b>Թեմա 4.</b> Ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը: <b>Թեմա 5.</b> Բիզնես-գաղափարը և բիզնես հայեցակարգը, որպես գործարարության նախադրյալ: <b>Թեմա 6.</b></p>  |                             |                 |

|  |
|--|
| <p>Մարքեթինգի պլան: <b>Թեմա 7.</b> Գործունեության կադրային ապահովումը: <b>Թեմա 8.</b> Գործունեության մեկնարկային կապիտալը և ընթացիկ գործունեության ֆինանսական ապահովումը: <b>Թեմա 9.</b> Արտադրական պլան <b>Թեմա 10.</b> Ինքնարժեքի կալկուլյացիա: <b>Թեմա 11.</b> Ձեռնարկատիրական ռիսկ: <b>Թեմա 12.</b> Ֆինանսական պլանավորում:</p> <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. М.Н.Кондратьева, Е.В.Баландина, Ю.С.Трефилова, «Бизнес-планирование» учебное пособие, Ульяновск УлГТУ 2014/ <a href="http://venec.ulstu.ru/lib/disk/2015/17.pdf">http://venec.ulstu.ru/lib/disk/2015/17.pdf</a></li> <li>2. В.Ю.Буров, «Основы предпринимательства», учебное пособие, Чита – 2011.</li> <li>3. В.А.Богомолова, Н.М.Белюсова, О.В.Кублашвили, Р.Ю.Ролдугина, «Бизнес-планирование», учебное пособие, Москва 2014 <a href="http://storage.elib.mgup.ru/6/bogomolova_2014.pdf">http://storage.elib.mgup.ru/6/bogomolova_2014.pdf</a></li> <li>4. С.И.Башаримова, М.В.Даско, «Основы предпринимательства» учебное пособие.</li> <li>5. Е.К.Торосян, Л.П.Сажнева, Ж.Н.Зарубина, «Основы предпринимательской деятельности», учебное пособие, Санкт-Петербург 2016 <a href="https://books.ifmo.ru/file/pdf/1909.pdf">https://books.ifmo.ru/file/pdf/1909.pdf</a></li> </ol> |
|--|

|  |                                     |                        |
|--|-------------------------------------|------------------------|
| <b>1.0304/B16</b>  | <b>2.Քաղաքագիտության հիմունքներ</b> | <b>3.2 ECTS կրեդիտ</b> |
| <b>4. 2 ժամ/շաբ.</b>   | <b>5. 30/0/0</b>                    |                        |
| <b>6.3-րդ կիսամյակ</b>   | <b>7.ստուգարք</b>                   |                        |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b><br/> <b>Առանց եզրափակիչ գնահատման</b> մոդուլ՝ առավելագույնը <b>20 (4+4+5+6+1) միավոր:</b><br/> <b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր:</b> Հարցատոմսը պարունակում է 4 հարց (2 հարց դիսկրետ մաթեմատիկայից՝ յուրաքանչյուրը առավելագույնը 1 միավոր, 2 հարց գրաֆների տեսությունից՝ յուրաքանչյուրը առավելագույնը 1 միավոր): Միավորների քայլը 0,25 է:<br/> <b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր է՝ առավելագույնը <b>4 միավոր:</b> Հարցատոմսը պարունակում է 4 հարց (2 հարց դիսկրետ մաթեմատիկայից՝ յուրաքանչյուրը առավելագույնը 1 միավոր, 2 հարց գրաֆների տեսությունից՝ յուրաքանչյուրը առավելագույնը 1 միավոր): Միավորների քայլը 0,25 է:<br/> <b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>5 միավոր</b>՝ տնային առաջադրանքների կատարման համար:<br/> <b>Ինքնուրույն աշխատանք</b>՝ առավելագույնը <b>6 միավոր:</b><br/> <b>Մասնակցություն դասերին.</b> Առավելագույնը <b>1 միավոր:</b></p>   |
| <p><b>13. Մոդուլը բաղկացած է հետևյալ բաժիններից.</b><br/> <b>Բաժին 1. Դիսկրետ մաթեմատիկա</b><br/> <b>Թեմա 1.</b> Բազմությունների տեսության հիմունքներ: Գործողություններ բազմությունների հետ (միավորում, հատում, տարբերություն, սիմետրիկ տարբերություն, լրացում, դեկարտյան արտադրյալ), դրանց հիմնական հատկությունները: <b>Թեմա 2.</b> Բինար հարաբերություններ: Բինար հարաբերության պրոյեկցիա, կտրվածք: Դրանց հատկությունները: Ֆունկցիոնալ հարաբերություններ, համարժեքության, կարգի հարաբերություններ: <b>Թեմա 3.</b> Կոմբինատորիկայի հիմնական սկզբունքները: Ընտրություններ՝ կարգավորված, չկարգավորված, կրկնվող և չկրկնվող տարբերով: Նյութոնի բինոմ: Նյութոնի բինոմի կիրառության օրինակներ: Անդրադարձ առնչություններ, դրանց լուծումը և կիրառումը կոմբինատոր խնդիրներում: Կցման և արտաքսման սկզբունքը, կիրառություններ:</p> <p><b>Բաժին 2. Գրաֆների տեսություն</b><br/> <b>Թեմա 1.</b> Գրաֆի սահմանումը, հիմնական հասկացությունները, տրման եղանակները: Աստիճաններ, ենթագրաֆներ, ճանապարհներ: Էյլերի թեորեմը աստիճանների վերաբերյալ: Գործողություններ գրաֆների հետ: <b>Թեմա 2.</b> Կապակցված գրաֆներ: Երկկողմանի գրաֆներ: Քյունիգի թեորեմ: Ծառեր, ծառի հատկությունները: Կելլիի թեորեմ: <b>Թեմա 3.</b> Կապակցվածություն, կողային կապակցվածություն: Հիմնական բնութագրիչները, դրանց հատկությունները:</p> |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Պետրոսյան Պ., Մկրտչյան Վ., Քամայան Ռ., Գրաֆների տեսություն, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., 2015:</li> <li>2. Տոնոյան Ռ., Դիսկրետ մաթեմատիկայի դասընթաց, Եր., 2013:</li> <li>3. Андерсон Дж., Дискретная математика и комбинаторика, изд. Вильямс, Москва, Санкт-Петербург, Киев, 2004.</li> <li>4. Гаврилов Г., Сапоженко А., Задачи и упражнения по дискретной математике, Москва, 2006.</li> <li>5. Ежов И., Скороход А., Ядренко М., Элементы комбинаторики, Москва, 1977.</li> <li>6. Новиков Ф., Дискретная математика для программистов, учебник, 2-ое издание, Изд. “Питер”, Санкт-Петербург, 2007.</li> </ol>  |

7. Хаггарти Р., Дискретная математика для программистов, Москва, 2003.
8. Яблонский С., Введение в дискретную математику, изд. 4-ое, Москва, 2003.
9. Виленкин Н., [Комбинаторика, Москва, 1969.](#)
10. Rosen Kenneth H. "Discrete mathematics and Its Applications", 7-th edition, McGraw- Hill, 2006.
11. Харари Ф., Теория графов, М., Мир, 1973.

|   |                          |                 |
|---|--------------------------|-----------------|
| 1.0104/B19  | 2.ԷՀՄ և ծրագրավորում – 1 | 3.4 ECTS կրեդիտ |
| 4.4 ժամ/շաբ.  | 5.15/45/0/60             |                 |
| 6.1-ին կիսամյակ   | 7.Եզրափակիչ գնահատումով  |                 |
| <p><b>8.Դասընթացի նպատակն է</b> ուսանողներին ծրագրավորում սովորեցնել C++ բարձր կարգի օբյեկտային կողմնորոշված ալգորիթմական լեզվի միջոցով, ստեղծել ալգորիթմավորման վերաբերյալ համակարգված գիտելիքներ ստանալու պայմաններ: Տեղեկատվական տեխնոլոգիաների շրջանակներում ուսանողներին տալ տեսական և գործնական այնպիսի պատրաստում, որ նրանք կարողանան ճիշտ և արդյունավետ ընտրել անհրաժեշտ տեխնիկական, ալգորիթմական, ծրագրային և տեխնոլոգիական լուծումներ, կարողանան բացատրել նրանց գործունեության սկզբունքները և ճիշտ կիրառել գործնական աշխատանքում:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ձևավորել հաշվարկման տարբեր համակարգերի թվերի և ԷՀՄ-ում նրանց ներկայացման ֆորմատների հետ աշխատելու կարողություններ,</li> <li>2. ձևավորել ուսանողների մոտ ալգորիթմական մտածողություն և խնդիրների լուծման համար տարբեր ալգորիթմներ մշակելու ունակություններ,</li> <li>3. ձևավորել կիրառական խնդիրների լուծման համար C++ լեզվով ծրագրերի մշակման, կարգաբերման, իրականացման և վերլուծության գործնական հմտություններ:</li> </ol>  |                          |                 |
| <p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և խնամքություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Դասակարգելու հաշվարկման համակարգերը, բացատրելու նրանց տարբերությունները, մատնանշել ԷՀՄ հիշողությունում թվերի ներկայացման տարբեր ֆորմատները և մեկնաբանելու նրանց տարբերությունները, բացատրելու տարբեր ֆորմատներում թվաբանական գործողությունների կատարման սկզբունքները,</li> <li>2. Սահմանելու ալգորիթմ, ներկայացնել ալգորիթմների հետ աշխատելու մեթոդները և միջոցները, դասակարգելու ալգորիթմական լեզուները և ներկայացնել համապատասխան թարգմանիչների աշխատանքի սկզբունքները,</li> <li>3. Թվարկելու օբյեկտային կողմնորոշված ծրագրավորման լեզվի առանձնահատկությունները, տալու C++ լեզվի քերականական կառուցվածքը, բացատրել այդ լեզվով գրվող ծրագրերի կառուցման հիմնական սկզբունքները,</li> <li>4. Թվարկելու C++ լեզվի հիմնական տարրերը, նկարագրելու տարբեր տիպի և կառուցվածքի տվյալներ, թվարկելու լեզվի հիմնական ղեկավարող կառուցվածքները և բացատրելու նրանց աշխատանքի սկզբունքները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնելու թվերը հաշվարկման տարբեր համակարգերում, կատարելու թվի վերլուծություն և նրանց միջև տարբեր թվաբանական գործողություններ, ԷՀՄ-ի հիշողությունում ներկայացնելու ամբողջ և իրական թվերը համապատասխան ֆորմատներում,</li> <li>2. Գրելու տարբեր բարդության ծրագրեր C++ լեզվի հիմնական ղեկավարող կառուցվածքների՝ օպերատորների, ստատիկ և դինամիկ կառուցվածքների, ֆունկցիաների և ստանդարտ ֆայլերի կիրառմամբ,</li> <li>3. Կազմելու թվաբանական, տրամաբանական արտահայտություններ տարբեր տիպի տվյալների համար և հաշվել նրանց արժեքը,</li> <li>4. Ուսումնասիրելու տրված խնդիրը և գրելու այն իրականացնող ծրագիր, կատարելու նրա արդյունավետության գնահատում:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատելու Visual Studio ծրագրային փաթեթի հետ, կարգաբերելու C++ լեզվով գրված ծրագրերը և իրականացնելու,</li> <li>2. Ստանալու տեղեկատվություն, պահպանելու և մշակելու, ինքնուրույն ուսումնասիրելու նոր ծրագրավորման լեզուներ, յուրացնելու և գրելու ծրագրեր նրանց միջոցով,</li> <li>3. Դնելու խնդիրներ և մշակելու տրված խնդիրների լուծման համար տարբեր ալգորիթմներ, մեկնաբանելու ուրիշի գրած ծրագրերը, վերլուծելու և վերամշակելու ալգորիթմն ըստ ներկայացվող պահանջների,</li> </ol> |                          |                 |

|   |
|---|
| <p>4. Հաղորդակցվելու ծրագրավորման և ալգորիթմական/տեղեկատվական մասնագիտորեն ճիշտ և գրագետ տերմիններով:</p>   |
| <p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա1.</b> Ներկայացնելու և բացատրելու ծրագրավորման ժամանակակից սկզբունքները, մեթոդները (կառուցվածքային մեթոդ, օբյեկտակողմնորոշված մեթոդ, համակարգային մեթոդ, միկրոկոնստրուկտիվների և սարքերի ծրագրավորման մեթոդ), արդի տեղեկատվական տեխնոլոգիաները:</p> <p><b>Ա2.</b> Թվարկելու ծրագրավորման արդի լեզուները, դասակարգելու և ներկայացնելու դրանց առանձնահատկությունները, կիրառման ոլորտները, հիմնավորելու տարբեր խնդիրների ծրագրային իրականացման համար կոնկրետ լեզվի ընտրությունը:</p> <p><b>Բ3.</b> Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:</p> <p><b>Բ4.</b> Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:</p> <p><b>Բ6.</b> Հավաքագրելու մասնագիտական տեղեկատվություն ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ պահանջող տարբեր պարզ և բարդ խնդիրների լուծման համար՝ օգտագործելով հաղորդակցման և որոնողական ժամանակակից տարբեր համակարգեր, նորարարական մեթոդներով իրականացնելու հավաքագրված մասնագիտական տվյալների քանակական և որակական վերլուծություններ, կատարելու տրամաբանական եզրահանգումներ:</p> <p><b>Գ1.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ3.</b> Որոշելու իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:</p> |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ,</li> <li>• գործնական պարապմունքներ,</li> <li>• քննարկումներ,</li> <li>• տնային և անհատական տնային առաջադրանքներ,</li> <li>• ստուգողական աշխատանքներ,</li> <li>• ինքնուրույն աշխատանքներ:</li> </ul>  |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Եզրափակիչ գնահատումով դասընթաց,</b> առավելագույնը 20 միավոր (4+4+7+2+3):</p> <p><b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>Եզրափակիչ քննություն.</b> Բանավոր՝ առավելագույնը <b>7 միավոր</b> քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 3 հարց. 1 տեսական հարց (առավելագույնը 2 միավոր), երկու խնդիր (1-ինը՝ 2 միավոր և 2-րդը՝ 3 միավոր):</p> <p><b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>2 միավոր</b>, կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջադրանքներից ձեռք բերումների համար՝ 1 միավոր և ստուգողական աշխատանքներից ձեռք բերումների համար՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>Ինքնուրույն աշխատանք.</b> առավելագույնը <b>3 միավոր</b>, անհատական 2 տնային առաջադրանքների համար՝ 1.5 միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p>  |
| <p><b>Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Թվերի ներկայացում (կոդավորում) ԷՀՄ-ի օպերատիվ հիշողությունում, ալգորիթմ և նրա տրման եղանակները: <b>Թեմա 2.</b> C++ լեզվի այբուբեն, շարահյուսական կանոններ և իմաստաբանական մեկնաբանում: Լեզվի լեքսեմներ, տիպ, փոփոխական, արտահայտություն: <b>Թեմա 3.</b> C++ լեզվի օպերատորները: <b>Թեմա 4.</b> Ֆունկցիաներ: <b>Թեմա 5.</b> Չանգվածներ:</p>  |
| <p><b>Հիմնական գրականության ցանկ.</b></p> <p>1. Վարդանյան Ռ., Կարապետյան Ս., C++ Լեզվի հիմունքները, Եր., 2007.</p>  |

|  |
|--|
| 2. Дейтел Х., Дейтел П.Дж., Как программировать на C++. «БИНОМ», Москва, 2000.                       |
| 3. Шилдт Г., C++: руководство для начинающих, 2-е издание, Издательский дом “Вильямс”, Москва, 2005. |
| 4. Страуструп Б., Язык программирования C++, «БИНОМ», Москва, 1999.                                  |

|                  |                           |                  |
|------------------|---------------------------|------------------|
| 1. 0104/B22      | 2. Դիսկրետ մաթեմատիկա - 2 | 3. 4 ECTS կրեդիտ |
| 4. 4 ժամ/շաբ.    | 5. 30/30/0                |                  |
| 6. 2-րդ կիսամյակ | 7. Եզրափակիչ գնահատումով  |                  |

**8. Մոդուլի նպատակները.**

- Ներկայացնել գրաֆների հիմնական տիպերը, դրանց հատկությունները, հիմնական թեորեմները;
- Ձևավորել պատկերացում դիսկրետ մաթեմատիկայի շրջանակներում ուսումնասիրվող բուլյան ֆունկցիաների տեսության, կոդավորման տեսության հիմնական գաղափարների, այդ տեսությունների կապերի վերաբերյալ;
- Չարգացնել ուսանողների տրամաբանական և վերլուծական մտածողությունը՝ դիսկրետ մաթեմատիկայի և գրաֆների տեսության այս մոդուլի շրջանակներում ուսումնասիրվող մեթոդների և գործիքակազմի միջոցով;
- Ապահովել մոդուլի շրջանակում ուսումնասիրվող տեսական նյութի յուրացման գույակցումը դրա կիրառական ասպեկտների ըմբռնման, խնդիրների լուծման գործնական հմտությունների ձևավորման հետ:

**Դասընթացի խնդիրները.**

1. ուսումնասիրել n-չափանի միավոր խորանարդը, դրա հիմնական հատկությունները, դիտարկել այն որպես մետրիկական տարածություն,
2. ուսումնասիրել n-չափանի խորանարդի համիլտոնություն,
3. ուսումնասիրել բուլյան ֆունկցիաների հիմնական ներկայացումները, փակ դասերը, Պոստի լրիվության հայտանիշը,
4. ներկայացնել կոդավորման տեսության հիմնական գաղափարները, միարժեք ապակոդավորման ստուգման, խնայողական, օպտիմալ կոդավորման կառուցման ալգորիթմները:

**9. Մոդուլի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. Ներկայացնելու բուլյան ֆունկցիաների տեսության հիմնական գաղափարները, բուլյան ֆունկցիաների տրաման եղանակները, հիմնական փակ դասերը, դրանց հատկությունները, ապացուցելու բուլյան ֆունկցիաների դասի լրիվության Պոստի հայտանիշը:
2. Ներկայացնելու այբբենական կոդավորման եղանակը, ստուգելու կոդավորման սխեմայի միարժեք ապակոդավորման հատկությունը, ստուգելու միարժեք ապակոդավորման անհրաժեշտ պայմանները, կառուցելու Հաֆմանի օպտիմալ կոդը, մեկ սխալ ուղղող Հեմինգի օպտիմալ կոդը:
3. Ներկայացնելու կոմբինատոր և ոչ կոմբինատոր խնդիրների էությունը բուլյան ֆունկցիաների փակ դասերի համար:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. Կիրառելու բուլյան ֆունկցիաների տեսությունը տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում թվային հիմքի վրա տարբեր խնդիրների լուծման համար:
2. Կիրառելու ինֆորմացիայի կոդավորման և ապակոդավորման հիմնական սկզբունքները, միարժեք ապակոդավորման, խնայողական, օպտիմալ կոդավորման եղանակները գործնական խնդիրներում:
3. Լուծելու գրաֆային խնդիրներ n-չափանի խորանարդի վրա. ճանապարհ, հեռավորություն, խորանարդի նիստ, կրճատ ԴՆԶ:
4. Լուծելու կոմբինատոր և ոչ կոմբինատոր խնդիրներ բուլյան ֆունկցիաների փակ դասերի հետ:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. Լուծելու հարակից բնագավառներում ձևակերպված գործնական խնդիրները՝ կիրառելով դիսկրետ օբյեկտների կառուցման, հետազոտման և ապացուցելու տեխնիկան և հմտությունները:
2. Կիրառական խնդիրներ լուծելիս կիրառելու ուսումնասիրած տրամաբանական մեթոդներն ու ալգորիթմները:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Բ1.** Լուծելու մասնագիտական ոլորտի խնդիրներ՝ օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար գաղափարները, մոդելները, սկզբունքները, դրույթները, խնդիրների լուծման եղանակները:

**Բ3.** Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման

|   |
|---|
| <p>եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:</p> <p><b>Բ4.</b> Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:</p> <p><b>Բ6.</b> Հավաքագրելու մասնագիտական տեղեկատվություն ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ պահանջող տարբեր պարզ և բարդ խնդիրների լուծման համար՝ օգտագործելով հաղորդակցման և որոնողական ժամանակակից տարբեր համակարգեր, նորարարական մեթոդներով իրականացնելու հավաքագրված մասնագիտական տվյալների քանակական և որակական վերլուծություններ, կատարելու տրամաբանական եզրահանգումներ:</p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ3.</b> Որոշելու իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:</p> <p><b>Գ5.</b> Մասնագիտական հանրություն կառուցելու տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ բանավոր ու գրավոր խոսք մայրենի և որևէ օտար լեզվով:</p>   |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Դասախոսություն</li> <li>2. Գործնական աշխատանք</li> <li>3. Բանավոր քննարկում</li> <li>4. Խմբային աշխատանք</li> <li>5. Ինքնուրույն ածխատանք</li> <li>6. Ջեկուցում:</li> </ol>   |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>1-ին ընթացիկ քննություն.</b> Ընթացիկ քննությունը գրավոր է, <b>4 միավոր առավելագույն արժեքով:</b> Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը՝ 0,5:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն.</b> Ընթացիկ քննությունը գրավոր է, <b>4 միավոր առավելագույն արժեքով:</b> Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p> <p><b>Եզրափակիչ քննություն.</b> Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ <b>9 միավոր առավելագույն արժեքով:</b> Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p> <p><b>Ինքնուրույն աշխատանք.</b> առավելագույնը <b>3 միավոր՝ տնային առաջադրանքների կատարման և ընթացիկ առաջադիմության համար:</b></p>  |
| <p><b>13. Մոդուլը բաղկացած է հետևյալ բաժիններից.</b></p> <p><b><u>Բաժին 1. Գրաֆների տեսություն</u></b></p> <p><b>Թեմա 1.</b> n-չափանի միավոր խորանարդ: n-չափանի միավոր խորանարդը որպես մետրիկական տարածություն: Հիմնական հատկությունները: Սֆերա, գունդ, ճանապարհ, շրթա, ցիկլ n-չափանի միավոր խորանարդում: <b>Թեմա 2.</b> Էյլերյան և համիլտոնյան գրաֆներ: Գրաֆում Էյլերյան ցիկլի և ճանապարհի գոյության անհրաժեշտ և բավարար պայմանը: Գրաֆում համիլտոնյան ցիկլի գոյության անհրաժեշտ, բավարար պայմանները: <b>Թեմա 3.</b> Ֆակտորներ, անկախ բազմություններ, զուգակցումներ և ծածկություններ, հիմնական արդյունքները: <b>Թեմա 5.</b> Հարթ և հարթվող գրաֆներ: Էյլերի թեորեմը հարթ գրաֆների վերաբերյալ: Պոստրյագին-Կուրատովսկու թեորեմ: <b>Թեմա 7.</b> Գրաֆի ներկումներ: Հիմնական արդյունքներ:</p> <p><b><u>Բաժին 2. Դիսկրետ մաթեմատիկա</u></b></p> <p><b>Թեմա 1.</b> Բուլյան ֆունկցիաներ, ադյուսակային, վեկտորային, երկրաչափական ներկայացումները: Էական և կեղծ փոփոխականներ: Հատուկ բանաձևային ներկայացումներ (դիզյունկտիվ, կոնյունկտիվ նորմալ ձևեր, Ժեգալկինի բազմանդամ): <b>Թեմա 2.</b> Բուլյան ֆունկցիաների դասի լրիվություն և փակություն: Հիմնական փակ դասերը (հաստատունները պահպանող, ինքնաերկակի, գծային և մոնոտոն ֆունկցիաների դասերը): Պոստի հայտանիշը լրիվության վերաբերյալ: Նախալրիվ դասեր և բազիս: <b>Թեմա 3.</b> Կոդավորման տեսության հիմնական հասկացությունները: Միարժեք սպակոդավորում: Այրուբենային կոդավորում: Արդյունավետ կոդավորում: Ֆանոյի կոդ: Հաֆմանի օպտիմալ կոդը:</p> |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Պետրոսյան Պ., Մկրտչյան Վ., Քամայան Ռ., Գրաֆների տեսություն, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., 2015:</li> <li>2. Տոնոյան Ռ., Դիսկրետ մաթեմատիկայի դասընթաց, Եր., 1999:</li> <li>3. Հակոբյան Հ., Մովսեսյան Հ., Բուլյան ֆունկցիաներ. Խնդիրների ժողովածու, ուսումնամեթոդական</li> </ol>   |

ձեռնարկ, Եր., 2017:

4. Харари Ф., Теория графов, М., Мир, 1973.
5. Гаврилов Г., Сапоженко А., Задачи и упражнения по дискретной математике, “Физматлит”, Москва, 2006.
6. Киселева Л., Смирнова Т., Функции алгебры логики в примерах и задачах: учебно-методическое пособие, Нижегородской ГУ, Нижний Новгород, 2008.
7. Новиков Ф., Дискретная математика для программистов., учебник, 2-ое издание, Изд. “Питер”, Санкт-Петербург, 2007.
8. Хаггарти Р., Дискретная математика для программистов, “Техносфера”, Москва, 2003.
9. Яблонский С., Введение в дискретную математику, узд. 4-ое, “Вусшая школа”, Москва, 2003.
10. Дискретная математика и математические вопросы кибернетики, под.ред. С.В.Яблонского и О.Б.Лупанова, Москва, Наука 1974.
11. Wegener I. The complexity of Boolean Functions, John Wiley & Sons Ltd, Stuttgart, 1987.

|  |                          |                 |
|--|--------------------------|-----------------|
| 1.0104/B21   | 2.ԷՀՄ և ծրագրավորում-2   | 3.5 ECTS կրեդիտ |
| 4.5 ժամ/շաբ.   | 5.15/60/0/75             |                 |
| 6.2-րդ կիսամյակ  | 7.Եզրամիակիչ գնահատումով |                 |
| <p><b>8.Դասընթացի նպատակն է</b> ուսանողներին ծրագրավորում սովորեցնել C++ բարձր կարգի օբյեկտային կողմնորոշված ալգորիթմական լեզվի հիման վրա: Տեղեկատվական տեխնոլոգիաների շրջանակներում ուսանողներին տալ տեսական և գործնական այնպիսի պատրաստում, որ նրանք կարողանան ճիշտ և արդյունավետ ընտրել անհրաժեշտ տեխնիկական, ալգորիթմական, ծրագրային և տեխնոլոգիական լուծումներ, կարողանան բացատրել նրանց գործունեության սկզբունքները և ճիշտ կիրառել գործնական աշխատանքում:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ուսումնասիրել օբյեկտներին կողմնորոշված ծրագրավորման հիմնական սկզբունքները և խնդիրների նախագծման և լուծման ժամանակ դրսևորել այդ սկզբունքների կիրառման կարողություններ,</li> <li>2. ձևավորել ուսանողների մոտ օբյեկտներին կողմնորոշված ծրագրավորման մտածողություն և ունակություններ,</li> <li>3. ձևավորել օբյեկտներին կողմնորոշված ծրագրավորման խնդիրների լուծման համար C++ լեզվով ծրագրերի մշակման, կարգաբերման, իրականացման և վերլուծության գործնական հմտություններ:</li> </ol>   |                          |                 |
| <p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Սահմանելու նոր կառուցվածքային տիպեր՝ հաշվի առնելով յուրաքանչյուր տիպի ստեղծման և օգտագործման առանձնահատկությունները, ներկայացնելու կառուցվածք, միավորում, ցուցիչ տիպերի յուրահատկությունները, բացատրելու դրանց անհրաժեշտությունը ծրագրավորման լեզվի մեջ, դրանց կիրառման հարմարավետությունն ու արդյունավետությունը,</li> <li>2. Թվարկելու օբյեկտային կողմնորոշված ծրագրավորման առանձնահատկությունները, բացատրելու C++ լեզվով գրվող օբյեկտային կողմնորոշված ծրագրերի կառուցման հիմնական սկզբունքները, ներկայացնելու օբյեկտների դասի կառուցվածքը, սահմանելու նրա անդամները, մեկնաբանելու դասի անդամների հասանելիության գաղափարը,</li> <li>3. Մեկնաբանելու C++ լեզվում առանձին գրադարանի տեսքով առկա շաբլոնային ֆունկցիաներն ու դասերը, դրանց օգտագործման տրամաբանությունը և օգտագործման ձևերը:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Նկարագրելու հիշողության հասցեների հետ աշխատող փոփոխականներ, ստեղծելու նոր բարդ կառուցվածքային տիպեր, աշխատելու նոր տիպի տվյալների հետ,</li> <li>2. Ծրագրային նախագծեր մշակելիս կիրառելու C++ լեզվի օբյեկտային կողմնորոշված ծրագրավորման սկզբունքները, խնդրի իրականացման համար ստեղծելու համապատասխան նախագիծ՝ նրա տարրերը պահելով համապատասխան գրադարաններում, նկարագրելու օբյեկտների դասեր (class) և ստեղծելու համապատասխան տիպի օբյեկտներ, դրանց վրա կիրառելու համապատասխան գործողություններ,</li> <li>3. Խնդիրների լուծման ընթացքում ազատ օգտվելու շաբլոնների ստանդարտ գրադարանից:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ուսումնասիրելու օբյեկտների հավաքածուների հատկությունները, նրանց մշակման համար առանձնացնելու համապատասխան մեթոդներ, մշակելու դասեր (class) տրված օբյեկտների հավաքածուի համար՝ ապահովելով նրանց համար համապատասխան գործողություններ,</li> <li>2. Կիրառելու C++ լեզվի օբյեկտային կողմնորոշված ծրագրավորման սկզբունքները՝ ծրագրային նախագծեր մշակելիս և ներդնելիս, ստեղծելու դասեր, դրանք պահելու առանձին գրադարաններում և</li> </ol> |                          |                 |

|  |
|--|
| <p>այլ խնդիրներում օգտագործելու դրանք,</p> <p>3. Խնդիրների լուծման ընթացքում ազատ օգտվելու շաբլոնների ստանդարտ գրադարանից, ճիշտ և գրագետ խոսելու ծրագրավորման և ալգորիթմական/տեղեկատվական տերմիններով և մատուցելու իր գիտելիքները ուրիշին:</p>   |
| <p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույնները.</b></p> <p><b>Ա1.</b> Ներկայացնելու և բացատրելու ծրագրավորման ժամանակակից սկզբունքները, մեթոդները (կառուցվածքային մեթոդ, օբյեկտակողմնորոշված մեթոդ, համակարգային մեթոդ, միկրոկոնտրոլերների և սարքերի ծրագրավորման մեթոդ), արդի տեղեկատվական տեխնոլոգիաները:</p> <p><b>Ա2.</b> Թվարկելու ծրագրավորման արդի լեզուները, դասակարգելու և ներկայացնելու դրանց առանձնահատկությունները, կիրառման ոլորտները, հիմնավորելու տարբեր խնդիրների ծրագրային իրականացման համար կոնկրետ լեզվի ընտրությունը:</p> <p><b>Բ3.</b> Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:</p> <p><b>Բ4.</b> Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:</p> <p><b>Բ5.</b> Նախագծելու անվտանգ և պաշտպանված հաշվողական համակարգեր և ցանցեր՝ կիրառելով համակարգչային և ցանցային ճարտարապետության առանձնահատկությունները, դրանց ապարատային և տարրային հենքի կառուցվածքը:</p> <p><b>Բ8.</b> Ուսումնասիրելու ծրագրային համակարգերի սպառման շուկաները, պլանավորելու, նախագծելու և կառուցելու շուկայում պահանջված ծրագրային համակարգեր, հավաքագրելու և վերլուծելու ծրագրային համակարգերի ներդրման և շահագործման ցուցանիշները:</p> <p><b>Գ1.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ3.</b> Որոշելու իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:</p> |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>➢ դասախոսություններ,</li> <li>➢ գործնական պարապմունքներ,</li> <li>➢ քննարկումներ,</li> <li>➢ տնային և անհատական տնային առաջադրանքներ,</li> <li>➢ ստուգողական աշխատանքներ,</li> <li>➢ ինքնուրույն աշխատանքներ:</li> </ul>   |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Եզրափակիչ գնահատումով դասընթաց,</b> առավելագույնը 20 միավոր (4+4+7+2+3):</p> <p><b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը 4 միավոր, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը 4 միավոր, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>Եզրափակիչ քննություն.</b> Բանավոր՝ առավելագույնը 7 միավոր քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 3 հարց. 1 տեսական հարց (առավելագույնը 2 միավոր), երկու խնդիր (1-ինը՝ 2 միավոր և 2-րդը՝ 3 միավոր):</p> <p><b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը 2 միավոր, կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջադրանքներից ձեռք բերումների համար՝ 1 միավոր և ստուգողական աշխատանքներից ձեռք բերումների համար՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>Ինքնուրույն աշխատանք.</b> առավելագույնը 3 միավոր, անհատական 2 տնային առաջադրանքների համար՝ 1. 5 միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p>   |
| <p><b>Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ցուցիչներ: Ցուցային թվաբանություն: Ֆունկցիայի ցուցիչ: Ֆունկցիայի վերաբեռնում: Ֆունկցիայի լուծողամբ որոշվող արգումենտներ: Ոչ միարժեքություն: <b>Թեմա 2.</b> Կառուցվածքներ (struct) և միավորումներ</p>   |

(union): Թվարկվող տիպ (enum): Կառուցվածքների զանգվածներ: **Թեմա 3.** Օբյեկտային կողմնորոշված ծրագրավորում: Դասեր և օբյեկտներ: **Թեմա 4.** Կոնստրուկտորներ, նրանց տեսակները (լրությամբ, պատճենի): Կոնստրուկտոր ֆունկցիայի վերաբեռումը: Դեստրուկտորներ: Կոնստրուկտորի և դեստրուկտորի կանչը, նրանց կատարման հաջորդականությունը: **Թեմա 5.** Օբյեկտների փոխանցումը ֆունկցիաներին, օբյեկտի վերադարձը ֆունկցիայից: Օբյեկտների վերագրում: Ընկեր (friend) ֆունկցիաներ և ընկեր դասեր: **Թեմա 6.** Դասի ստատիկ անդամներ: Օբյեկտների ցուցիչներ: This ցուցիչը: Հղումներ օբյեկտների վրա: **Թեմա 7.** Գործողությունների վերաբեռում: Գործողությունների վերաբեռումը ընկեր ֆունկցիաների և անդամ ֆունկցիաների միջոցով: **Թեմա 8.** Ժառանգում, դասերի պաշտպանված անդամներ: Բաց, պաշտպանված և փակ բազային դասեր: Վիրտուալ ֆունկցիաներ և պոլիմորֆիզմ: **Թեմա 9.** Մուտք/ելք-ի միջոցներ: Աշխատանք հոսքերի հետ: **Թեմա 10.** Շարժումային դասեր և ֆունկցիաներ: Մտանդարտ կոնտեյներային դասեր:

**Հիմնական գրականության ցանկ.**

1. Դարբինյան Կ., С ++ լեզվի ինքնուսուցման համառոտ ձեռնարկ, Եր. 2001:
2. Дейтел Х.М., Дейтел П.Дж., Как программировать на С++. М.: издательство «БИНОМ», 2000.
3. Страуструп Б., Язык программирования С++, Специальное издание. М., Бином-Пресс, 2007.
4. Сэвитч У., С++ в примерах, Пер. с англ. Москва, ЭКОМ, 1997.
5. Шилдт Г., "Искусство программирования на С++" \\ издательство: BHV-СПб, 2005.
6. Павловская Т.А, С/С++ Программирование на языке высокого уровня.- СПб Питер, 2001.
7. Подбельский В., Язык С++: Учебное пособие. Москва, Финансы и статистика, 1995.
8. Хомоненко А., Программирование на С++. Учебное пособие., изд-во: Альтекс, 2003

|   |  |                  |
|---|--|------------------|
| 1. 0105/B20   | 2. Մաթեմատիկական անալիզ և գծային հանրահաշվի տարրեր-2 | 3. 6 ECTS կրեդիտ |
| 4. 5 ժամ/շաբ.   | 5.45/30/0  |                  |
| 6.2-րդ կիսամյակ   | 7.Եզրափակիչ գնահատումով                              |                  |
| <p><b>8.Մոդուլի նպատակն է</b> ուսանողներին տալ գիտելիքներ հենքային Մաթեմատիկական Անալիզի-2-ից, որը ներառում է անորոշ և որոշյալ ինտեգրալները, դրանց հաշվման ձևերն ու մեթոդները, թվային շարքերը, դրանց զուգամիտությունը, ֆունկցիոնալ շարքերն ու Ֆուրյեի շարքերը: Այդ ձևավորվող գիտելիքները, կարողություններն ու հմտություններն յուրացումը ուսանողների կողմից և դրանց կիրառումը բնագիտության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառներում:</p> <p><b>Մոդուլի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հիմնավորել և խորացնել ուսանողների ձեռք բերած գիտելիքները մաթեմատիկական անալիզ-1-ից, յուրացնել նոր գաղափարներն ու մեթոդները:</li> <li>2. Ձևավորել կարողություններ մաթեմատիկական անալիզ-2-ից, հմտորեն հաշվել ինտեգրալներն ու հետազոտել շարքերը:</li> <li>3. Ձևավորել հմտություններ ստացած գիտելիքները այլ առարկաների մեջ կիրառելու:</li> <li>4. Ստացած գիտելիքները հիմք պետք է հանդիսանան բնագիտական և ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառում այլ առարկաների ուսումնասիրման համար:</li> </ol>   |  |                  |
| <p><b>9.Մոդուլի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Սահմանելու անորոշ և որոշյալ ինտեգրալներ, դրանց հաշվման ձևերն ու հատկությունները, ներկայացնելու ինտեգրելի ֆունկցիաների դասերը, որոշյալ ինտեգրալի կիրառությունները:</li> <li>2. Սահմանելու առաջին և երկրորդ սեռի անիսկակական ինտեգրալները, դրանց զուգամիտությունն ու հատկությունները:</li> <li>3. Սահմանելու թվային և ֆունկցիոնալ շարքեր, դրանց զուգամիտությունը, բացատրելու հավասարաչափ զուգամիտության գաղափարը, սահմանելու Ֆուրյեի շարք և թվարկելու Ֆուրյեի շարքի հատկությունները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հաշվելու անորոշ և որոշյալ ինտեգրալների, անորոշ և որոշյալ ինտեգրալներում կատարելու փոփոխականի փոխարինում ու մասերով ինտեգրում, հաշվելու պատկերի մակերեսը, պտտման մարմնի ծավալը և կորի աղեղի երկարությունը:</li> <li>2. Պարզելու առաջին և երկրորդ սեռի անիսկակական ինտեգրալների զուգամիտությունն ու հաշվել դրանք, կատարելու փոփոխականի փոխարինում անիսկակակ ինտեգրալներում:</li> <li>3. Պարզելու թվային շարքերի զուգամիտությունը, հաշվելու շարքի գումարը, որոշել թվային շարքի բացարձակ և պայմանական զուգամիտությունը, պարզելու ֆունկցիոնալ շարքի զուգամիտությունը, կետ առ կետ և հավասարաչափ զուգամիտությունը, Ֆուրյեի շարքի զուգամիտությունը:</li> </ol> <p><b>գ. քննհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> |  |                  |

|  |
|--|
| <ol style="list-style-type: none"> <li>1. Կատարելու թիմային աշխատանք:</li> <li>2. Հստակ ներկայացնելու միտքը:</li> <li>3. Օգտվելու տարբեր աղբյուրներից, վերլուծելու և դասակարգելու ստացած տեղեկատվությունը:</li> <li>4. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</li> </ol>   |
| <p><b>10. Մոդուլը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Բ1.</b> Լուծելու մասնագիտական ոլորտի խնդիրներ՝ օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար գաղափարները, մոդելները, սկզբունքները, դրույթները, խնդիրների լուծման եղանակները:</p> <p><b>Բ3.</b> Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ավգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:</p> <p><b>Բ4.</b> Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:</p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ5.</b> Մասնագիտական հանրություն կառուցելու տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ բանավոր ու գրավոր խոսք մայրենի և որևէ օտար լեզվով:</p> |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. դասախոսություն</li> <li>2. գործնական</li> <li>3. քննարկում</li> <li>4. զեկուցում:</li> </ol>  |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Ընթացիկ 2 քննություններ</b></p> <p>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ <b>4 միավոր</b> առավելագույն արժեքով: Տոմսը պարունակում է 6 հարց /2x0.25+1x0.5+3x1/ : Միավորների քայլը 0.25 է:</p> <p><b>Ինքնուրույն աշխատանքներ.</b> 2 ինքնուրույն աշխատանքներ՝ յուրաքանչյուրը առավելագույնը <b>2 միավոր</b>: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>Եզրափակիչ քննություն.</b> բանավոր է՝ առավելագույնը 8 միավոր, տոմսը պարունակում է 4 հարց՝ երկու տեսական հարց, յուրաքանչյուրը 2 միավոր, երկու խնդիր, յուրաքանչյուրը 2 միավոր: Գնահատման քայլը 0.25 է:</p>  |
| <p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Անորոշ ինտեգրալ, հաշվման հիմնական բանաձևերը և եղանակները: <b>Թեմա 2.</b> Որոշյալ ինտեգրալ, հաշվման հիմնական եղանակները, ինտեգրելի ֆունկցիաների դասեր: <b>Թեմա 3.</b> Կորի երկարություն, պատկերի մակերես, մարմնի ծավալ: <b>Թեմա 4.</b> Անիսկական ինտեգրալ, առաջին և երկրորդ սեռի ինտեգրալներ: <b>Թեմա 5.</b> Թվային շարքեր, զուգամիտության հայտանիշները: <b>Թեմա 6.</b> Ֆունկցիոնալ շարքեր և դրանց հատկությունները, հավասարաչափ զուգամիտություն: <b>Թեմա 7.</b> Աստիճանային և Ֆուրյեի շարքեր:</p>   |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Фихтенгольц Г., Курс интегрального и дифференциального исчисления, Физматгиз, Москва, 1969.</li> <li>2. Մուսոյան Վ., Մաթեմատիկական անալիզ, մաս I,II, Զանգակ, Եր., 2009, 2012:</li> <li>3. Գևորգյան Գ. և ուրիշներ, Մաթ. Անալիզի խնդրագիրք, Եր., 2007:</li> </ol>  |

|  |   |                 |
|--|---|-----------------|
| 1. 0305/B25  | 2. Մասնագիտական անզերեն                   | 3.4 ECTS կրեդիտ |
| 4. 4 ժամ/շաբ.  | 5. 0/60/0                                 |                 |
| 6. 3-րդ կիսամյակ   | 7. Առանց ընթացիկ քննությունների գնահատման |                 |
| <p><b>8. Դասընթացի նպատակն է.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• հարստացնել ուսանողների լեզվական գիտելիքները անզերեն լեզվից՝ լեզվի բոլոր ասպեկտներինում (կարդալ, գրել, ունկնդրել, խոսել),</li> <li>• զարգացնել ուսանողների հաղորդակցական հմտությունները՝ մասնագիտական թեմաներով միջազգային հաղորդակցման համար:</li> </ul> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. փոխանցել մասնագիտական գիտելիքների հիման վրա անզերեն լեզվով ճիշտ շարադրանք կառուցելու, ընթերցած և ունկնդրած մասնագիտական նյութի ընկալման և վերարտադրման հմտությունները ձեռք</li> </ol> |   |                 |

|  |
|--|
| բերելու սկզբունքները:  |
| <p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b><br/> <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Թվարկելու մասնագիտական ոլորտին առնչվող մեծ թվով բառեր:</li> <li>Բերելու նախադասության օրինակներ՝ վերոնշյալ բառապաշարով:</li> <li>Ընկալելու կարդացած և/կամ ունկնդրած նյութի հիմնական բովանդակությունը:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Վերարտադրելու մասնագիտական թեմայով կարդացած և /կամ ունկնդրած նյութի հիմնական բովանդակությունը:</li> <li>Կիրառելու մասնագիտական բառապաշարը ինքնուրույն բանավոր և գրավոր շարադրանք կազմելիս:</li> <li>Անգլերեն լեզվով լուսաբանելու մասնագիտական այլևայլ խնդիրներ:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Մասնագիտական հանրությանը ներկայացնելու ոլորտին առնչվող տեսասահիկներ, ռեֆերատներ, տվյալների վերլուծություններ, խնդիրների լուծման քայլեր և այլն:</li> <li>Ներկայացնելու թիմային, միջազգային, ինքնուրույն հետազոտական աշխատանքներ՝ ազատ հաղորդակցվելով անգլերեն լեզվով:</li> </ol> |
| <p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b><br/> <b>Բ6.</b> Հավաքագրելու մասնագիտական տեղեկատվություն ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ պահանջող տարբեր պարզ և բարդ խնդիրների լուծման համար՝ օգտագործելով հաղորդակցման և որոնողական ժամանակակից տարբեր համակարգեր, նորարարական մեթոդներով իրականացնելու հավաքագրված մասնագիտական տվյալների քանակական և որակական վերլուծություններ, կատարելու տրամաբանական եզրահանգումներ:<br/> <b>Գ1.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:<br/> <b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:<br/> <b>Գ5.</b> Մասնագիտական հանրություն կառուցելու տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ բանավոր ու գրավոր խոսք մայրենի և որևէ օտար լեզվով:</p>   |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>հաղորդակցական մեթոդ</li> <li>մտազրոհի մեթոդ</li> <li>ուսանողական պորտֆոլիո</li> <li>խմբային աշխատանք</li> <li>գրավոր և բանավոր թարգմանություն</li> <li>աշխատանք տեղեկագրով</li> <li>ռեֆերատ</li> <li>ինքնուրույն աշխատանք:</li> </ol>  |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b><br/> <b>Առանց ընթացիկ քննությունների գնահատման դասընթաց՝</b> առավելագույնը <b>20 միավոր (5+6+9):</b><br/> <b>Եզրափակիչ քննություն.</b> բանավոր՝ առավելագույնը <b>9 միավոր:</b> Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 3,3,3:<br/> <b>Ինքնուրույն աշխատանք.</b> առավելագույնը <b>6 միավոր</b> ռեֆերատի, պրեզենտացիայի և ուսանողական պորտֆոլիոյի համար:<br/> <b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>5 միավոր</b>, որը ուսանողը կարող է կուտակել կիսամյակի ընթացքում կատարած հետևյալ աշխատանքների համար.</p> <ul style="list-style-type: none"> <li>գրավոր և բանավոր թարգմանություններ,</li> <li>խմբային աշխատանք,</li> <li>3 ծրագրային տեքստի վերարտադրում և լուսաբանում,</li> <li>ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ:</li> </ul>   |
| <p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b><br/> Մասնագիտական բառապաշարի հարստացում հետևյալ ոլորտներին առնչվող տեքստերի և վարժությունների միջոցով.<br/> <b>Թեմա 1.</b> Համակարգչային ցանց, համացանց: <b>Թեմա 2.</b> Սլոգրիթմ, ծրագրավորման լեզուներ, C++ ծրագրավորման լեզու: <b>Թեմա 3.</b> Օպերացիոն համակարգեր, ԷՀՄ ճարտարապետություն: <b>Թեմա 4.</b> Կիրառական մաթեմատիկա, կիրառական մաթեմատիկական խնդիրներ: <b>Թեմա 5.</b> Գրաֆների տեսություն: Կոմբինատոր ալգորիթմներ: <b>Թեմա 6.</b> Արհեստական բանականություն, նեյրոնային ցանցեր: <b>Թեմա 7.</b> Ռոբոտաշինություն:</p>  |

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Karapetyan, K., Grigoryan, V., *English for University Students*. Yerevan: YSU, 2004
2. [https://is.muni.cz/www/408176/38744863/The\\_C\\_Programming\\_Language\\_Stroustrup\\_.pdf](https://is.muni.cz/www/408176/38744863/The_C_Programming_Language_Stroustrup_.pdf)
3. [https://en.wikipedia.org/wiki/Operations\\_research](https://en.wikipedia.org/wiki/Operations_research)
4. [https://en.wikipedia.org/wiki/Applied\\_mathematics](https://en.wikipedia.org/wiki/Applied_mathematics)
5. [https://en.wikipedia.org/wiki/Shortest\\_path\\_problem](https://en.wikipedia.org/wiki/Shortest_path_problem)
6. [https://en.wikipedia.org/wiki/Knapsack\\_problem](https://en.wikipedia.org/wiki/Knapsack_problem)
7. [https://en.wikipedia.org/wiki/Graph\\_theory](https://en.wikipedia.org/wiki/Graph_theory)
8. <https://en.wikipedia.org/wiki/Robotics>
9. [https://simple.wikipedia.org/wiki/Computer\\_network](https://simple.wikipedia.org/wiki/Computer_network)

|  |  |                 |
|--|--|-----------------|
| 1.0104/B24   | 2.Հետազոտման պլանավորում և մեթոդներ      | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ.   | 5.30/0/0                                 |                 |
| 6.3-րդ կիսամյակ  | 7.Առանց ընթացիկ քննությունների գնահատման |                 |
| <p><b>8.Դասընթացը նպատակ ունի.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ուսանողներին մոտ ձևավորել պատկերացումներ հետազոտական աշխատանքի իրականացման վերաբերյալ,</li> <li>• ծանոթացնել ժամանակակից հետազոտման պլանավորման եղանակներին,</li> <li>• ծանոթացնել ներկայումս օգտագործվող ծրագրավորման հետազոտական աշխատանքի մեթոդներին:</li> </ul>  |  |                 |
| <p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնել հետազոտական աշխատանք իրականացնելու կանոնակարգը:</li> <li>2. Ճանաչել կիրառվող մեթոդները:</li> <li>3. Բացատրել պլանավորման էությունը:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Տարբերակել օգտագործվող մեթոդներից մեկի առավելությունը:</li> <li>2. Գործնականում իրականացնել հետազոտական աշխատանքի ճիշտ պլանավորում:</li> <li>3. Կատարել հետազոտման մեթոդի ճիշտ ընտրություն:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատել հետազոտական խմբում:</li> <li>2. Կիրառել գիտելիքները պրակտիկայում:</li> <li>3. Վերլուծել խնդիրները և առաջարկել լուծման եղանակներ:</li> </ol>   |  |                 |
| <p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա1.</b>Ներկայացնելու և բացատրելու ծրագրավորման ժամանակակից սկզբունքները, մեթոդները (կառուցվածքային մեթոդ, օբյեկտակողմնորոշված մեթոդ, համակարգային մեթոդ, միկրոկոնտրոլերների և սարքերի ծրագրավորման մեթոդ), արդի տեղեկատվական տեխնոլոգիաները:</p> <p><b>Բ3.</b>Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ավգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:</p> <p><b>Բ4.</b>Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:</p> <p><b>Բ6.</b>Հավաքագրելու մասնագիտական տեղեկատվություն ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ պահանջող տարբեր պարզ և բարդ խնդիրների լուծման համար՝ օգտագործելով հաղորդակցման և որոնողական ժամանակակից տարբեր համակարգեր, նորարարական մեթոդներով իրականացնելու հավաքագրված մասնագիտական տվյալների քանակական և որակական վերլուծություններ, կատարելու տրամաբանական եզրահանգումներ:</p> <p><b>Գ3.</b>Որոշելու իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:</p> <p><b>Գ5.</b> Մասնագիտական հանրություն կառուցելու տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ բանավոր ու գրավոր խոսք մայրենի և որևէ օտար լեզվով:</p> |  |                 |
| <p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություն, քննարկումներ տեղում, գրույց, սլայդերի և տեսաֆիլմերի ցուցադրում,</li> <li>• ինքնուրույն աշխատանքների կատարում,</li> </ul>  |  |                 |

|   |
|---|
| <ul style="list-style-type: none"> <li>• տնային և անհատական տնային առաջադրանքներ,</li> <li>• ստուգողական աշխատանքներ,</li> <li>• ինքնուրույն աշխատանքներ:</li> </ul>  |
| <p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b><br/> <b>Առանց ընթացիկ գնահատման դասընթաց,</b> առավելագույնը 20 միավոր (9+8+3):<br/> <b>Եզրափակիչ քննություն.</b> Բանավոր՝ առավելագույնը <b>9 միավոր</b> քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը 3 միավոր:<br/> <b>Ինքնուրույն աշխատանք.</b> առավելագույնը <b>8 միավոր</b>, անհատական տնային առաջադրանք: Միավորների քայլը 0,5 է:<br/> <b>Մասնակցություն 3 միավոր:</b></p>   |
| <p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b><br/> <b>Թեմա 1.</b> Գիտահետազոտական աշխատանքների դասակարգումը: Հետազոտման նպատակի օբյեկտի ընտրություն: <b>Թեմա 2.</b> Հետազոտման ժամանակակից մեթոդները: Հետազոտման պլանավորում: <b>Թեմա 3.</b> Գրականության ուսումնասիրման եղանակներ և շտեմարաններ: <b>Թեմա 4.</b> Ուսումնասիրության հաջողականություն և ռացիոնալ եղանակների ընտրություն: <b>Թեմա 5.</b> Ստացված արդյունքների քննարկում և վերլուծություն: <b>Թեմա 6.</b> Հետազոտությունների ներկայացման տեքստային, մաթեմատիկական և գրաֆիկական միջավայրերը: <b>Թեմա 7.</b> Գիտական աշխատանքի ձևակերպում. հոդված, թեզիս, թեզ, զեկուցում, մենագրություն, ձեռնարկ, ատենախոսություն, հաշվետվություն և այլն, դրա մշակման եղանակները: <b>Թեմա 8.</b> Ուսանողների ինքնուրույն աշխատանքը, ձևերը և տեսակները:</p>   |
| <p><b>14.Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հովհաննիսյան Գ., Գալստյան Ն., Սողոմոնյան Մ., Մալխասյան Մ. Գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները. մեթոդական ցուցումներ . ԵՊՀ ուսանողական գիտական ընկերություն. - Երևան: ԵՊՀ հրատ., 2014. - 72 էջ:</li> <li>2. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Եր., ԵՊՀ հրատ., 2007, 296 էջ:</li> <li>3. Кузин Ф., Дипломная работа. Методика написания, правила оформления и порядок защиты. Методические указания, М., “Изд-во МПИ”, 1990, 50 с.</li> <li>4. Методические рекомендации по подготовке и написанию научных статей для авторитетных изданий, индексируемых международными базами SCOPUS/ WEB OF SCIENCE. <a href="https://lib.almu.edu.kz/images/uploads/files/db02bf4cb3b14d182e092e0648e65113.pdf">https://lib.almu.edu.kz/images/uploads/files/db02bf4cb3b14d182e092e0648e65113.pdf</a></li> <li>5. Меледина Т.В., Данина М.М. Методы планирования и обработки результатов научных исследований. Учебн. пособие, С-Петербург: Ун-т ИТМО, ИХиБТ, 2015. 110 с.</li> <li>6. Сидняев Н.И. Теория планирования эксперимента и анализ статистических данных, Юрайт, 2015. 495 с.</li> <li>7. Creswell, J.W. Educational research: Planning, conducting, and evaluating quantitative and qualitative research (3rd). Upper Saddle River, NJ: Prentice Hall.2008.</li> <li>8. Кукушкина. В.В. Организация научно-исследовательской работы студентов (магистров)//учебное пособие.-М.: НИЦ ИНФРА-М, 2014. 265 с.</li> <li>9. Петрова С.А., Ясинская И.А.. Основы исследовательской деятельности. -М.: ФОРУМ, 2010. 208 с.</li> </ol> |

|  |  |                  |
|--|--|------------------|
| 1. 0105/B23  | 2. Մաթեմատիկական անալիզ և զծային հանրահաշվի տարրեր – 3 | 3. 9 ECTS կրեդիտ |
| 4. 9 ժամ/շաբ.  | 5.75/60/0  |                  |
| 6. 3-րդ կիսամյակ   | 7.Եզրափակիչ գնահատումով                                |                  |
| <p><b>8.Մոդուլի նպատակն է.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ուսանողներին ծանոթացնել մաթեմատիկական անալիզի 3-ի հիմնական գաղափարներին՝ շատ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ հաշվին, անբացահայտ ֆունկցիաներին և բազմակի ու կորագիծ ինտեգրալներին:</li> <li>2. Ուսանողներին ծանոթացնել հանրահաշվի հիմնական գաղափարներին՝ զծային տարածություններ, ենթատարածություններ, զծային օպերատորներ, օպերատորի ներկայացման մատրից, այդ մատրիցի Սմիթի նորմալ տեսք, օպերատորների այլ հատկություններ:</li> </ol> <p><b>Մոդուլի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ուսանողներին ծանոթացնել շատ փոփոխականի ֆունկցիայի գաղափարին, նրա սահմանին ու անըդհատությանը: Ուսուցանել շատ փոփոխականի ֆունկցիայի մասնակի ածանցյալներն ու դիֆերենցիալը:</li> <li>2. Ծանոթացնել անբացահայտ ֆունկցիաներին, նրանց գոյության թեորեմին: Ուսուցանել անբացահայտ ֆունկցիաների ածանցյալները:</li> <li>3. Ծանոթացնել կորագիծ և մակերևութային ինտեգրալներին, Գրինի , Ստոքսի և Գաուս-Օստոգրադսկու բանաձևերին:</li> </ol> |  |                  |

|   |
|---|
| <ol style="list-style-type: none"> <li>4. Ուսուցանել կրկնակի և եռակի ինտեգրալները, դրանց հաշվման բանաձևերն ու հատկությունները, դրանցից բխող հետևանքները:</li> <li>5. Ուսանողներին ծանոթացնել գծային տարածություններին, ենթատարածություններին, ենթատարածությունների հետ կատարվող գործողություններին:</li> <li>6. Ծանոթացնել գծային օպերատորին, օպերատորի միջուկին, պատկերին, ռանգին, օպերատորի ներկայացման մատրիցին և սեփական արժեքին, վեկտորին:</li> <li>7. Գրել օպերատորի բնութագրիչ բազմանդամը, ցույց տալ օպերատորի ներկայացման մատրիցների կապը տարբեր բազիսներում:</li> <li>8. Ծանոթացնել Սմիթի նորմալ տեսքին, Ժորդանյան նորմալ տեսքին, Գրամ-Շմիդտի օրթոգոնալացման պրոցեսի կիրառմանը, ձևավորել քառակուսային ձևը կանոնական տեսքի բերելու կարողություն:</li> </ol>   |
| <p><b>9. Մոդուլի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Սահմանելու և տարբերակելու կորագիծ ինտեգրալները իրարից, ձևակերպելու ճանապարհից անկախ լինելու պայմանը:</li> <li>2. Սահմանելու և տարբերակելու մակերևույթային և բազմակի ինտեգրալները, դրանցից բխող հիմնական բանաձևերը:</li> <li>3. Սահմանելու շատ փոփոխականի ֆունկցիա, թվարկելու նրա հիմնական հատկությունները:</li> <li>4. Սահմանելու տեսության հիմնական գաղափարը՝ տարածության գաղափարը, թվարկելու և բնութագրելու տարբեր տարածություններ՝ գծային, էվքլիդեսյան և ունիտար:</li> <li>5. Սահմանելու օպերատորների տեսության հիմնական գաղափարները՝ գծային օպերատոր, օրթոգոնալ և սիմետրիկ օպերատորներ, օպերատորի միջուկ, պատկեր, ներկայացման մատրից, սեփական արժեք, սեփական վեկտոր, բնութագրիչ բազմանդամ, օրթոնորմալ բազիս, օրթոգոնալ լրացում և այլն:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հաշվելու շատ փոփոխականի և անբացահայտ ֆունկցիայի մասնական ածանցյալները, դիֆերենցիալները, հաշվելու ածանցյալն ըստ ուղղության և գրադիենտը:</li> <li>2. Հաշվելու առաջին և երկրորդ սեռի կորագիծ ինտեգրալները, կրկնակի և եռակի ինտեգրալները, Գրինի, Ստոքսի, Գաուս-Օստոգրադսկու բանաձևը կիրառել կոնկրետ խնդիրներ լուծելիս:</li> <li>3. Կատարելու գործողություններ ենթատարածությունների հետ, պարզելու հավասարումների համակարգի տեսակը, գտնելու նրա լուծումը, գրելու օպերատորի ներկայացման մատրիցը, նրանց կապը տարբեր բազիսներում:</li> <li>4. Գտնելու օպերատորի սեփական արժեքը, սեփական վեկտորը, բերելու մատրիցը Սմիթի նորմալ տեսքի, Ժորդանյան նորմալ տեսքի, կիրառելու Գրամ-Շմիդտի օրթոգոնալացման պրոցեսը, քառակուսային ձևը բերելու կանոնական տեսքի:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կատարելու թիմային աշխատանք:</li> <li>2. Հստակ ներկայացնելու միտքը:</li> <li>3. Օգտվելու տարբեր աղբյուրներից, վերլուծելու և դասակարգելու ստացած տեղեկատվությունը:</li> <li>4. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</li> </ol> |
| <p><b>10. Մոդուլը ը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Բ1.</b> Լուծելու մասնագիտական ոլորտի խնդիրներ՝ օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար գաղափարները, մոդելները, սկզբունքները, դրույթները, խնդիրների լուծման եղանակները:</p> <p><b>Բ3.</b> Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:</p> <p><b>Բ4.</b> Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:</p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ5.</b> Մասնագիտական հանրություն կառուցելու տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ բանավոր ու գրավոր խոսք մայրենի և որևէ օտար լեզվով:</p>  |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություն</li> </ul>  |

|   |
|---|
| <ul style="list-style-type: none"> <li>• գործնական</li> <li>• քննարկում</li> <li>• զեկուցում</li> <li>• ռեֆերատ:</li> </ul>   |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b><br/> <b>Եզրափակիչ գնահատումով մոդուլ,</b> առավելագույնը 20 միավոր (4+4+9+3):<br/> <b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 8 խնդիր (5+3), յուրաքանչյուրը՝ 0.5-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:<br/> <b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 8 խնդիր (5+3), յուրաքանչյուրը՝ 0.5-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:<br/> <b>Եզրափակիչ քննություն.</b> Բանավոր՝ առավելագույնը <b>9 միավոր</b> քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 6 (3+3) հարց. 3 (2+1) տեսական հարց (առավելագույնը 2 միավոր), 3 (2+1) խնդիր (առավելագույնը 1 միավոր):<br/> <b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>3 միավոր</b>, կիսամյակի ընթացքում իրականացրած 2 (1+1) ստուգողական աշխատանքներից ձեռք բերումների համար՝ 1,5 միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p>   |
| <p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b><br/> <b>Բաժին 1. Մաթեմատիկական անալիզ</b><br/> <b>Թեմա 1.</b> Մի քնի փոփոխականի ֆունկցիաների սահման, անընդհատություն, դիֆերենցելիություն: <b>Թեմա 2.</b> Մի քանի փոփոխականի ֆունկցիաների էքստրեմումները: <b>Թեմա 3.</b> Անբացահայտ ֆունկցիաներ, դրանց գոյությունն ու դիֆերենցելիությունը: <b>Թեմա 4.</b> Կորագիծ և կրկնակի ինտեգրալներ, դրանց հաշվման եղանակները: <b>Թեմա 5.</b> Մակերևութային և եռակի ինտեգրալներ, դրանց հաշվման եղանակները:<br/> <b>Բաժին 2. Գծային հանրահաշիվ</b><br/> <b>Թեմա 1.</b> Գծային տարածություններ: Գծային օպերատորներ <b>Թեմա 2.</b> Գծային հավասարումների համակարգեր: <b>Թեմա 3.</b> Գծային օպերատորի սեփական արժեքները, գծային օպերատորի մատրիցի նորմալ տեսքը, մատրիցի ժորդանյան նորմալ տեսքը, մատրիցի ժորդանյան նորմալ տեսքն իրական թվերի դաշտի դեպքում: <b>Թեմա 4.</b> Ունիտար և Էվրլիդեսյան տարածություններ, օրթոնորմալ բազիսներ, գծային հավասարումների համակարգեր, ունիտար(օրթոգոնալ) մատրիցներ, օրթոգոնալ լրացում, նորմալ օպերատորները Էվրլիդեսյան տարածություններում, ունիտար(օրթոգոնալ) օպերատորներ, հերմիտյան (սիմետրիկ) օպերատորներ: <b>Թեմա 5.</b> Քառակուսային ձևեր:</p> |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Գևորգյան Գ. և ուրիշներ., Մաթեմատիկական անալիզի խնդրագիրք, Եր., 2010:</li> <li>2. Մուսոյան Վ., Մաթեմատիկական անալիզ, Եր., 2009:</li> <li>3. Фихтенгольц Г.М., Курс дифференциального и интегрального исчисления, Наука, Москва, 1969.</li> <li>4. Ալեքսանյան Ա., Գծային հանրահաշիվ, Եր., 2006:</li> <li>5. Курош А., Курс высшей алгебры, Москва, 1975.</li> <li>6. Гельфанд И., Лекции по линейной алгебре, Москва, 1971.</li> <li>7. Беклемишев Д., “Курс аналитической геометрии и линейной алгебры”, Наука, Москва, 1976.</li> </ol>   |

|  |  |                   |
|--|--|-------------------|
| 1. 0105/B26  | 2. Ավտոմատներ, հաշվարկելիություն, լուծելիություն | 3. 10 ECTS կրեդիտ |
| 4. 9 ժամ/շաբ.  | 5. 60/75/0                                       |                   |
| 6. 3-րդ կիսամյակ   | 7. Եզրափակիչ գնահատումով                         |                   |
| <p><b>8. Մոդուլի նպատակն է</b> ուսանողներին ծանոթացնել հաշվարկների մաթեմատիկական տեսության հետ, ծանոթացնել ալգորիթմի գաղափարի երկու հիմնական ճշգրտումներին (կարգընթաց ֆունկցիաներ, Թյուրինգի մեքենաներ) և նրանց համարժեքությանը, էֆեկտիվ հաշվարկելիությանը և ալգորիթմական մտածելակերպին, արստրակտ հաշվողական մեքենաների (այսպես կոչված ավտոմատների) մի քանի տիպերին, դիտարկել ծրագրավորման լեզուների և թարգմանության մեթոդների ֆորմալ նկարագրման հիմունքները, շարահյուսորեն դեկավարվող անալիզի և ձևափոխման ֆորմալ մոդելները, մեթոդները և ալգորիթմները, ներկայացնել ծրագրավորման լեզուների և համակարգիչներում դրանց իրացման մեթոդների հետ կապված խնդիրների լայն շրջանակը:</p> <p>Մոդուլի ուսումնասիրությունը նպատակ ունի ուսանողների մոտ <b>ձևավորել.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ յուրահատուկ ալգորիթմական մտածողություն՝ քերականությունների և ավտոմատների միջոցով,</li> <li>✓ տիպային խնդիրների լուծման և դրանց արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ,</li> <li>✓ տրամաբանորոն վերլուծելու և մաթեմատիկորեն մոդելավորելու մշակույթ և կարողություններ,</li> <li>✓ առաջադրված խնդիրների լուծելիությունը հետազոտելու ունակություններ,</li> </ul> |  |                   |

- ✓ ժամանակակից մաթեմատիկական ապարատը կիրառելու ունակություններ,
- ✓ գրականությունից օգտվելու և յուրաքանչյուր թեմայի շրջանակներում անհրաժեշտ նյութերը փնտրելու հմտություններ:

**Դասընթացի խնդիրներն են.**

- ✓ Մեկնաբանել «ալգորիթմ» գաղափարի ձևաբանությունը, հետազոտել ֆորմալ ալգորիթմական համակարգերը:
- ✓ Ուսանողներին տալ գիտելիքներ ժամանակակից ինֆորմատիկայի խնդիրների, այլ գիտական դիսցիպլինների հետ նրա կապի, զարգացման ուղղությունների վերաբերյալ,
- ✓ Զարգացնել ալգորիթմական մտածողություն և նորովի տրամաբանություն, սովորեցնել հետազոտել ֆունկցիաները և վերլուծել ալգորիթմները, դիտարկվող խնդիրների համար կառուցել ֆունկցիաներ:
- ✓ Սովորեցնել ճիշտ ալգորիթմներ կազմելու տեխնիկա, ուղղորդել կատարելու ճիշտ դատողություններ և եզրակացություններ:
- ✓ Սովորեցնել աշխատել Թյուրինգի մեքենաների հետ և օգտագործել Թյուրինգի մեքենաները ֆունկցիաների հաշվարկելիությունն ուսումնասիրելու համար:
- ✓ Սովորեցնել հետազոտել մաթեմատիկական օբյեկտների (բազմությունների, հարաբերությունների, պրեդիկատների) ռեկուրսիվության, ռեկուրսիվ թվարկելիության հատկությունները:
- ✓ Ուսանողներին ընկալելի դարձնել ալորիթմորեն անլուծելիության գաղափարը դիտարկելով համապատասխան խնդիրներ:
- ✓ Ուսանողներին տալ հիմնարար գիտելիքներ ֆորմալ քերականությունների տեսության և թարգմանության մեթոդների, շարահյուսական անալիզի մեթոդների, թարգմանիչների կառուցման ժամանակակից մոտեցումների վերաբերյալ:
- ✓ Ուսանողների մոտ զարգացնել ֆորմալ քերականություններ կառուցելու տեխնիկա և ձևավորել ֆորմալ լեզուների համար թարգմանիչներ կառուցելու գործնական հմտություններ:
- ✓ Սովորեցնել ճիշտ վերլուծել իրավիճակային խնդիրները, և կատարել դրանց լուծման գործնական առաջարկներ:
- ✓ Ուսանողների մոտ զարգացնել ինքնուրույն աշխատելու և դժվար խնդիրների համար ինքնուրույն լուծումներ գտնելու, սեփական նախագծեր ներկայացնելու և պաշտպանելու կարողություններ:

Այս մոդուլն ապահովում է տեսական ինֆորմատիկայի վերաբերյալ հիմնական կրթությունը: Այս մոդուլի շրջանակներում ներկայացվող նյութն ուսանողների համար կապահովի հասանելիություն համակարգչային գիտության ցանկացած ոլորտ՝ հիմնված դիսկրետ-մաթեմատիկական ֆորմալ հիմքերի վրա, ինչպիսիք են ավտոմատների և ֆորմալ լեզուների տեսությունը կամ թարգմանիչների նախագծումը:

**9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. թվարկելու «ալգորիթմ» գաղափարի տարբեր ձևակերպումները, ալգորիթմների դասակարգման տարբեր մեթոդները, ալգորիթմների տեսության հիմնական հասկացությունները, սահմանելու օգտագործվող մաթեմատիկական օբյեկտները և նրանց հատկությունները,
2. ձևակերպելու տեսության հիմնական պնդումները, որոշելու նրանց ապացուցման մեթոդները, թվարկելու նրանց կիրառության հնարավոր ոլորտները,
3. ներկայացնելու ալգորիթմորեն լուծելի և անլուծելի խնդիրները,
4. մեկնաբանելու ֆորմալ քերականության գաղափարը և ուսումնասիրման առարկան, դասակարգելու ֆորմալ քերականությունները,
5. մեկնաբանելու թարգմանության տեսության մեջ ավտոմատների կիրառության սկզբունքները, դասակարգելու ավտոմատներն ըստ կիրառության որպես թարգմանիչներ և որպես ձևափոխիչներ, մեկնաբանելու ֆորմալ քերականությունների և ավտոմատների համապատասխանության խնդիրը,
6. թվարկելու լեքսիկ անալիզի, շարահյուսական անալիզի և քերականական անալիզի մեթոդները, մեկնաբանելու թարգմանության սխեմաների տրամաբանությունը, ներկայացնելու կիրառելի շարահյուսական վերլուծությունները,

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. մեկնաբանելու ալգորիթմների տեսության մաթեմատիկական ապարատը, ապացուցելու նրա հիմնական պնդումները, ներկայացնելու ուսումնասիրվող հիմնական խնդիրները և նրանց լուծման համար կառուցելու ալգորիթմներ,
2. կառուցելու Թյուրինգի մեքենա, ապացուցելու ֆունկցիաների կարգընթացությունը, կառուցելու համապիտանի ֆունկցիա ֆունկցիաների դիտարկվող բազմության համար,
3. ուսումնասիրելու տրված բազմության, հարաբերության, պրեդիկատի հատկությունները և ապացուցել նրանց ճանաչելիությունը և կիսաճանաչելիությունը,
4. մեկնաբանելու անլուծելիության խնդիրը,
5. աշխատելու ֆորմալ քերականությունների հետ, կատարելու քերականության ձևափոխություն և

վերլուծություն,

6. ֆորմալ լեզուների համար կառուցելու ճանաչող ավտոմատներ, պարզ շարահյուսորեն դեկավարվող թարգմանության սխեմաներ,
7. կատարելու շրջանկախ քերականության շարահյուսական վերլուծություն,
8. կառուցելու լեքսիկ անալիզի և շարահյուսական անալիզի դիգրամներ, կատարելու լեքսիկ անալիզի և շարահյուսական անալիզի փուլերի համապատասխանեցում:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. էլեկտրոնային գրադարաններից, ամսագրերից, համացանցից փնտրելու, վերլուծելու և համատեքստում մշակելու ալգորիթմների տեսության տեսական և կիրառական խնդիրների վերաբերյալ օգտակար գիտական և տեխնիկական տեղեկատվություն,
2. օգտագործելու մաթեմատիկական և ալգորիթմական մոդելավորման մեթոդները ալգորիթմների տեսության տարբեր բաժինների տեսական և կիրառական բնույթի խնդիրների վերլուծության ժամանակ,
3. կիրառելու ֆորմալ քերականությունների և ավտոմատների մասին ստացած տեսական գիտելիքները թարգմանիչների նախագծման խնդիրներում,
4. գնահատելու թարգմանիչների հետ աշխատանքի խնդրահարույց իրավիճակները,
5. առաջադրելու խնդիրներ և նրանց լուծման համար առաջարկել տարբերակներ:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**Ներկայացնելու և բացատրելու ծրագրավորման ժամանակակից սկզբունքները, մեթոդները (կառուցվածքային մեթոդ, օբյեկտակողմնորոշված մեթոդ, համակարգային մեթոդ, միկրոկոնտրոլերների և սարքերի ծրագրավորման մեթոդ), արդի տեղեկատվական տեխնոլոգիաները:

**Բ1.**Լուծելու մասնագիտական ոլորտի խնդիրներ՝ օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար գաղափարները, մոդելները, սկզբունքները, դրույթները, խնդիրների լուծման եղանակները:

**Բ3.**Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:

**Բ4.**Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:

**Բ6.**Հավաքագրելու մասնագիտական տեղեկատվություն ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ պահանջող տարբեր պարզ և բարդ խնդիրների լուծման համար՝ օգտագործելով հաղորդակցման և որոնողական ժամանակակից տարբեր համակարգեր, նորարարական մեթոդներով իրականացնելու հավաքագրված մասնագիտական տվյալների քանակական և որակական վերլուծություններ, կատարելու տրամաբանական եզրահանգումներ:

**Գ3.**Որոշելու իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություններ,
- գործնական պարապմունքներ,
- քննարկումներ,
- տնային և անհատական տնային առաջադրանքներ,
- ստուգողական աշխատանքներ,
- ինքնուրույն աշխատանքներ:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց, առավելագույնը 20 միավոր (4+4+7+2+3):

**1-ին ընթացիկ քննություն.** գրավոր՝ առավելագույնը **4 միավոր**, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայքայ 0,25 է:

**2-րդ ընթացիկ քննություն.** գրավոր՝ առավելագույնը **4 միավոր**, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայքայ 0,25 է:

**Եզրափակիչ քննություն.** Բանավոր՝ առավելագույնը **7 միավոր** քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 3 հարց. 1 տեսական հարց (առավելագույնը 2 միավոր), երկու խնդիր (1-ինը՝ 2 միավոր և 2-րդը՝ 3 միավոր):

**Ընթացիկ ստուգումներ.** առավելագույնը **2 միավոր**, կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջադրանքներից ձեռք բերումների համար՝ 1 միավոր և ստուգողական աշխատանքներից ձեռք

|   |
|---|
| <p>բերումների համար՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,25 է:<br/> <b>Ինքնուրույն աշխատանք</b> առավելագույնը <b>3 միավոր</b>, անհատական 2 տնային առաջադրանքների համար՝ 1.5 միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p>   |
| <p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b><br/> <b>Բաժին 1. Ալգորիթմների տեսություն</b><br/> <b>Թեմա 1.</b> Գյոդելի ձևաբանությունը (ֆորմալիզացիան). ալգորիթմի ինտուիտիվ գաղափարի ճշգրտման անհրաժեշտությունը, կարգընթաց (ռեկուրսիվ) ֆունկցիաների սահմանումը, նրանց հատկությունները, Չյորչի թեզի հիմնավորումը: <b>Թեմա 2.</b> Թյուրինգի ձևաբանությունը, կարգընթաց ֆունկցիաների հաշվարկելիությունն ըստ Թյուրինգի: Թյուրինգի մեքենայի աշխատանքային գործընթացի թվաբանականացում (Գյոդելի համարակալում), համապիտանի (ունիվերսալ) ֆունկցիա և նրա կառուցման հնարավորությունը, անշարժ կետի մասին և S-m-n թեորեմները: <b>Թեմա 3.</b> Ճանաչելի (ռեկուրսիվ) բազմություններ և հարաբերություններ, նրանց հատկությունները, Ռայսի թեորեմը, Կանտորի համարակալումը: <b>Թեմա 4.</b> Կիսաճանաչելի (ռեկուրսիվ թվարկելի) բազմություններ, հարաբերություններ, նրանց հատկությունները, Պոստի թեորեմը: <b>Թեմա 5.</b> Հարաբերության պրոյեկցիա, ֆունկցիայի գրաֆիկ: <b>Թեմա 6.</b> Անլուծելի պրոբլեմներ:<br/> <b>Բաժին 2. Թարգմանության տեսություն</b><br/> <b>Թեմա 1.</b> Ֆորմալ քերականություններ և լեզուներ: <b>Թեմա 2.</b> Անցումների գրաֆներ, վերջավոր ավտոմատներ: <b>Թեմա 3.</b> Կանոնավոր բազմություններ և արտահայտություններ: <b>Թեմա 4.</b> Ալգորիթմական պրոբլեմներ վերջավոր ավտոմատների համար: <b>Թեմա 5.</b> Շրջանկախ քերականություններ և պահունակային հիշողությամբ ավտոմատներ: <b>Թեմա 6.</b> Թարգմանություններ: <b>Թեմա 7.</b> Շարահյուսական վերլուծություն: Քերականությունների անալիզի խնդիրները:</p> |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Նիգիլյան Ս., Խաչոյան Լ., Հակոբյան Վ., Սարգսյան Լ., Թարգմանության տեսության դասընթացի խնդիրների լուծման մեթոդական ցուցումներ, Եր., 2007:</li> <li>2. Բոլիբեկյան Հ., Մովսիսյան Հ., Չուբարյան Ա. Ալգորիթմների տեսության խնդիրների ժողովածու (մեթոդական ձեռնարկ), Եր., 2008:</li> <li>3. Роджерс Х.: Теория рекурсивных функций и эффективная вычислимость. Мир, Москва, 1972г. (2012 г.)</li> <li>4. Лавров И., Л.Максимова: Задачи по теории множеств, математической логике и теории алгоритмов, Наука, Москва, 1975г.</li> <li>5. Мальцев А., Алгоритмы и рекурсивные функции, Наука, Москва, 1986г.</li> <li>6. Сипсер М., Введение в теорию вычислений, 2-е издание, издательство PWS, 1997 г.</li> <li>7. Рейурод В. Дж. – Смит: Теория формальных языков. (Вводный курс), Радио и связь, Москва, 1988 г.</li> <li>8. А. Ахо, Дж.Ульман: Теория Синтаксического анализа, перевода и компиляции. (том 1, Синтаксический анализ ), „Мир“, Москва, 1978г.</li> <li>9. Хопкрофт Дж., Мотвани Р. , Ульман Дж. , Введение в теорию автоматов, языки и вычисления, 3-е издание, Пирсон, 2006.</li> </ol>  |

|   |                          |                  |
|---|--------------------------|------------------|
| 1. 0105/B28   | 2. Կումպլեքս անալիզ      | 3. 5 ECTS կրեդիտ |
| 4. 5 ժամ/շաբ.   | 5. 45/30/0               |                  |
| 6.4-րդ կիսամյակ   | 7. Եզրափակիչ գնահատումով |                  |
| <p><b>8. Մոդուլի նպատակն է</b> ուսանողներին ծանոթացնել կոմպլեքս անալիզի հիմնական գաղափարներին՝ անալիտիկ և հարմոնիկ ֆունկցիաներին և նրանց հատկություններին, Կոշիի ինտեգրալային բանաձևին և ինտեգրալային թեորեմին, Լորանի շարքին և մեկուսացված եզակի կետերին, մնացքների տեսությանն ու նրանց կիրառություններին:</p> <p><b>Մոդուլի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ուսանողներին ծանոթացնել կոմպլեքս թվերին, նրանց տեսքերին և նրանց հետ կատարվող գործողություններին.</li> <li>2. Ծանոթացնել անալիտիկ և հարմոնիկ ֆունկցիաներին և նրանց հատկություններին.</li> <li>3. Ծանոթացնել կոմպլեքս փոփոխականի ֆունկցիայի ինտեգրալին, Կոշիի ինտեգրալային թեորեմին ու ինտեգրալային բանաձևին.</li> <li>4. Ծանոթացնել Լորանի շարքին և մեկուսացված եզակի կետերին:</li> <li>5. Դասակարգել մեկուսացված եզակի կետերը:</li> <li>6. Ծանոթացնել մնացքներին և նրանց կիրառություններին:</li> </ol> |                          |                  |
| <p><b>9. Մոդուլի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b><br/> <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Սահմանելու կոմպլեքս թիվ ու կոմպլեքս փոփոխականի ֆունկցիա, անալիտիկ և հարմոնիկ</li> </ol>  |                          |                  |

|  |
|--|
| <p>ֆունկցիաներ, ներկայացնելու նրանց հատկությունները, կոմպլեքս փոփոխականի ֆունկցիայի ինտեգրալը, Կոշիի ինտեգրալային թեորեմն ու ինտեգրալային բանաձևը.</p> <p>2. Սահմանելու Լորանի շարք, բնութագրելու մեկուսացված եզակի կետերը, ներկայացնելու մնացքների թեորեմն ու նրա կիրառությունները:</p> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <p>1. Կատարելու գործողություններ կոմպլեքս թվերի, անալիտիկ և հարմոնիկ ֆունկցիաների հետ, հաշվելու կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաների արժեքները:</p> <p>2. Ստանալու կոմպլեքս փոփոխականի ֆունկցիայի ինտեգրալը կիրառելով Կոշիի ինտեգրալային թեորեմը և մնացքների տեսության տարրերը:</p> <p>3. Վերլուծելու կոմպլեքս փոփոխականի ֆունկցիան Լորանի շարքի և դասակարգելու մեկուսացված եզակի կետերը:</p> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <p>1. Աշխատելու թիմում:</p> <p>2. Հստակ ներկայացնելու միտքը:</p> <p>3. Օգտվելու տարբեր աղբյուրներից, վերլուծելու և դասակարգելու ստացած տեղեկատվությունը:</p> <p>4. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>  |
| <p><b>10. Մոդուլը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Բ1.</b> Լուծելու մասնագիտական ոլորտի խնդիրներ՝ օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար գաղափարները, մոդելները, սկզբունքները, դրույթները, խնդիրների լուծման եղանակները:</p> <p><b>Բ3.</b> Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:</p> <p><b>Բ4.</b> Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:</p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ5.</b> Մասնագիտական հանրություն կառուցելու տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ բանավոր ու գրավոր խոսք մայրենի և որևէ օտար լեզվով:</p> |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Դասախոսություն</li> <li>• գործնական</li> <li>• քննարկում</li> <li>• զեկուցում</li> <li>• ռեֆերատ:</li> </ul>   |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Ընթացիկ քննություններ</b>՝ Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Տոմսը պարունակում է 6 հարց /4x0.5+2x1/ : Միավորների քայլը 0.25 է:</p> <p><b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը 2 միավոր, կիսամյակի ընթացքում իրականացրած 2 (1+1) ստուգողական աշխատանքներից ձեռք բերումների համար՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>Մասնակցությունը</b>՝ առավելագույնը 2 միավոր:</p> <p><b>Եզրափակիչ քննության</b> . տոմսը պարունակում է 4 հարց՝ երկու տեսական հարց, յուրաքանչյուրը 2 միավոր, երկու խնդիր, յուրաքանչյուրը 2 միավոր: Գնահատման քայլը 0.25 է:</p>  |
| <p><b>13. Մոդուլը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Կոմպլեքս թվեր և գործողություններ դրանց հետ: <b>Թեմա 2.</b> Կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաներ, անընդհատություն, ածանցյալ, ինտեգրալ: <b>Թեմա 3.</b> Անալիտիկ ֆունկցիաների տեսության հիմնական թեորեմը. Կոշիի ինտեգրալային թեորեմը: <b>Թեմա 4.</b> Կոշիի ինտեգրալային բանաձև: <b>Թեմա 5.</b> Կոշիի տիպի ինտեգրալ: <b>Թեմա 6.</b> Անալիտիկ ֆունկցիաների հաջորդականություններ և շարքեր: <b>Թեմա 7.</b> Լորանի շարք: <b>Թեմա 8.</b> Մնացքների տեսությունը: <b>Թեմա 9.</b> Ֆունկցիայի լոգարիթմական մնացք և նրա կիրառությունները:</p>   |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ջարարյան Մ., Կոմպլեքս անալիզ, Եր., 2016:</li> <li>2. Привалов И., Введение в теорию функций комплексной переменной, Наука, Москва, 1971.</li> <li>3. Бицадзе А., Основы теории аналитических функций комплексной переменной, Наука, Москва, 1987.</li> </ol>   |

|   |   |                  |
|---|---|------------------|
| 1. 0105/B29   | 2. Համակարգիչների տարրային հենքի ֆիզիկա և էլեկտրոնիկա | 3. 8 ECTS կրեդիտ |
| 4. 8 ժամ/շաբ.   | 5. 75/30/15   |                  |
| 6. 4-րդ կիսամյակ  | 7. Եզրափակիչ գնահատումով                              |                  |
| <b>8.Մոդուլի նպատակն է</b>  |   |                  |
| <ul style="list-style-type: none"> <li>➤ ձևավորել բնագիտական աշխարհայացք՝ ծանոթացնելով նրանց բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափություններին և զարգացման ներկա միտումներին,</li> <li>➤ զարգացնել պատճառ-հետևանք կապի մասին ունեցած գիտելիքներն ու կարողությունները,</li> <li>➤ տեղեկացնել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման գործում ֆիզիկական երևույթների կիրառության և նրանց ներդրման մասին:</li> <li>➤ Ծանոթացնել էլեկտրոնիկայի ուսումնասիրության մեթոդներին, սկզբունքներին և զարգացման ներկա միտումներին:</li> <li>➤ Զարգացնել էլեկտրամագնիսական շղթաներում պատճառահետևանքային կապի մասին ունեցած գիտելիքներն ու կարողությունները:</li> <li>➤ Տեղեկացնել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտում ռադիոտեխնիկական համակարգերի, միկրոէլեկտրոնիկայի կիրառության, նանոտեխնոլոգիաներին և նրանց ընձեռած հնարավորությունների մասին:</li> <li>➤ քննարկել SS ոլորտում միկրոսխեմաների ու ռադիոտեխնիկական այլ սարքավորումների օգտագործման առկա օրինակները և նրանց հնարավոր զարգացումները:</li> <li>➤ ուսանողներին տալ տեսական գիտելիքներ տրամաբանական էլեմենտների, ինչպես նաև նրանցով ստեղծած համակարգչային սարքերի և համակարգիչների վերաբերյալ:</li> </ul> |   |                  |
| <b>Մոդուլի ուսումնասիրությունը նպատակ ունի ուսանողների մոտ <u>ձևավորել</u>.</b>   |   |                  |
| <ul style="list-style-type: none"> <li>➤ յուրահատուկ տրամաբանական մտածողություն՝ հավանականային և վիճակագրական գաղափարների միջոցով,</li> <li>➤ տիպային խնդիրների լուծման և դրանց արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ,</li> <li>➤ տրամաբանորոն վերլուծելու և մաթեմատիկորեն մոդելավորելու մշակույթ և կարողություններ,</li> <li>➤ առաջադրված խնդիրների լուծելիությունը հետազոտելու ունակություններ,</li> <li>➤ գրականությունից օգտվելու և յուրաքանչյուր թեմայի շրջանակներում անհրաժեշտ նյութերը փնտրելու հմտություններ:</li> </ul>   |   |                  |
| <b><u>Դասընթացի խնդիրներն են.</u></b>   |   |                  |
| <ol style="list-style-type: none"> <li>1. Ուսանողներին ծանոթացնել բնագիտության զարգացման փուլերին:</li> <li>2. Բացահայտել ֆիզիկայի հիմնական օրենքների իմաստներն ու կիրառության ոլորտները:</li> <li>3. Քննարկել SS ոլորտում ֆիզիկական սարքավորումների օգտագործման առկա օրինակները և նրանց հնարավոր զարգացումները:</li> <li>4. ուսանողներին ծանոթացնել միկրոէլեկտրոնիկայի զարգացման փուլերին,</li> <li>5. բացատրել միկրոէլեկտրոնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի և սխեմատեխնիկայի հիմնական գաղափարների իմաստներն ու կիրառության հնարավորությունները,</li> <li>6. բացատրել ժամանակակից միկրոէլեկտրոնիկայում օգտագործվող նյութերի էլեկտրոնային տեսության հիմունքները, նրանցում ընթացող տարբեր օրինակ, ֆոտոէլեկտրական երևույթների որակական և քանակական նկարագրությունը,</li> <li>7. Ծանոթացնել համակարգչի ֆիզիկական մոդելին,</li> <li>8. Ծանոթացնել տրամաբանական փոփոխականներին և ֆունկցիաներին,</li> <li>9. Բացատրել տրամաբանական սարքերի աշխատանքը,</li> <li>10. Բացատրել տրամաբանական սարքերով կազմված սխեմաների աշխատանքը,</li> <li>11. Տալ պատկերացում տարբեր կառուցվածքով թվային գեներատորների մասին:</li> </ol>  |   |                  |
| <b>9.Դասընթացի ավարտին ուսանողը <u>ունակ կլինի՝</u></b>   |   |                  |
| <b><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></b>   |   |                  |
| <ol style="list-style-type: none"> <li>1. Սահմանելու ֆիզիկայի հիմնարար օրենքները:</li> <li>2. Նկարագրելու պրոցեսների պատճառահետևանքային կապերը:</li> <li>3. Ներկայացնելու SS ոլորտի զարգացման գործում ֆիզիկայի նորագույն նվաճումների կիրառության օրինակներ:</li> <li>4. Թվարկելու միկրոէլեկտրոնիկայում կիրառվող կիսահաղորդչային սարքերի տեսակները և նրանց</li> </ol>  |   |                  |

հիմնական բնութագրերը:

5. Նկարագրելու նրանց հիմքում ընկած ֆիզիկական երևույթներն ու ընթացող պրոցեսների պատճառահետևանքային կապերը:
6. Մատնանշելու SS ոլորտի զարգացման գործում սխեմատիզմիկայի, միկրոէլեկտրոնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի նորագույն նվաճումների կիրառության օրինակներ:
7. բացատրելու տրամաբանական սխեմաների աշխատանքը, նրանցով իրականացվող տրամաբանական գործողությունները,
8. բացատրելու և բնութագրելու կոմբինացիոն, հաջորդական և ունիվերսալ տրամաբանական սարքերի աշխատանքը,
9. ներկայացնելու համակարգիչների կառուցվածքը, թվարկելու նրանց առանձին սարքերը և բացատրելու այդ սարքերի տարրային հենքը:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. Կիրառելու բնության համակարգերի կառուցվածքի, զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները տարբեր հետազոտություններում:
2. Կատարելու հաշվարկներ որոշակի գործընթացների վերաբերյալ և տալու որակական ու քանակական գնահատական ֆիզիկական երևույթների վերջնական արդյունքների մասին:
3. Կատարելու համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:
4. Տարբեր հետազոտություններում կիրառելու միկրոտարրերի և էլեկտրոնային համակարգերի կառուցվածքի, զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները:
5. Կատարելու հաշվարկներ որոշակի գործընթացների վերաբերյալ և տալ որակական ու քանակական գնահատական ֆիզիկական երևույթների վերջնական արդյունքների մասին:
6. Կատարելու համապատասխան եզրակացություններ էլեկտրամագնիսական առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:
7. կառուցելու տրամաբանական գործողությունն իրականացնող սխեմաներ և ստանալու տրված սխեմային համապատասխանող տրամաբանական ֆունկցիան,
8. կատարելու համակարգչի և համակարգիչը կազմող սարքերի ֆիզիկական և տրամաբանական վերլուծություն, կատարելու նրանց աշխատանքի տեսական հաշվարկներ:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. էլեկտրոնային գրադարաններից, ամսագրերից, համացանցից փնտրելու, վերլուծելու և համատեքստում մշակելու ֆիզիկայի տեսական և կիրառական խնդիրների վերաբերյալ օգտակար գիտական և տեխնիկական տեղեկատվություն,
2. Աշխատելու թիմում:
3. Հստակ ներկայացնելու վերլուծական միտքը:
4. Օգտվել գրականության աղբյուրներից, դասակարգել և վերլուծել ստացած տեղեկությունը:
5. Կատարել ստեղծագործական աշխատանք՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը:
6. Առաջադրելու խնդիրներ և նրանց լուծման համար առաջարկել տարբերակներ:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա4.** Ներկայացնելու գիտական և տնտեսական տարբեր ոլորտներում ծրագրային համակարգերի կիրառման սկզբունքները, բացատրելու և վերլուծելու դրանց ներդրման արդյունավետությունը և ստացվող ձեռքբերումները, բերելու ծրագրային համակարգերի կիրառման հայտնի օրինակներ:

**Ա5.** Ներկայացնելու և նկարագրելու ժամանակակից համակարգիչների, գերհամակարգիչների և համակարգչային ցանցերի ճարտարապետական առանձնահատկությունները, անվտանգության և պաշտպանվածության ապահովման սկզբունքները և մեթոդները, կիրառման ոլորտները և ուղղությունները, մեկնաբանելու դրանց օգտագործման հնարավորությունները ՀՀ-ում և տարածաշրջանում:

**Ա7.** Բացահայտելու, ներկայացնելու, վերլուծելու և մեկնաբանելու ծրագրային համակարգերի, ապարատային և ծրագրային լուծումների մարքեթինգային բնութագրիչները և ցուցանիշները:

**Բ3.** Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:

**Բ4.** Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:

**Բ5.** Նախագծելու անվտանգ և պաշտպանված հաշվողական համակարգեր և ցանցեր՝ կիրառելով

|  |
|--|
| <p>համակարգչային և ցանցային ճարտարապետության առանձնահատկությունները, դրանց ապարատային և տարրային հենքի կառուցվածքը:</p> <p><b>Բ6.</b> Հավաքագրելու մասնագիտական տեղեկատվություն ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ պահանջող տարբեր պարզ և բարդ խնդիրների լուծման համար՝ օգտագործելով հաղորդակցման և որոնողական ժամանակակից տարբեր համակարգեր, նորարարական մեթոդներով իրականացնելու հավաքագրված մասնագիտական տվյալների քանակական և որակական վերլուծություններ, կատարելու տրամաբանական եզրահանգումներ:</p> <p><b>Գ1.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ3.</b> Որոշելու իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:</p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p>     |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություն</li> <li>• գործնական պարապմունք</li> <li>• լաբորատոր աշխատանք</li> <li>• տնային աշխատանք</li> <li>• քննարկում</li> <li>• զեկուցում</li> <li>• ինքնուրույն աշխատանք</li> <li>• խմբային աշխատանք:</li> </ul>  |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Եզրափակիչ գնահատումով դասընթաց,</b> առավելագույնը <b>20 միավոր</b> (4+4+7+2+3):</p> <p><b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է , յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>Եզրափակիչ քննություն.</b> Բանավոր՝ առավելագույնը <b>7 միավոր</b> քննական տոմսի համար, որը պարունակում է 3 տեսական հարց (2+2+3):</p> <p><b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>2 միավոր</b>, կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջադրանքներից ձեռք բերումների համար՝ 1 միավոր և ստուգողական աշխատանքներից՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p> <p><b>Ինքնուրույն աշխատանք</b> առավելագույնը <b>3 միավոր</b>, անհատական տնային առաջադրանքի համար՝ 2 միավոր և գործնական դասընթացներին ցուցաբերած ակտիվության և առաջադիմության համար՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p>   |
| <p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Բաժին 1. Էլեկտրականագնիսականություն</b></p> <p><b>Թեմա 1.</b> Էլեկտրաստատիկա: <b>Թեմա 2.</b> Էլեկտրական հոսանք: <b>Թեմա 3.</b> Մագնիսական դաշտ: <b>Թեմա 4.</b> Էլեկտրամագնիսական մակաձուլ: <b>Թեմա 5.</b> Էլեկտրամագնիսական տատանումներ և ալիքներ:</p> <p><b>Բաժին 2. Էլեկտրոնիկա</b></p> <p><b>Թեմա 1.</b> Այուրերի էլեկտրոնային տեսության հիմունքները: <b>Թեմա 2.</b> Պինդ մարմինների կառուցվածքը: <b>Թեմա 3.</b> Կիսահաղորդիչների հատկությունները: <b>Թեմա 4.</b> Կիսահաղորդչային սարքեր: <b>Թեմա 5.</b> Միկրոսխեմաներ: <b>Թեմա 6.</b> Նանոէլեկտրոնային սարքեր:</p> <p><b>Բաժին 3. Համակարգիչների տարրային հենքի ֆիզիկա</b></p> <p><b>Թեմա 1.</b> Վերացական (ձևական) տրամաբանահանրահաշվական տարրային հենքեր: <b>Թեմա 2.</b> Ֆիզիկական տարրային հենքեր: <b>Թեմա 3.</b> Միկրոէլեկտրոնային տարրային հենքեր: <b>Թեմա 4.</b> Տրանզիստորային և ոչ տրանզիստորային տարրային հենքեր: <b>Թեմա 5.</b> Ֆիզիկական տրամաբանություն և նրա տարրային հենքերը: <b>Թեմա 6.</b> Հիշող սարքեր և նրանց տարրային հենքերը: <b>Թեմա 7.</b> Ոչ դասական տրամաբանության տարրային հենքեր. բազմարժեք, անհստակ, անորոշականացված:</p> |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կալաշնիկով Ս., Էլեկտրականություն և մագնիսականություն, Մոսկվա, 1970:</li> <li>2. Цедрик М.С., Сборник задач по курсу общей физики», Москва, 1989.</li> </ol>  |

3. Հարությունյան Վ., Միկրոէլեկտրոնիկայի ֆիզիկական հիմունքները, Եր., 1995:

4. Վարդանյան Ռ., Սաստրյան Հ., Տրավաջյան Ս., Միկրոէլեկտրոնիկայի հիմունքներ: Լաբորատոր աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ, Եր., 2009:

5. Аваев Н., Наумов Ю., Фролкин В., Основы микроэлектроники, учебник для ВУЗ-ов, Москва, Радио и связь, 1991.

6. Титце У., Шенк К., Полупроводниковая схемотехника, Москва, Мир, 1982.

|                  |  |                  |
|------------------|--|------------------|
| 1. 0104/B27      | 2 ԷՀՄ ճարտարապետություն և օպերացիոն համակարգեր /ՀԲ | 3. 8 ECTS կրեդիտ |
| 4. 8 ժամ/շաբ.    | 5. 60/60/0   |                  |
| 6. 4-րդ կիսամյակ | 7. Եզրափակիչ գնահատումով                           |                  |

**8. Մոդուլի նպատակն է** ներկայացնել ժամանակակից ԷՀՄ-ի բազմամակարդակ ճարտարապետությունը, կառուցվածքային հիմունքները, ձևավորել հիմնավոր պատկերացումներ և տալ գիտելիքներ ժամանակակից օպերացիոն համակարգերի կազմակերպման ոլորտում, ներկայացնել օպերացիոն համակարգերի ներքին կառուցվածքը, հիմնական ֆունկցիաները: , այն հիմնահարցերը և խնդիրները, որոնք առաջանում են օպերացիոն համակարգերի նախագծման ժամանակ, ձևավորել հմտություններ համակարգիչների և օպերացիոն համակարգերի ճարտարապետական և ծրագրային լուծումների հետազոտման և վերլուծության ուղղությամբ:

**Մոդուլի խնդիրներն են.**

1. Ուսումնասիրել տվյալների ներկայացման եղանակները, ասեմբլեր լեզվի առանձնահատկությունները և հրամանների համակարգը:
2. Բացատրել ընդհատումների մեխանիզմը, իրական ռեժիմում աշխատանքի սկզբունքները:
3. Ձևավորել կարողություններ վիրտուալ միջավայրում առանձին ֆունկցիոնալ տարրերի աշխատանքին ծանոթանանլու և թվային հանգույցներ նախագծելու համար:
4. Ուսումնասիրել օպերացիոն համակարգերի մոդուլային կառուցվածքը և նախագծման սկզբունքները:
5. Ներկայացնել օպերացիոն համակարգերի հիմնական գործառնությունները և օգտատիրոջը հասանելի համակարգային ֆունկցիաները:
6. Ներկայացնել տարբեր ռեժիմներում աշխատող օպերացիոն համակարգերը (փաթեթային, փոխգործուն, իրական ժամանակի) և դրանց առանձնահատկությունները:
7. Ուսումնասիրել բազմախնդրային օպերացիոն համակարգերի հիմնական հասկացությունները՝ պրոցեսներ, հոսքեր, սինխրոնիզացիա, պրոցեսների/հոսքերի պլանավորում և դիսպետչերիզացիա:
8. Ուսումնասիրել վիրտուալ հիշողության կազմակերպման և սպասարկման հարցերը:
9. Ներկայացնել տվյալների մուտքի/ելքի կազմակերպման եղանակները:
10. Ուսումնասիրել ֆայլային համակարգերը Windows և Linux օպերացիոն համակարգերում:
11. Ներկայացնել արդի համակարգչային համակարգերի ճարտարապետությունները:
12. Ուսումնասիրել միկրոպրոցեսորային համակարգերը:

**9. Մոդուլի ավարտին ուսանողն ունակ կլինի՝  
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. Ներկայացնելու ԷՀՄ-ի բազմամակարդակ ճարտարապետության կազմակերպման սկզբունքները, տարրերը, սարքերն ու ֆունկցիոնալ հանգույցները և նրանց կառուցվածքային հիմունքները:
2. Ներկայացնելու ԷՀՄ-ում տվյալների ներկայացման ձևերը, հրամանների համակարգը, բացատրելու ընդհատումների տիպերը և նրանց մեխանիզմը, օգտագործման եղանակները և ընդհատումների սպասարկումը:
3. Ներկայացնելու էլեկտրոնային հաշվիչ մեքենաների և միկրոկոնտրոլերային կառուցվածքների ճարտարապետությունը, դրանց կիրառման ժամանակակից ուղղությունները
4. Նկարագրելու ասեմբլերի լեզուն, ներկայացնելու այդ լեզվով ծրագրավորման սկզբունքները:
5. Ներկայացնելու օպերացիոն համակարգերի դասակարգման սկզբունքները, տիպերը, ճարտարապետական առանձնահատկությունները:
6. Նկարագրելու առավել տարածված միկրոկոնտրոլերային կառուցվածքներում օգտագործվող օպերացիոն համակարգերի ֆունկցիոնալ հիմնական հնարավորությունները և առանձնահատկությունները:
7. Բացատրելու պրոցեսների և հոսքերի ղեկավարման և սինխրոնիզացիայի սկզբունքները, ծրագրային միջոցները, պրոցեսների և հոսքերի պլանավորման և դիսպետչերիզացիայի ավգորիթմները:
8. Ներկայացնելու անցումների (ճյուղավորումների) մեխանիզմները, ապարատա-ծրագրային ապահովումը և պայմանները:
9. Պարզաբանելու մուտք/ելքի ապարատային և ծրագրային գործընթացները:

|   |
|---|
| <p>10. Ներկայացնելու հիշողության կազմակերպման եղանակները և հիշողության ղեկավարման մեթոդները;</p> <p>11. Բնութագրելու ֆայլային համակարգերի կառուցվածքային սկզբունքները:</p> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնելու թվային և սիմվոլային տվյալները համապատասխան մեքենայական ֆորմատներով:</li> <li>2. Կատարելու վիրտուալ միջավայրում թվաբանական և տրամաբանական սարքերի և ֆունկցիոնալ հանգույցների մոդելավորման գործընթացները:</li> <li>3. Կազմելու ծրագրեր ասեմբլերի լեզվով և իրականացնելու նրանց կարգավորումը, թեստավորումը, շտկումը, հետևելու ծրագրային իրականացման դինամիկային:</li> <li>4. Կազմելու և թեստավորելու բազմապրոցեսային և բազմահոսքային ծրագրեր: Օգտագործելու համակարգային կանչերը կիրառական ծրագրերում:</li> <li>5. Կիրառելու ապարատային և ծրագրային ընդհատումներ: Կազմելու ընդհատումների մշակման ծրագրեր:</li> <li>6. Իրականացնելու մուտք/ելքային ընդհատումներ:</li> <li>7. Մոդելավորելու համակարգչի տարբեր հանգույցների աշխատանքը:</li> <li>8. Հետազոտություն իրականացնելու համակարգիչների և օպերացիոն համակարգերի առանձին տարրերի կառուցվածքային և ֆունկցիոնալ բնութագրիչների ուսումնասիրման ոլորտում:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ինքնուրույն կամ ղեկավարի աջակցությամբ նախագծելու, իրականացնելու և թեստավորելու համակարգչային ծրագրեր:</li> </ol>   |
| <p><b>10. Մոդուլը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա2.</b>Թվարկելու ծրագրավորման արդի լեզուները, դասակարգելու և ներկայացնելու դրանց առանձնահատկությունները, կիրառման ոլորտները, հիմնավորելու տարբեր խնդիրների ծրագրային իրականացման համար կոնկրետ լեզվի ընտրությունը:</p> <p><b>Ա5.</b>Ներկայացնելու և նկարագրելու ժամանակակից համակարգիչների, գերհամակարգիչների և համակարգչային ցանցերի ճարտարապետական առանձնահատկությունները, անվտանգության և պաշտպանվածության ապահովման սկզբունքները և մեթոդները, կիրառման ոլորտները և ուղղությունները, մեկնաբանելու դրանց օգտագործման հնարավորությունները ՀՀ-ում և տարածաշրջանում:</p> <p><b>Բ5.</b>Նախագծելու անվտանգ և պաշտպանված հաշվողական համակարգեր և ցանցեր՝ կիրառելով համակարգչային և ցանցային ճարտարապետության առանձնահատկությունները, դրանց ապարատային և տարրային հենքի կառուցվածքը:</p> <p><b>Բ6.</b>Հավաքագրելու մասնագիտական տեղեկատվություն ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ պահանջող տարբեր պարզ և բարդ խնդիրների լուծման համար՝ օգտագործելով հաղորդակցման և որոնողական ժամանակակից տարբեր համակարգեր, նորարարական մեթոդներով իրականացնելու հավաքագրված մասնագիտական տվյալների քանակական և որակական վերլուծություններ, կատարելու տրամաբանական եզրահանգումներ:</p> <p><b>Գ1.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. դասախոսություն</li> <li>2. գործնական աշխատանք համակարգչի վրա</li> <li>3. բանավոր հարցումներ և քննարկումներ</li> <li>4. հետազոտական աշխատանք</li> <li>5. տնային աշխատանք</li> <li>6. ինքնուրույն աշխատանք:</li> </ol>   |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Նախատեսված է <b>2 ընթացիկ քննություն:</b></p> <p><b>1-ին ընթացիկ քննություն</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն.</b> հետազոտական աշխատանքի պաշտպանություն, <b>4 միավոր</b> առավելագույն արժեքով:</p> <p><b>Եզրափակիչ քննությունը</b> բանավոր է՝ <b>9 միավոր</b> առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ 3 միավոր և 1 խնդիր՝ 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p> <p><b>Ինքնուրույն աշխատանք.</b> առավելագույնը 3 միավոր՝ տնային առաջադրանքները կատարելու և ընթացիկ առաջադիմության համար:</p>   |

### 13. Մոդուլը բաղկացած է հետևյալ բաժիններից.

#### Բաժին 1. ԷՀՄ ճարտարապետություն

**Թեմա1.** ԷՀՄ-ի բազմամակարդակ կազմակերպման սկզբունքները: Հասկացություն ԷՀՄ-ի ճարտարապետության մասին: ԷՀՄ-ների սերունդները: **Թեմա2.** ԷՀՄ տարրեր և ճարտարապետություն: Տրամաբանական տարրեր, կոմբինացիոն սխեմաներ: Բազիսային տարրեր: **Թեմա3.** Տրիգերային տարրեր: Ռեգիստրներ, հաշվիչներ, շիֆրատոր-դեշիֆրատոր, Գումարիչ: **Թեմա4.** Պրոցեսորում տվյալների ներկայացման հիմնական եղանակները: Ամբողջ թվերի ներկայացումը. ուղիղ, հակադարձ, լրացուցիչ կոդ: Գործողություններ սահող ստորակետի, ֆիքսված ստորակետի տեսքով ներկայացված տվյալների հետ: Թվաբանական գործողություններ լրացուցիչ կոդով: **Թեմա5.** Թվաբանա-տրամաբանական սարք (ԹՏՄ): Ամբողջ թվերի գումարման/հանման գործողությունը: Ամբողջ թվերի բազմապատկումը/ բաժանումը ԹՏՄ-ում: **Թեմա6.** Ղեկավարող սարքեր: Ապարատային ղեկավարող սարքեր: Հրամանների կատարման փուլերը: **Թեմա7.** Միկրոձրագրավորվող սարքի կառուցվածքը: Միկրոօպերացիաների կոդավորում: **Թեմա8.** Հիշող սարքերի (ՀՄ) դասակարգումը Հիշողության հիերարխիկ կառուցվածքը: Կիսահաղորդչային հիշողություն: Ստատիկ ՀՄ-եր և դրանց սխեման: Դինամիկ ՀՄ-եր և դրանց սխեման: Դինամիկ ՀՄ-երի միկրոսխեմայի կառուցվածքը: ՀՄ-երի հիմնական կառուցվածքները: **Թեմա9.** Քեշ-հիշողություն, քեշում գրանցման եղանակները: Քեշ-հիշողության իրագործման եղանակները: Բազմամակարդակ քեշ-հիշողություն: **Թեմա10.** Մշտական հիշող սարքեր : ROM(M) և PROM տիպի ՀՄ-ներ: EPROM և EEPROM տիպի ՀՄ-ներ: Ֆլեշ-հիշողություն: **Թեմա11.** Համակարգիչների ճարտարապետությունների դասակարգումը: Տվյալների հոսքի ղեկավարում: Պրոցեսորի ընդհանրացված կառուցվածքը: Պրոցեսորի հրամանների համակարգը: Մշակման գործողություններ: Ճյուղավորման հրամաններ: **Թեմա 12.** Ասեմբլերի լեզվով ծրագրավորման հիմունքներ: Հրամանների ներկայացումը ասեմբլեր լեզվով: Ասեմբլերի կառուցվածքը: Գործողությունների նշանակությունը և ներկայացումը ասեմբլերում: Աշխատանքի ռեժիմը ղեկավարող հրամանները (համակարգը ղեկավարող հրամանները): **Թեմա13.** Ընդհատումների մեխանիզմ: Ծրագրային և ապարատային ընդհատումներ: Որոշ արտաքին սարքերի ծրագրավորում, կառավարում /դրայվերներ/:

#### Բաժին 2. Օպերացիոն համակարգեր

**Թեմա1.** Օպերացիոն համակարգերի հիմնական հասկացությունները, կառուցվածքը, նշանակությունը և ֆունկցիաները: **Թեմա2.** Համակարգչի հետ աշխատանքի տիպային պրոցեդուրները և օպերացիոն համակարգի ծառայողական ֆունկցիաները: Ժամանակակից բազմամակարդակ մեքենաներ: **Թեմա 3.** Վիրտուալ հիշողության սկզբունքը: Հիշողության էջային կազմակերպում: Էջերի փոխանակման գործընթացը: Հիշողության սեզմենտային կազմակերպում: **Թեմա4.** Պրոցեսորներ. SISD, SIMD, MISD, MIMD տիպերը: Մշակման գործողություններ: Ճյուղավորումներ /անցումներ/ և նրանց մշակումը: Ենթաձրագրերի կանչ: Համակարգի ղեկավարում: Տվյալների հոսք. Խնդիրները, կոնվեյերային մշակում: Պրոցեսորի ընդհանրացված կառուցվածքը, աշխատանքի ալգորիթմը: Ճյուղավորումների մեկ և երկու մակարդակով դինամիկ կանխատեսումներ: **Թեմա5.** Ընդհատումներ, տիպերը, նշանակությունը, կազմակերպման սկզբունքը: Վիճակի PSW ռեգիստր: Ընդհատման պրոցեսի ընթացքը դրոշակների ռեգիստրի վերլուծությամբ: Օպերանդների հասցեավորման եղանակները: Հիշողության մեջ օպերանդների հասցեավորումը: **Թեմա6.** Պրոցեսորի համակարգային ռեգիստրներ. ղեկավարման, հասցեական և տվյալների համար ռեգիստրներ: Օպերանդների հասցեավորում. ռեգիստրային և ստեկային: Հիշողության էջային կազմակերպում, մոդելներ: **Թեմա7.** Մուտքի – ելքի կազմակերպում: Մուտքի-ելքի սարքի միացումը. ընդհանուր շինայի և լրացուցիչ շինայի օգտագործման միջոցով: **Թեմա8.** Ծրագրային ղեկավարմամբ մուտք-ելք: Ընդհատումով մուտք-ելք: **Թեմա9.** Միկրոկոնտրոլերային համակարգի օպերացիոն համակարգ, առանձնահատկությունները, խնդիրները, հնարավորությունները: Բազմախնդիր լուծումներ, հնարավոր սխալներ և նրանց լուծումներ: Փոխադարձ բացառման սկզբունք, մյուտեքսներ: Կրիտիկական տիրույթ: Ընդհատումները միկրոկոնտրոլերում. իրականացում և արգելում: Նախապատվություններ:

### 14. Հիմնական գրականության ցանկ.

1. Արամյան Հ., Թվային սարքեր և միկրոպրոցեսորների կիրառությունը: Ուսումնական ձեռնարկ: Մաս առաջին: Եր., 2009:
2. Արամյան Հ., Թվային սարքեր և միկրոպրոցեսորների կիրառությունը: Ուսումնական ձեռնարկ: Մաս երկրորդ, Եր., 2010:
3. Առաքելյան Ա., Բաղդասարյան Շ., Սարգսյան Գ.և ուր. Ինթել x86. Ասեմբլեր. իրական ռեժիմ: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Եր., 2016:
4. Daniel J. Ellard .MIPS Assembly Language Programming CS50 Discussion and Project Book, 1994,
5. В.Г.Баула. Введение в архитектуру ЭВМ и системы программирования, МГУ, Москва, 2003,
6. Магда Ю.С. Микроконтроллеры PIC: архитектура и программирование. – М.: ДМК, Пресс, 2009,
7. Разработка и отладка микропроцессорных устройств в виртуальной среде моделирования Proteus [Электронный ресурс]: метод. указания /сост. В.Г.Иоффе. – Самара.: Изд-во Самарского

университета, 2017.

8. Юров В.И., Assembler. Учебник для ВУЗов. Питер, С.Петербург, 2006г.
9. Г. Дейтел, Введение в операционные системы. г.Москва, 2005г.
10. Таненбаум Э., Бос Х. Т18 Современные операционные системы. 4-е изд. — СПб.: Питер, 2015. — 1120 с.: ил. — (Серия «Классика computer science»).
11. Гордеев А.В., Молчанов А.Ю., Системное программное обеспечение. Питер, С.Петербург, 2001г.
12. Джеффри Рихтер, Windows для профессионалов СПб. С.Петербург 2003г.
13. Курниц А. FreeRTOS — операционная система для микроконтроллеров // Компоненты и технологии. 2011. № 2–7.
14. Barry R. Using the FreeRTOS real time kernel: A Practical Guide. 2009.
15. <http://www.freertos.org>
16. <http://ru.wikipedia.org/wiki/Реентерабельность>
17. <http://ru.wikipedia.org/wiki/Мьютекс>
18. [http://en.wikipedia.org/wiki/Reentrant\\_mutex](http://en.wikipedia.org/wiki/Reentrant_mutex)
19. <http://www.qnxclub.net/files/articles/invers/invers.pdf>
20. [http://ru.wikipedia.org/wiki/Взаимная\\_блокировка](http://ru.wikipedia.org/wiki/Взаимная_блокировка)
21. <http://www.ee.ic.ac.uk/t.clarke/rtos/lectures/RTOSlec2x2bw.pdf>

|  |  |                  |
|--|--|------------------|
| 1. 0104/B30  | 2. Թվային անվտանգության հիմունքներ, թվային անվտանգության սարքածրագրային միջոցներ | 3. 4 ECTS կրեդիտ |
| 4. 3 ժամ/շաբ   | 5. 30/15/0   |                  |
| 6. 4-րդ կիսամյակ   | 7. Առանց եզրափակիչ գնահատման   |                  |
| <b>8. Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել.</b> <ul style="list-style-type: none"><li>• թվային հարթակներում առկա անվտանգության հիմնահարցերին, դրանցից խուսափելու մեթոդներին,</li><li>• նոր ստեղծվող համակարգերում թվային անվտանգության ապահովման լուծումներին,</li><li>• օգտագործվող արդի ծրագրային և սարքային լուծումներին և դրանց համակարգային կիրառությանը՝ կազմակերպությունների, հասարակության և երկրների թվային անվտանգության ապահովման համար:</li></ul>   |  |                  |
| <b>9. Մոդուլի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b><br><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b> <ol style="list-style-type: none"><li>1. ներկայացնելու թվային հարթակներում առկա անվտանգության հիմնահարցերը և դրանցից խուսափելու մեթոդները,</li><li>2. առաջարկելու նոր ստեղծվող համակարգերում թվային անվտանգության ապահովման լուծումներ,</li><li>3. ներկայացնելու թվային անվտանգության ապահովման համար օգտագործվող արդի ծրագրային և սարքային լուծումները,</li><li>4. ներկայացնելու և հիմնավորելու կազմակերպությունների, հասարակության և երկրների թվային անվտանգության ապահովման համար համակարգային մոտեցումների անհրաժեշտությունը:</li></ol> <b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b> <ol style="list-style-type: none"><li>1. կիրառելու ստացած նախնական գիտելիքները թվային հարթակներից օգտվելու ժամանակ,</li><li>2. կանխարգելելու թվային հարձակումները,</li><li>3. կիրառելու լուծումներ ուսանողների կողմից ստեղծվող թվային համակարգերի անվտանգությունն ապահովելու համար:</li></ol> <b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b> <ol style="list-style-type: none"><li>1. անվտանգ օգտվելու թվային հարթակներից:</li></ol> |  |                  |
| <b>10. Մոդուլը/դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b><br><b>Ա1.</b> Ներկայացնելու և բացատրելու ծրագրավորման ժամանակակից սկզբունքները, մեթոդները (կառուցվածքային մեթոդ, օբյեկտակողմնորոշված մեթոդ, համակարգային մեթոդ, միկրոկոնտրոլերների և սարքերի ծրագրավորման մեթոդ), արդի տեղեկատվական տեխնոլոգիաները:<br><b>Ա2.</b> Թվարկելու ծրագրավորման արդի լեզուները, դասակարգելու և ներկայացնելու դրանց առանձնահատկությունները, կիրառման ոլորտները, հիմնավորելու տարբեր խնդիրների ծրագրային իրականացման համար կոնկրետ լեզվի ընտրությունը:<br><b>Բ4.</b> Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:<br><b>Բ5.</b> Նախագծելու անվտանգ և պաշտպանված հաշվողական համակարգեր և ցանցեր՝ կիրառելով համակարգչային և ցանցային ճարտարապետության առանձնահատկությունները, դրանց ապարատային և տարրային հենքի կառուցվածքը:   |  |                  |

|  |
|--|
| <p><b>Գ3.</b> Որոշելու իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:</p> <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ,</li> <li>• գործնական պարապմունքներ,</li> <li>• քննարկումներ,</li> <li>• տնային առաջադրանքներ,</li> <li>• նախագծեր</li> </ul> <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b><br/>Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց, առավելագույնը <b>20 միավոր (4+4+4+8):</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. <b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը 4 միավոր,</li> <li>2. <b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը 4 միավոր,</li> <li>3. <b>Ընթացիկ ստուգումներ .</b> առավելագույնը 4 միավոր,</li> <li>4. <b>Ինքնուրույն աշխատանք.</b> առավելագույնը 8 միավոր:</li> </ol> <p><b>13. Մոդուլը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b><br/><b>Թեմա 1. Թվային անվտանգության հիմնական գաղափարները.</b> անվտանգություն, ռիսկերի կառավարում, թվային աշխարհ, գաղտնագրում և անալիզ (Cryptanalysis), համակարգչային ցանցեր, համացանցային տեխնոլոգիաներ, ցանցահեններ (hacker-ներ): <b>Թեմա 2. Խոցելիություններ և անվտանգության այլ խնդիրներ.</b> գործառնական համակարգերի խոցելիություններ, ցանցային խոցելիություններ համացանցային խոցելիություններ, տեղեկատվական խոցելիություններ, մարդածին խոցելիություններ, նորահայտ վտանգներ: <b>Թեմա 3. Անվտանգության խնդիրների լուծումներ.</b> համակարգերի ստուգում, խոցելիությունների դեկավարում, ներթափանցման ստուգում, Firewall-ներ, IDS, IPS և այլ տեխնիկական պաշտպանական միջոցներ, համակարգերի Hardening and EndPoint Protection: <b>Թեմա 4. Անվտանգության կառավարում.</b> թվային անվտանգության համակարգերի կառավարում (ISMS), անվտանգ ծրագրային մեթոդների կիրառում:</p> <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Applied Cryptography: Protocols, Algorithms, and Source Code in C 2nd Edition by Bruce Schneier</li> <li>2. The Art of Invisibility: The World's Most Famous Hacker Teaches You How to Be Safe in the Age of Big Brother and Big Data by Kevin Mitnick</li> </ol> |
|--|

|   |                                     |                         |
|---|-------------------------------------|-------------------------|
| <b>1. 0105/B31</b>  | <b>2. Դիֆերենցիալ հավասարումներ</b> | <b>3. 5 ECTS կրեդիտ</b> |
| <b>4. 4 ժամ/շաբ.</b>  | <b>5. 30/30/0</b>                   |                         |
| <b>6. 5-րդ կիսամյակ</b>   | <b>7. Եզրափակիչ գնահատումով</b>     |                         |
| <p><b>8. Մոդուլի նպատակն է ներկայացնել դիֆերենցիալ հավասարումների և համակարգերի ընդհանուր տեսությունը, Կոշիի խնդիրը, գծային դիֆերենցիալ հավասարումները և համակարգերը, Ֆրեդհոլմի ինտեգրալ հավասարումները, նրանց լուծման մեթոդները:</b></p> <p><b>Մոդուլի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ուսանողներին ծանոթացնել գծային դիֆերենցիալ հավասարումների տեսակներին,</li> <li>2. բացատրել գծային դիֆերենցիալ հավասարումների, նրանց համակարգերի և Ֆրեդհոլմի ինտեգրալ հավասարումների լուծման մեթոդները.</li> <li>3. լուծել տարբեր տիպի դիֆերենցիալ հավասարումներ՝ կիրառելով դիֆերենցիալ հավասարումների լուծման ճշգրիտ և մոտավոր մեթոդները:</li> </ol> <p><b>9. Մոդուլի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնելու առաջին կարգի անջատվող փոփոխականներով, համասեռ, գծային, լրիվ դիֆերենցիալներով և դրանց բերվող դիֆերենցիալ հավասարումները:</li> <li>2. Ներկայացնելու բարձր կարգի դիֆերենցիալ հավասարումների և դիֆերենցիալ հավասարումների համակարգերի տեսքերը:</li> <li>3. Ձևակերպելու Կոշիի խնդրի լուծման գոյության և միակության թեորեմը առաջին կարգի դիֆերենցիալ հավասարման համար:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Լուծելու առաջին կարգի անջատվող փոփոխականներով, համասեռ, գծային, լրիվ դիֆերենցիալներով և դրանց բերվող դիֆերենցիալ հավասարումները:</li> <li>2. Գտնելու բարձր կարգի դիֆերենցիալ հավասարումները և դիֆերենցիալ հավասարումների համակարգերի լուծումները:</li> <li>3. Մեկնաբանելու և կիրառելու դիֆերենցիալ հավասարումների ճշգրիտ լուծման մեթոդները:</li> <li>4. Որոշ ֆիզիկական և երկրաչափական խնդիրներ բերելու դիֆերենցիալ հավասարումների ու լուծելու</li> </ol> |                                     |                         |

|  |
|--|
| <p>դրանք:</p> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Կատարելու թիմային աշխատանք:</li> <li>Հստակ ներկայացնելու միտքը,</li> <li>Օգտվելու տարբեր աղբյուրներից, վերլուծելու և դասակարգելու ստացած տեղեկատվությունը:</li> <li>Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</li> </ol>  |
| <p><b>10. Մոդուլը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Բ1.</b> Լուծելու մասնագիտական ոլորտի խնդիրներ՝ օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար գաղափարները, մոդելները, սկզբունքները, դրույթները, խնդիրների լուծման եղանակները:</p> <p><b>Բ3.</b> Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:</p> <p><b>Բ4.</b> Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:</p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ5.</b> Մասնագիտական հանրություն կառուցելու տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ բանավոր ու գրավոր խոսք մայրենի և որևէ օտար լեզվով:</p> |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>դասախոսություն</li> <li>գործնական աշխատանք</li> <li>քննարկում</li> <li>զեկուցում</li> <li>ինքնուրույն աշխատանք:</li> </ul>   |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Եզրափակիչ գնահատումով մոդուլ,</b> առավելագույնը 20 միավոր (4+4+8+2+2):</p> <p><b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 5 խնդիր՝ <math>2 \times 0.5 + 3 \times 1</math>: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 5 խնդիր, <math>2 \times 0.5 + 3 \times 1</math>: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>Եզրափակիչ քննություն.</b> Բանավոր՝ առավելագույնը <b>8 միավոր</b> քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 4 հարց./2+2/ 2 տեսական հարց առավելագույնը 2 միավոր, 2 խնդիր առավելագույնը 2 միավոր :</p> <p><b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>2 միավոր</b>, կիսամյակի ընթացքում իրականացրած 2 /1+1/ստուգողական աշխատանքներից ձեռք բերումների համար՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>Մասնակցությունը դասերին.</b> առավելագույնը <b>2 միավոր</b></p>  |
| <p><b>13. Մոդուլը բաղկացած է բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Առաջին կարգի դիֆերենցիալ հավասարումների լուծման մեթոդները: <b>Թեմա 2.</b> Բարձր կարգի դիֆերենցիալ հավասարումների լուծման մեթոդները: <b>Թեմա 3.</b> Բարձր կարգի գծային դիֆերենցիալ հավասարումների ֆունդամենտալ լուծումների կառուցումը: <b>Թեմա 4.</b> Բարձր կարգի գծային, հաստատուն գործակիցներով դիֆերենցիալ հավասարումների համակարգի լուծման մեթոդները:</p>  |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Ղազարյան Հ., Մամիկոնյան Ֆ., Հովհաննիսյան Ա., Կարապետյան Գ., Սովորական դիֆերենցիալ հավասարումներ, Եր., 1988:</li> <li>Ղազարյան Հ., Հովհաննիսյան Ա., Հարությունյան Ս., Կարապետյան Գ., Դիֆերենցիալ հավասարումներ, Եր., 2002:</li> <li>Петровский И., Лекции по теории обыкновенных дифференциальных уравнений. М. Наука, 1984.</li> <li>Понтрягин Л., Обыкновенные дифференциальные уравнения., М., Наука, 1982.</li> <li>Степанов В., Курс дифференциальных уравнений., М., Физматгиз, 1959.</li> <li>Эльсгольц Л., Обыкновенные дифференциальные уравнения, М., Гостехиздат.м 1957.</li> <li>Филиппов А., Сборник задач по обыкновенным дифференциальным уравнениям, М., Наука, 1992.</li> </ol>   |

|   |  |                  |
|---|--|------------------|
| 1. 0105/B33   | 2. Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն | 3. 6 ECTS կրեդիտ |
| 4. 6 ժամ/շաբ.   | 5. 45/30/0   |                  |
| 6.5-րդ կիսամյակ   | 7. Եզրափակիչ գնահատումով   |                  |
| <p><b>8. Մոդուլի նպատակն է</b> ուսանողներին ծանոթացնել հավանականության գաղափարին (դասական, վիճակագրական, երկրաչափական, աքսիոմատիկ սահմանումներ), վիճակագրության հիմնական գաղափարներին՝ պատահական մեծությունների տեսակներին (դիսկրետ, անընդհատ) և նրանց թվային բնութագրիչներին, բաշխումներին ինչպես նաև, նրանց կիրառություններին:</p> <p>Մոդուլի ուսումնասիրությունը նպատակ ունի ուսանողների մոտ <b>ձևավորել</b>.</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ յուրահատուկ տրամաբանական մտածողություն՝ հավանականային և վիճակագրական գաղափարների միջոցով,</li> <li>✓ տիպային խնդիրների լուծման և դրանց արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ,</li> <li>✓ տրամաբանորոն վերլուծելու և մաթեմատիկորեն մոդելավորելու մշակույթ և կարողություններ,</li> <li>✓ առաջադրված խնդիրների լուծելիությունը հետազոտելու ունակություններ,</li> <li>✓ գրականությունից օգտվելու և յուրաքանչյուր թեմայի շրջանակներում անհրաժեշտ նյութերը փնտրելու հմտություններ:</li> </ul> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ուսանողներին ընկալելի դարձնել հավանականության գաղափարի սահմանումները և նրանց տարբերությունները</li> <li>2. Մոդուլը հաշվել պատահական մեծությունների թվային բնութագրիչները կիրառելով բաշխման ֆունկցիան և հավանականային խտության ֆունկցիան</li> <li>3. Ուսանողներին տալ հիմնարար գիտելիքներ սահմանային թեորեմների, բաշխումների և նրանց կիրառությունների վերաբերյալ</li> <li>4. ուսումնասիրել պատահական փոքրների մաթեմատիկական մոդելների կառուցվածքը</li> <li>5. կատարելագործել ուսանողների մոտ կիրառական խնդիրների լուծման համար ստացված գիտելիքների օգտագործման հմտությունները,</li> <li>6. զարգացնել ուսանողների մոտ այն ունակությունները, որոնք օգնում են</li> <li>7. ընկալել տարբեր համակարգերում կիրառվող մաթեմատիկական մոդելների հավանականային ունիվերսալությունը:</li> </ol> |  |                  |
| <p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. սահմանելու փորձ, նրա տարրական էլքերը, տալու հավանականության դասական, երկրաչափական, աքսիոմատիկ սահմանումները, պայմանական հավանականության սահմանումը,</li> <li>2. ներկայացնելու պատահական մեծությունների տեսակները/ դիսկրետ, անընդհատ, կիսանընդհատ/</li> <li>3. սահմանելու պատահական մեծության թվային բնութագրիչները՝ մաթեմատիկական սպասում, դիսպերսիա, մոդա, մոմենտ, ասիմետրիա, պատահական մեծության բաշխման ֆունկցիա, բաշխման շարք:</li> <li>4. թվարկելու պատահական մեծությունների ֆունկցիաները՝ բաշխման ֆունկցիա, հավանականային խտության ֆունկցիա, բնութագրիչ ֆունկցիա</li> <li>5. ներկայացնելու մարկովյան շղթաները /համասեռ, ոչ համասեռ/ և նրանց համապատասխանող անցման մատրիցները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. թվարկելու «հավանականության» գաղափարի դասական, երկրաչափական, աքսիոմատիկ սահմանումների տարբերությունները, և նրանց կիրառմամբ կառուցելու պատահական մեծությունների բաշխման շարքերը,</li> <li>2. հաշվելու պատահական մեծությունների թվային բնութագրիչները՝ մաթեմատիկական սպասում, դիսպերսիա, միջին քառակուսային շեղում, մոդա, մեդիանա</li> <li>3. մեկնաբանելու սահմանային թեորեմները և ներկայացնելու նրանց կապը Բեռնուլիի թեորեմի հետ</li> <li>4. պատահական մեծությունների կիրառմամբ վիճակագրական խնդիրներ լուծելու:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</li> <li>2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</li> </ol>        |  |                  |

|   |
|---|
| <p>3. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p>  |
| <p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա4.</b>Ներկայացնելու գիտական և տնտեսական տարբեր ոլորտներում մեծածավալ տվյալների մշակման և վերլուծության մեթոդները, ծրագրային համակարգերի կիրառման սկզբունքները, բացատրելու և վերլուծելու դրանց ներդրման նպատակահարմարությունը և արդյունավետությունը, բերելու ծրագրային համակարգերի կիրառման հայտնի օրինակներ:</p> <p><b>Բ2.</b>Օգտվելու խնդիրների մաթեմատիկական մոդելավորման և մոդելների ծրագրավորման մեթոդներից, մաթեմատիկական վերլուծական և վիճակագրական գործիքներից, էլեկտրոնային համակարգերի նախագծման և տեխնիկայապես իրագործման ծրագրային և ապարատային միջոցներից, ինչպես նաև վիրտուալ հարթակների գործիքակազմից:</p> <p><b>Բ3.</b>Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:</p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ3.</b>Որոշելու իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:</p> |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ,</li> <li>• գործնական պարապմունքներ,</li> <li>• քննարկումներ,</li> <li>• տնային և անհատական տնային առաջադրանքներ,</li> <li>• ստուգողական աշխատանքներ,</li> <li>• ինքնուրույն աշխատանքներ:</li> </ul>  |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Եզրափակիչ գնահատումով դասընթաց,</b> առավելագույնը 20 միավոր (4+4+9+3):</p> <p><b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայքայը 0,25 է:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայքայը 0,25 է:</p> <p><b>Եզրափակիչ քննություն.</b> Բանավոր՝ առավելագույնը <b>9 միավոր</b> քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 4 հարց. 2 տեսական հարց (1-ինը՝ 3 միավոր և 2-րդը՝ 2 միավոր), երկու խնդիր (1-ինը՝ 2 միավոր և 2-րդը՝ 2 միավոր):</p> <p><b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>3 միավոր</b>, կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջադրանքներից ձեռքբերումների համար՝ 2 միավոր և ստուգողական աշխատանքներից ձեռքբերումների համար՝ 1 միավոր: Միավորների քայքայը 0,25 է:</p>  |
| <p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Բաժին 1. Հավանականության տեսություն</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ընտրանքների բազմություն, հավանականության դասական, երկրաչափական, արքիոմատիկ սահմանումները: <b>Թեմա 2.</b> Պայմանական հավանականություն, հավանականությունների բազմապատկման թեորեմ: <b>Թեմա 3.</b> Լրիվ հավանականության, Բայեսի բանաձև <b>Թեմա 4.</b> Բեռնուլիի փորձարկումների սխեմա, Բեռնուլիի բանաձև: <b>Թեմա 5.</b> Սահմանային թեորեմներ:</p> <p><b>Բաժին 2. Մաթեմատիկական վիճակագրություն</b></p> <p><b>Թեմա 1.</b> Դիսկրետ պատահական մեծություններ, բաշխման օրենքներ: <b>Թեմա 2.</b> Պատահական մեծության բաշխման ֆունկցիա, հավանականային խտության ֆունկցիա, բնութագրիչ ֆունկցիա <b>Թեմա 3.</b> Անընդհատ պատահական մեծություններ: <b>Թեմա 4.</b> Պատահական մեծությունների թվային բնութագրիչներ՝ մաթեմատիկական սպասում, դիսպերսիա, միջին քառակուսային շեղում, մոդա, մեդիանա: <b>Թեմա 5.</b> Մարկովյան շղթաներ:</p>   |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Гнеденко Б., Курс теории вероятностей. (Изд. 6-е, перераб. и доп. М.: Наука. 1988.</li> <li>2. Гмурман В., Теория вероятностей и математическая статистика. М.: Высш. шк., 2003.</li> </ol>   |

3. Bertsekas, D.P. and Tsitsiklis, J.N., 2008. Introduction to probability (Vol. 2). Belmont, MA: Athena Scientific.  
 4. DeGroot, M.H. and Schervish, M.J., 2012. Probability and statistics. Pearson Education.  
 5. Feller, W., 2008. An introduction to probability theory and its applications (Vol. 2). John Wiley & Sons.

|                  |                             |                  |
|------------------|-----------------------------|------------------|
| 1. 0105/B38      | 2. Ֆունկցիոնալ անալիզ / ՀԲ* | 3. 6 ECTS կրեդիտ |
| 4. 5 ժամ/շաբ.    | 5. 45/30/0                  |                  |
| 6. 5-րդ կիսամյակ | 7. Եզրափակիչ գնահատումով    |                  |

**8. Մոդուլի նպատակն** է ուսանողներին տալ գիտելիքներ Ֆունկցիոնալ անալիզից, որը ներառում է չափելի ֆունկցիաներն ու Լեբեգի չափը, մետրիկական, գծային նորմավորված և Հիլբերտյան տարածությունները, օրթոգոնալությունը, գծային օպերատորներն ու ֆունկցիոնալները և նրանց հիմնական հատկությունները: Օգնել ուսանողին ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները կիրառել բնագիտության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառներում:

- Մոդուլի խնդիրները.**
1. հիմնավորել և խորացնել ուսանողների ձեռք բերած գիտելիքները մաթեմատիկայից, օգնել յուրացնելու նոր գաղափարներ ու մեթոդներ,
  2. ձևավորել կարողություններ ֆունկցիոնալ անալիզից՝ տարբերակելու համար մաթեմատիկական տարածությունները,
  3. ձևավորել հմտություններ ստացված գիտելիքները այլ առարկաների մեջ կիրառելու,
  4. ուղղորդել ուսանողներին ճիշտ կիրառել ստացված գիտելիքները բնագիտական և ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառում այլ առարկաների ուսումնասիրման մեջ:

**9. Մոդուլի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. Տալու հանրահաշվի, չափելի բազմությունների ու ֆունկցիաների սահմանումները, թվարկելու դրանց հատկությունները, ներկայացնելու Լեբեգի չափն ու Լեբեգի ինտեգրալը, ըստ Լեբեգի ինտեգրելի ֆունկցիաների բազմությունները:
2. Հստակ թվարկելու ֆունկցիոնալ անալիզի տարածությունները. մետրիկական, գծային նորմավորված և հիլբերտյան, թվարկելու դրանց հատկությունները և բնութագրելու օրթոգոնալությունը հիլբերտյան տարածություններում:
3. Հետազոտելու գծային օպերատորներն ու գծային ֆունկցիոնալների տարածությունները, սահմանելու օպերատորների սպեկտրն ու ռեզոլվենտը:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. Հաշվելու Լեբեգի ինտեգրալ, տարբերակելու դրանք ըստ չափի և համարյա ամենուրեք գուգամիտությունների, ներկայացնելու  $L^p [E, d\mu]$  -ն որպես ֆունկցիոնալ անալիզի ֆունկցիաների հիմնական տարածություն:
2. Կիրառելու ֆունկցիոնալ անալիզի հիմնական տարածությունների հատկությունները տարբեր տիպի խնդիրների լուծման մեջ:
3. Հաշվելու գծային օպերատորների նորմը, կատարելու գործողություններ դրանց հետ, գտնելու տրված օպերատորի հակադարձ օպերատորը, կիրառելու Նոյմանի թեորեմը:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. Համեմատելու Ռիմանի և Լեբեգի ինտեգրալները, հաշվելու դրանք, կատարելու գործողություններ չափելի ֆունկցիաների հետ:
2. Համեմատելու գծային օպերատորներն ու գծային ֆունկցիոնալները, կիրառելու դրանց հիմնական հատկությունները կոնկրետ խնդիրներ լուծելիս:

**10. Մոդուլը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

- Բ1.** Լուծելու մասնագիտական ոլորտի խնդիրներ՝ օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար գաղափարները, մոդելները, սկզբունքները, դրույթները, խնդիրների լուծման եղանակները:
- Բ3.** Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:
- Բ4.** Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:
- Գ2.** Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ,

|   |
|---|
| <p>աշխատելու թիվում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ5.</b> Մասնագիտական հանրություն կառուցելու տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ բանավոր ու գրավոր խոսք մայրենի և որևէ օտար լեզվով:</p>  |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություն</li> <li>• գործնական</li> <li>• քննարկում</li> <li>• զեկուցում:</li> </ul>   |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b><br/> <b>Եզրափակիչ գնահատմամբ մոդուլ,</b> առավելագույնը 20 միավոր (4+4+8+3):<br/> <b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր,</b> հարցատոմար պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:<br/> <b>2-րդ ընթացիկ քննություն.</b> հետազոտական աշխատանքի ներկայացում, առավելագույնը <b>4 միավոր,</b> Միավորների քայլը 0,25 է: սխալ է<br/> <b>Եզրափակիչ քննություն.</b> բանավոր՝ առավելագույնը <b>9 միավոր</b> քննական տոմսի համար, տոմար պարունակում է 4 հարց. 2 տեսական հարց առավելագույնը 2.5 միավոր և 2 խնդիր առավելագույնը 2 միավոր:<br/> <b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը 3 <b>միավոր,</b> կիսամյակի ընթացքում իրականացրած 2 ստուգողական աշխատանքներից ձեռք բերումների համար՝ 1-ական միավոր, դասերին ակտիվության համար՝ 1 միավոր: Միավորների քայլը 0. 25 է:</p> |
| <p><b>13. Մոդուլը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b><br/> <b>Թեմա 1.</b> Լեբեգի չափ և Լեբեգի ինտեգրալ: <b>Թեմա 2.</b> Մետրիկական տարածություններ: <b>Թեմա 3.</b> Գծային նորմավորված տարածություններ: <b>Թեմա 4.</b> Հիլբերտյան տարածություններ <b>Թեմա 5.</b> Օրթոգոնալիզացիա, ընդհանրացված Ֆուրիեի շարքեր: <b>Թեմա 6.</b> Գծային անընդհատ օպերատորներ Բանախի տարածությունում, օպերատորի նորմ: <b>Թեմա 7.</b> Հավասարաչափ սահմանափակության և պատկերի բացության սկզբունքները: <b>Թեմա 8.</b> Հակադարձ օպերատոր: <b>Թեմա 9.</b> Գծային ֆունկցիոնալներ, Խան-Բանախի թեորեմը: <b>Թեմա 9.</b> Օպերատորի սպեկտր և ռեզոլվենտ:</p>  |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Колмогоров А., Фомин С., Элементы теории функций и функционального анализа, Наука, Москва, 1989.</li> <li>2. Люстерник Л., Соболев В., Элементы функционального анализа, Наука, Москва, 1965.</li> <li>3. Натансон И., Теория функций вещественного переменного, Наука, Москва, 1957.</li> </ol>  |

|   |  |                  |
|---|--|------------------|
| 1. 0104/B34   | 2. Համակարգչային ցանցերի և ցանցային անվտանգության ներածություն | 3. 4 ECTS կրեդիտ |
| 4. 3 ժամ/շաբ  | 5. 30/15/0   |                  |
| 6. 5-րդ կիսամյակ  | 7. Առանց եզրափակիչ գնահատման                                   |                  |
| <p><b>8. Մոդուլի նպատակն է</b> ուսանողներին ներկայացնել համակարգչային ցանցերի ստանդարտներն ու կառուցուածքը, դրանցում կիրառվող ֆիզիկական և տեղեկատվական շերտերը, համակարգչային ցանցերում առաջացող ծրագրային և անվտանգային խնդիրներն ու դրանց լուծումները:</p>  |  |                  |
| <p>9. Մոդուլի/դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու համակարգչային ցանցերի ստանդարտներն ու կառուցուածքը,</li> <li>2. տարբերելու դրանցում կիրառվող ֆիզիկական և տեղեկատվական շերտերը,</li> <li>3. տարբերելու համակարգչային ցանցերում առաջացող ծրագրային և անվտանգային խնդիրներն ու դրանց լուծումները,</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կիրառելու ստացած նախնական գիտելիքները համակարգչային ցանցից անվտանգ օգտվելու համար,</li> <li>2. նախագծելու և կառուցելու ոչ շատ բարդ լոկալ ցանցեր,</li> <li>3. կիրառելու արդի ծրագրային լուծումներն ու սարքերը համակարգչային ցանցում առկա խոցելիությունները բացահայտելու համար,</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. անվտանգ օգտվելու համակարգչային ցանցերից:</li> </ol> |  |                  |
| <p><b>10. Մոդուլը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b><br/> <b>Ա1.</b>Ներկայացնելու և բացատրելու ծրագրավորման ժամանակակից սկզբունքները, մեթոդները (կառուցվածքային մեթոդ, օբյեկտակողմնորոշված մեթոդ, համակարգչային մեթոդ, միկրոկոնստրուկտիվների և սարքերի ծրագրավորման մեթոդ), արդի տեղեկատվական տեխնոլոգիաները:</p>  |  |                  |

|   |
|---|
| <p><b>U3.</b> Բացատրելու գուգահեռ և բաշխված ծրագրավորման, տարբեր լեզուներով աջակցվող web-ծրագրավորման, գրաֆիկական միջերեսի ծրագրավորման, տեխնիկական համակարգերի և միկրոկոնտրոլերների ծրագրավորման առանձնահատկությունները, սկզբունքները և մեթոդները, ներկայացնելու ծրագրերի օրինակներ:</p> <p><b>U5.</b> Ներկայացնելու և նկարագրելու ժամանակակից համակարգիչների, գերհամակարգիչների և համակարգչային ցանցերի ճարտարապետական առանձնահատկությունները, անվտանգության և պաշտպանվածության ապահովման սկզբունքները և մեթոդները, կիրառման ոլորտները և ուղղությունները, մեկնաբանելու դրանց օգտագործման հնարավորությունները ՀՀ-ում և տարածաշրջանում:</p> <p><b>U6.</b> Ներկայացնելու ռոբոտատեխնիկական օբյեկտների ծրագրային ապահովման սկզբունքները և դրանց վրա հիմնված ավտոմատ կառավարման համակարգերի սխեմատեխնիկական իրականացման հիմնական հասկացությունները և եղանակները:</p> <p><b>F4.</b> Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:</p> <p><b>F6.</b> Հավաքագրելու մասնագիտական տեղեկատվություն ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ պահանջող տարբեր պարզ և բարդ խնդիրների լուծման համար՝ օգտագործելով հաղորդակցման և որոնողական ժամանակակից տարբեր համակարգեր, նորարարական մեթոդներով իրականացնելու հավաքագրված մասնագիտական տվյալների քանակական և որակական վերլուծություններ, կատարելու տրամաբանական եզրահանգումներ:</p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ3.</b> Որոշելու իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:</p> |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. դասախոսություններ,</li> <li>2. գործնական պարապմունքներ,</li> <li>3. քննարկումներ,</li> <li>4. տնային առաջադրանքներ,</li> <li>5. նախագծեր:</li> </ol>   |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց, առավելագույնը <b>20 միավոր (4+4+4+8):</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. <b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը 4 միավոր:</li> <li>2. <b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը 4 միավոր:</li> <li>3. <b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը 4 միավոր:</li> <li>4. <b>Ինքնուրույն աշխատանք</b> առավելագույնը 8 միավոր:</li> </ol>   |
| <p><b>13. Մոդուլը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Համակարգչային ցանցերի ստանդարտներ և տեխնոլոգիաների ներածություն. TCP/IP, Web Standards:</p> <p><b>Թեմա 2.</b> Ցանցային խոցելիությունների ներածություն. համացանցի և լոկալ ցանցերի խոցելիությունների տեսակներ: <b>Թեմա 3.</b> Առօրեա տեղեկատվական անվտանգություն և մեդիագրագիտություն. սոցիալական ցանցերի անվտանգ օգտագործում, Social Engineering, մեդիագրագիտության հիմունքներ:</p>  |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Computer Networks, Global Edition 6th Edition by Andrew Tanenbaum</li> <li>2. Practical Packet Analysis, 3E: Using Wireshark to Solve Real-World Network Problems 3rd Edition by Chris Sanders</li> <li>3. Linux Basics for Hackers: Getting Started with Networking, Scripting, and Security in Kali Illustrated Edition by OccupyTheWeb</li> </ol>  |

|   |   |                  |
|---|---|------------------|
| 1. 0104/B35   | 2. Ծրագրային լուծումների որակի ապահովման հիմունքներ | 3. 4 ECTS կրեդիտ |
| 4. 4 ժամ/շաբ  | 5. 30/0/30  |                  |
| 6. 5-րդ կիսամյակ  | 7. Առանց եզրափակիչ գնահատման                        |                  |
| <p><b>8. Մոդուլի/դասընթացի նպատակն է</b> ուսանողներին ներկայացնել ծրագրային լուծումների որակի ապահովման հիմնարար սկզբունքները, այդ թվում «սպիտակ և սև արկղում» ստուգումները, ծրագրի ստուգման փուլերը՝ նախագծերի իրականացման տարբեր մոդելների համար, ծրագրային ստուգման ավտոմատացման եղանակները:</p> |   |                  |
| <p><b>9. Մոդուլի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p>  |   |                  |

|   |
|---|
| <p><b>ա. մասնագիտական գիտելիք և խմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>ներկայացնելու ծրագրային լուծումների որակի ապահովման հիմնարար սկզբունքները,</li> <li>ներկայացնելու ծրագրի ստուգման փուլերը՝ նախագծերի իրականացման տարբեր մոդելների համար:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>կիրառելու նախագիծը առանձին տրամաբանական բաղադրիչների բաժանելու կանոնները,</li> <li>կիրառելու ստացած նախնական գիտելիքները նախագծի առանձին բաղադրիչների համար որակի ապահովման քայլեր մշակելու և դրանք իրականացնելու համար:</li> </ol>   |
| <p><b>10. Ստորյւր ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա1.</b>Ներկայացնելու և բացատրելու ծրագրավորման ժամանակակից սկզբունքները, մեթոդները (կառուցվածքային մեթոդ, օբյեկտակողմնորոշված մեթոդ, համակարգային մեթոդ, միկրոկոնտրոլերների և սարքերի ծրագրավորման մեթոդ), արդի տեղեկատվական տեխնոլոգիաները:</p> <p><b>Ա2.</b>Թվարկելու ծրագրավորման արդի լեզուները, դասակարգելու և ներկայացնելու դրանց առանձնահատկությունները, կիրառման ոլորտները, հիմնավորելու տարբեր խնդիրների ծրագրային իրականացման համար կոնկրետ լեզվի ընտրությունը:</p> <p><b>Ա5.</b>Ներկայացնելու և նկարագրելու ժամանակակից համակարգիչների, գերհամակարգիչների և համակարգչային ցանցերի ճարտարապետական առանձնահատկությունները, անվտանգության և պաշտպանվածության ապահովման սկզբունքները և մեթոդները, կիրառման ոլորտները և ուղղությունները, մեկնաբանելու դրանց օգտագործման հնարավորությունները ՀՀ-ում և տարածաշրջանում:</p> <p><b>Բ4.</b>Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:</p> <p><b>Բ5.</b>Նախագծելու անվտանգ և պաշտպանված հաշվողական համակարգեր և ցանցեր՝ կիրառելով համակարգչային և ցանցային ճարտարապետության առանձնահատկությունները, դրանց ապարատային և տարրային հենքի կառուցվածքը:</p> <p><b>Գ3.</b>Որոշելու իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:</p> |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ,</li> <li>• գործնական պարապմունքներ,</li> <li>• քննարկումներ,</li> <li>• տնային առաջադրանքներ,</li> <li>• նախագծեր:</li> </ul>  |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց, առավելագույնը <b>20 միավոր (4+4+4+8):</b></p> <p><b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը 4 միավոր:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը 4 միավոր:</p> <p><b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը 4 միավոր:</p> <p><b>Ինքնուրույն աշխատանք.</b> առավելագույնը 8 միավոր:</p>   |
| <p><b>13. Ստորյւր բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1. Օրագրային լուծումների թեստավորման հիմնական դրույթները.</b> թեստավորման նախապատրաստումն ու նախագծերի կառուցման փուլերի ուսումնասիրություն, թեստավորման փուլերը և տեսակները, «Սպիտակ և սև արկղում» թեստավորում, թեստավորման կազմակերպման գործիքներ, առանձին բաղադրիչների թեստավորում, թեստավորման պլանավորում, ռիսկերի հայտնաբերում և կառավարում, թեստավորում Agile մեխանիզմով: <b>Թեմա 2. Օրագրային լուծումների թեստավորման մոտեցումները.</b> թեստավորման համակարգեր և գործիքներ, համացանցային լուծումների թեստավորում, համացանցային լուծումների թեստավորման ավտոմատացում, թեստերի նախագծման մեթոդներ, զուգահեռ թեստավորում, թեստավորման համակարգեր JavaScript լեզվով: <b>Թեմա 3. Ինտեգրված համակարգերի թեստավորման հիմնական գործիքներն ու մոտեցումները.</b> API-ներ, API-ների թեստավորում, թեստերի ինտեգրման և և պարբերական թարմացումների մոտեցումներ:</p>  |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Foundations of Software Testing: ISTQB Certification (3e), Black, R., van Veenendaal, E. and Graham, D., Cengage Learning: London UK</li> <li>2. Software Testing Techniques (2nd edition), Beizer Boris , Van Nostrand Reinhold</li> <li>3. Agile Testing: A Practical Guide for Testers and Agile Teams by Janet Gregory, Lisa Crispin, Addison-Wesley Professional</li> </ol>  |

4. Continuous Delivery: Reliable Software Releases through Build, Test, and Deployment Automation (Addison-Wesley Signature Series)

|             |  |                  |
|-------------|--|------------------|
| 1. 0105/B36 | 2. Մաթեմատիկական մոդելավորում և թվային մեթոդներ / ՀԲ | 3. 5 ECTS կրեդիտ |
|-------------|--|------------------|

|               |            |
|---------------|------------|
| 4. 5 ժամ/շաբ. | 5. 45/30/0 |
|---------------|------------|

|                  |                          |
|------------------|--------------------------|
| 6. 6-րդ կիսամյակ | 7. Եզրափակիչ գնահատումով |
|------------------|--------------------------|

**8. Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել.**

- տարբեր երևույթների և գործընթացների համար մաթեմատիկական մոդելներ կառուցելու հիմունքները,
- համակարգչի միջոցով խնդիրների լուծման փուլերը, դրա բնութագրերը, թվային փորձերի առանձնահատկությունները,
- տարբեր ոլորտների խնդիրներում հանդիպող հավասարումների հիմնական տիպերի լուծման թվային եղանակները,
- ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու և ձևավորելու հիմնական քայլերը:

**Դասընթացի խնդիրները.**

- ուսանողին տալ հիմնարար գիտելքներ հաշվողական մաթեմատիկայից,
- մեկնաբանել կիրառական խնդիրների մաթեմատիկական ներկայացումը,
- բացահայտել հաշվողական մեթոդի ճիշտ ընտրության կարևորությունը,
- դիտարկել տարբեր մաթեմատիկական մոդելների կառուցման մեթոդները,
- ծանոթացնել համակարգչով խնդիրներ լուծելու, ըստ կատարած հաշվարկների համապատասխան գրաֆիկներ կառուցելու և հետազոտելու հնարավորություններին:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. Տալու մոտավոր մեծությունների մաթեմատիկական բնութագիրը, ձևակերպելու ֆունկցիաների ինտերպոլացիայի խնդիրը:
2. Դիտարկելու գծային հավասարումների համակարգերի լուծման թվային մեթոդները:
3. Դիտարկելու և ընտրելու դիֆերենցման և ինտեգրման հաշվողական մեթոդներ, հետազոտելու տարբեր դիֆերենցիալ հավասարումների լուծման հիմնական մեթոդները:
4. Ընտրելու և ներկայացնելու ոչ գծային հավասարումների արմատները գտնելու մոտավոր մեթոդները:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. Կառուցելու տարբեր ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելները համապատասխան տիպի հավասարումների տեսքով, հետազոտելու դրանք, առաջարկելու խնդիրների լուծման թվային մեթոդներ:
2. Լուծելու խնդիրներ, որոնք պահանջում են ինտերպոլացիոն մեթոդների կիրառություն, և գնահատելու ստացված արդյունքների սխալանքը:
3. Գրաֆիկական եղանակով առանձնացնելու ոչ գծային հավասարումների արմատները, կիրառելու թվային մեթոդներ ոչ գծային հավասարումների արմատները գտնելու համար:
4. Կիրառելու գծային հանրահաշվական և դիֆերենցիալ հավասարումների լուծման թվային մեթոդները կոնկրետ երևույթների վերլուծության, խնդիրների լուծման համար:
5. Գտնելու տարրական ֆունկցիաների միջոցով չարտահայտվող որոշյալ, կրկնակի և անխսկական ինտեգրալների մոտավոր արժեքները

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. Կատարելու ֆունկցիայի ինտերպոլացման հաշվարկներ՝ լոկալ և գլոբալ ինտերպոլացիոն բազմանդամների օգնությամբ:
2. Դիֆերենցելու և ինտեգրելու հանձնարարված մաթեմատիկական ֆունկցիան՝ կիրառելով դիֆերենցման և ինտեգրման թվային մեթոդները:
3. Կիրառելու անհրաժեշտ գրականության մշակման մեթոդները և միջոցները հաշվողական մաթեմատիկայի և նրա կիրառություններին վերաբերող տեղեկատվության հավաքման և մասնագիտական խնդիրների լուծման համար,
4. Գիտակցորեն կիրառելու խնդիրների լուծման թվային մեթոդները մասնագիտական գործունեության ժամանակ:
5. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:

**8. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Մ4.** Ներկայացնելու գիտական և տնտեսական տարբեր ոլորտներում մեծածավալ տվյալների մշակման և

|  |
|--|
| <p>վերլուծության մեթոդները, ծրագրային համակարգերի կիրառման սկզբունքները, բացատրելու և վերլուծելու դրանց ներդրման նպատակահարմարությունը և արդյունավետությունը, բերելու ծրագրային համակարգերի կիրառման հայտնի օրինակներ:</p> <p><b>Բ2.</b> Օգտվելու խնդիրների մաթեմատիկական մոդելավորման և մոդելների ծրագրավորման մեթոդներից, մաթեմատիկական վերլուծական և վիճակագրական գործիքներից, էլեկտրոնային համակարգերի նախագծման և տեխնիկապես իրագործման ծրագրային և ապարատային միջոցներից, ինչպես նաև վիրտուալ հարթակների գործիքակազմից:</p> <p><b>Բ3.</b> Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:</p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ5.</b> Մասնագիտական հանրությունում կառուցելու տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ բանավոր ու գրավոր խոսք մայրենի և որևէ օտար լեզվով:</p> |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ</li> <li>• փոքր խմբերում տարբեր հարցադրումներ և քննարկումներ</li> <li>• համակարգչային լաբորատոր աշխատանքներ</li> <li>• տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և</li> <li>• անհատական և/կամ խմբային հետազոտական աշխատանքներ:</li> </ul>  |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Դասընթացը գնահատվում է մեկ ընթացիկ գրավոր քննության, համակարգչի վրա ծրագրերն իրականացնելու հմտությունների, հետազոտական աշխատանքի արդյունքների իրականացման, մեկ հանրագումարային քննության և դասընթացին մասնակցության արդյունքների հիման վրա:</p> <p><b>1-ին ընթացիկ քննությունը</b> 4 միավոր է՝ 2 + 2 սկզբունքով, որտեղ մաքսիմալ 2 միավորը ուսանողը վաստակում է ընթացիկ գրավոր քննությունից և մաքսիմալ 2 միավորը՝ լաբորատոր դասընթացից՝ մինչև ընթացիկ քննությունը պլանավորված առաջադրանքներից ուսանողի կողմից կատարված և դասախոսին հանձնված աշխատանքների քանակին համեմատական:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն</b> առավելագույնը 4 միավոր, տրվում է անհատական կամ խմբային հետազոտական աշխատանքի համար՝ ըստ սահմանված կարգի:</p> <p><b>Մասնակցությունը</b>՝ գնահատվում է առավելագույնը 3 միավոր՝ ըստ Ուսումնառության կազմակերպման կարգում սահմանված համամասնության:</p> <p><b>Եզրափակիչ քննություն.</b> Եզրափակիչ գնահատման 9 միավոր է՝ 6 + 3 սկզբունքով, որտեղ մաքսիմալ 6 միավորը ուսանողը վաստակում է բանավոր անցկացվող քննությունից, մաքսիմալ 3 միավորը՝ առաջին ընթացիկ քննությունից հետո պլանավորված առաջադրանքներից ուսանողի կողմից կատարված և դասախոսին հանձնված լաբորատոր աշխատանքների քանակին համեմատական:</p>   |
| <p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Համակարգիչի օգնությամբ խնդրի լուծման հիմնական փուլերը: Միավորների աղբյուրները և դասակարգումը: Մաթեմատիկական արտահայտությունների սխալների հաշվարկ: <b>Թեմա 2.</b> Ֆունկցիայի մոտարկման խնդրի դրվածքը: Լոկալ և գլոբալ ինտերպոլացիաներ: Լագրանժի ինտերպոլացիոն բանաձևը հավասարահեռ հանգույցների համար: Նյուտոնի ինտերպոլացիոն բանաձևը տարբերական հարաբերություններով: <b>Թեմա 3.</b> Գծային հանրահաշվական հավասարումների լուծման մոտավոր մեթոդներ: Գաուս-Շորդանի մեթոդը: <b>Թեմա 4.</b> Ոչ գծային հավասարումների լուծման մոտավոր մեթոդներ: Արմատների առանձնացումը: Համակցման մեթոդը: <b>Թեմա 5.</b> Թվային դիֆերենցում և ինտեգրում: Միմպսոնի (պարաբոլների) բանաձևը: Ադպտիվ ալգորիթմ ինտեգրալների հաշվման համար: Կրկնակի և անիսկական ինտեգրալների հաշվարկ: <b>Թեմա 6.</b> Դիֆերենցիալ հավասարումների լուծման ապրոքսիմացիոն մեթոդներ: Կոշու խնդիրը առաջին կարգի սովորական դիֆերենցիալ հավասարման համար: Էյլերի մեթոդը, Էյլերի մոդիֆիկացված մեթոդը, Ռունգե-Կուտի մեթոդը: Բարձր կարգի դիֆերանցիալ հավասարումների լուծման մեթոդներ:</p>  |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հակոբյան Ռ., Թվային մեթոդներ, մաս I և II, Եր., Հանրագիտարան «Արմենիկա», 2003:</li> <li>2. Նավոյան Վ., Օթարյան Ք., Բարձրագույն մաթեմատիկայի լաբորատոր աշխատանքներ (Թվային մեթոդներ), Եր., 2011:</li> </ol>  |

3. Бахвалов Н., Жидков Н., Кобельков Г. М. Численные методы. М., Лаборатория знаний, 2021.
4. Турчак Л., Плотников П., Основы численных методов. М., Физматлит, 2003.
5. Шарый С., Курс вычислительных методов. Новосибирск, 2015.

|   |  |                  |
|---|--|------------------|
| 1. 0104/B38   | 2. Տվյալների հենքեր և տվյալագիտության հիմունքներ | 3. 6 ECTS կրեդիտ |
| 4. 5 ժամ/շաբ.   | 5. 30/45/0                                       |                  |
| 6. 6-րդ կիսամյակ  | 7. Եզրափակիչ գնահատումով                         |                  |
| <p><b>8. Դասընթացի նպատակն է</b> սովորեցնել կատարել առարկայական տիրույթի վերլուծություն, ստեղծել նրա կոնցեպտուալ սխեման, արտապատկերել այդ սխեման համապատասխան մոդելի: Դասընթացում ներկայացվում են տվյալների հենքերի նախագծման տեսական հիմունքները, հիմնական սխեմաները և մոդելները, ուսումնասիրվում է ռելացիոն հանրահաշիվը, տվյալների հենքերի ռելացիոն և օբյեկտակողմնորոշված մոդելները: Ներկայացվում են տվյալների հենքերի նորմալացման սկզբունքները: Ուսումնասիրվում են հարցումների SQL և OQL լեզուները: Ներկայացվում են տվյալագիտության (Data Science) և մեքենայական ուսուցման հիմնական սկզբունքները և մեթոդները:</p>  |  |                  |
| <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ուսումնասիրել առարկայական տիրույթի կոնցեպտուալ մոդելների տարատեսակները (էություն/կապ մոդել, օբյեկտային մոդել, ռելացիոն մոդել) և մի մոդելի արտապատկերումը մեկ այլ մոդելի:</li> <li>2. Ուսումնասիրել ռելացիոն հանրահաշիվի տարրերը և ներկայացնել կապը հարցումների SQL լեզվի հետ:</li> <li>3. Բացատրել ֆունկցիոնալ կախվածությունների էությունը և հարաբերությունների նորմալացման տեսության տարրերը:</li> <li>4. Ներկայացնել տվյալների հենքերում հնարավոր անոմալիաները և դրանցից խուսափելու եղանակները:</li> <li>5. Ուսումնասիրել NoSQL տվյալների հենքերի առանձնահատկությունները:</li> <li>6. Ուսումնասիրել տվյալագիտության և մեքենայական ուսուցման արդի մեթոդները:</li> </ol> |  |                  |
| <p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p>  |  |                  |
| <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p>   |  |                  |
| <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնելու տվյալների հենքերի տեսության հիմունքները, տվյալների հենքերի հիմնական սխեմաները (կոնցեպտուալ, տրամաբանական, ֆիզիկական), տվյալների հենքերի կառուցման, օգտագործման և փոփոխման սկզբունքները:</li> <li>2. Նկարագրելու տվյալների ներկայացման տարբեր մոդելները՝ E/R, ռելացիոն, օբյեկտների կողմնորոշված, ցանցային, հիերարխիկ;</li> <li>3. Ներկայացնելու ռելացիոն հանրահաշիվի տարրերը;</li> <li>4. Բացատրելու տվյալագիտության խնդիրները, հիմնական սկզբունքները, մեծածավալ տվյալների մշակման և վերլուծության մեթոդները:</li> <li>5. Ներկայացնելու մեքենայական ուսուցման հիմնական մոդելները, վերահսկվող և չվերահսկվող ուսուցման եղանակները:</li> </ol>  |  |                  |
| <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p>   |  |                  |
| <ol style="list-style-type: none"> <li>1. Կառուցելու առարկայական տիրույթի կոնցեպտուալ մոդելը և արտապատկերելու այն այլ մոդելների:</li> <li>2. Որոշելու և մեկնաբանելու ֆունկցիոնալ կախվածությունները ռելացիոն մոդելում:</li> <li>3. Կատարելու հարաբերությունների սխեմաների դեկոմպոզիցիա, կառուցելու նորմալ ձևեր:</li> <li>4. Ձևակերպելու հարցումներ SQL և OQL լեզուներով:</li> <li>5. Կիրառելու տվյալագիտության (Data Science) մեթոդները մեծածավալ տվյալներ մշակելու և վերլուծություններ կատարելու նպատակով:</li> <li>6. Ծրագրորեն իրականացնելու մեքենայական ուսուցման մոդելները:</li> </ol>  |  |                  |
| <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p>  |  |                  |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմարը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն.</b> Հետազոտական բաղադրիչ՝ առավելագույնը <b>4 միավոր</b>:</p> <p><b>Եզրափակիչ քննություն.</b> Բանավոր, առավելագույնը <b>8 միավոր</b> քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 2 տեսական հարց (յուրաքանչյուրը՝ առավելագույնը 3 միավոր), 1 խնդիր՝ 2 միավոր, <b>Ինքնուրույն աշխատանք</b>՝ առավելագույնը <b>4 միավոր</b>՝ գործնական դասընթացից՝ ըստ ընթացիկ քննաշրջանում ուսանողի կատարած ստուգողական աշխատանքների, անհատական տնային առաջադրանքների և գործնական դասընթացից առաջադիմության:</p>   |
| <p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Տվյալների արստրակտ տիպեր և տվյալների կառուցվածքներ: <b>Թեմա 2.</b> Գծային կառուցվածքներ՝ կապակցված ցուցակներ, պահունակ, հերթ: Տիպային գործողություններ գծային կառուցվածքների հետ: <b>Թեմա 3.</b> Թվաբանական արտահայտությունների ներկայացման նախածանցային (prefix), միջածանցային (infix) և վերջածանցային (postfix) ձևեր: <b>Թեմա 4.</b> Նախապատվությունների հերթ: Իրականացման եղանակները: <b>Թեմա 5.</b> Ծառեր: Շրջանցման և ներկայացման եղանակներ: Որոնման բինար ծառեր: <b>Թեմա 6.</b> Կարգավորման ալգորիթմներ: Ալգորիթմների բարդությունը և նրանց համեմատական բնութագրերը: <b>Թեմա 7.</b> Հավասարակշռված ծառեր, AVL ծառեր, բուրգեր, սև-կարմիր ծառեր, B ծառեր: <b>Թեմա 8.</b> Գրաֆներ: <b>Թեմա 9.</b> Հեշ-աղյուսակներ: <b>Թեմա 10.</b> Չհատվող բազմությունների համակարգեր:</p> |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Սարգսյան Ս., Հովակիմյան Ա., Դարբինյան Կ., Տվյալների կառուցվածքներ, Եր., 2010:</li> <li>2. Уильям Топп, Уильям Форд, Структуры данных в C++, М., Бином, 2000.</li> <li>3. Ахо А., Хопкрофт Д., Ульман Дж., Структуры данных и алгоритмы, Изд-во „Вильямс“, М., 2000.</li> <li>4. Каррано Ф., Причард Дж., Абстракция данных и решение задач на C++, Стены и зеркала. Изд-во „Вильямс“, Москва-Санкт-Петербург-Киев., 2003.</li> <li>5. Майкл Мейн, Уолтер Савитч, Структуры данных и другие объекты в C++, Изд-во „Вильямс“, М., 2000г.</li> <li>6. Вирт Н., Структура данных и алгоритмы, Изд-во „Мир“, М., 1988.</li> <li>7. Кормен Т., Лейзерсон Ч., Ривест Р. Штайн К. Алгоритмы. Построение и анализ. 3-е издание, М., Изд-во Вильямс, 2013.</li> </ol>                |

|  |                          |                  |
|--|--------------------------|------------------|
| 1. 0104/B51  | 2. Web ծրագրավորում /ՀԲ  | 3. 8 ECTS կրեդիտ |
| 4. 8 ժամ/շաբ.  | 5. 30/90/0               |                  |
| 6. 6-րդ կիսամյակ   | 7. Եզրափակիչ գնահատումով |                  |
| <p><b>8. Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել վեբ կայքերի պատրաստման հիմունքներն և գործիքները, տալ գիտելիք Java ծրագրավորման լեզվի օբյեկտների կողմնորոշված մոտեցումների մասին, ծանոթացնել Java-պլատֆորմին, հիմնական դասերի և գրադարանների մեթոդներին և մոդելներին, բաշխված ծրագրավորման սկզբունքներին, միջոցները, պատկերացում տալ .NET պլատֆորմի յուրահատկությունների մասին: Ստեղծել հավելվածներ C#, Python լեզուներով:</b></p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ուսանողին տալ համապատասխան գիտելիքներ WEB ծրագրավորումից,</li> <li>2. մեկնաբանել HTML փաստաթղթի կառուցման կանոնները,</li> <li>3. բացահայտել WEB կայքի ստեղծման համար անհրաժեշտ գիտելիքներ,</li> <li>4. իրականացնել հետազոտություն WEB-ծրագրավորման նորագույն լեզուների և տեխնոլոգիաների ուղղությամբ,</li> <li>5. ուսանողներին ծանոթացնել Java լեզվի առանձնահատկություններին,</li> <li>6. բացատրել բաշխված ծրագրավորման սկզբունքները, հոսքային և դատագրամային սոկետների կիրառման եղանակները,</li> <li>7. ներկայացնել լեզվի GUI-ծրագրավորման միջոցները,</li> <li>8. դիտարկել տարբեր տիպի Java-հավելվածների (ապլետներ, Web-սերվիսներ և այլն) ստեղծման</li> </ol> |                          |                  |

- եղանակները և ստանդարտ միջոցները,
- 9. ծանոթացնել C#, Python ծրագրավորման լեզուների հիմնական հնարավորություններին,
- 10. Պատկերացում տալ C#, Python լեզուների աջակցմամբ Web-հավելվածների մշակման միջավայրերի մասին,
- 11. ստեղծել հաճախորդ-սերվեր ծրագրեր:

**9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

- 1. Բացատրելու Atom, brackets փաթեթների միջավայրում HTML, CSS, JavaScript, PHP լեզուներով ծրագրային կոդեր գրելու սկզբունքները:
- 2. Ներկայացնելու հոսթինգի ընտրության չափանիշները:
- 3. Թվարկելու JavaScript, PHP ծրագրավորման լեզուների ֆունկցիոնալ և օբյեկտային կողմնորոշված մեթոդները:
- 4. Ներկայացնելու Java-հավելվածների մշակման հիմնական գործիքային միջոցները և դրանց կիրառման եղանակները:
- 5. Նկարագրելու բազմահոսք, ինչպես նաև կլիենտ-սերվեր ծրագրերի մշակման և իրականացման հիմնական միջոցները և ստանդարտները:
- 6. սահմանելու C#-ի վրա հիմնված օբյեկտների կողմնորոշման ծրագրավորման հիմնական տարրերը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

- 1. Կիրառելու atom, brackets փաթեթները HTML, CSS, JavaScript, PHP լեզուներով ծրագրային կոդեր գրելու համար:
- 2. Կիրառելու JavaScript, PHP ծրագրավորման լեզուների ֆունկցիոնալ և օբյեկտային կողմնորոշված մեթոդները ծրագրային կոդեր գրելու համար:
- 3. Ստեղծելու գործող Web-կայք,
- 4. Օգտագործելու Java լեզվի հիմնական գործիքները, տեխնիկական միջոցները, տվյալների փոխանցման ստանդարտ ձևերը:
- 5. Կիրառելու Java-ի հիմնական դասերը և գրադարանները, կլիենտ-սերվեր ծրագրերի հիմնական միջոցները գործնական հավելվածներ մշակելու համար:
- 6. Մշակելու բազմահոսքային գրաֆային ծրագրեր:
- 7. Աշխատելու .NET Framework միջավայրում:
- 8. Աշխատելու տվյալների և XML փաստաթղթերի հետ:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

- 1. Էլեկտրոնային գրադարաններից, ամսագրերից, համացանցից փնտրելու օգտակար գիտական և տեխնիկական տեղեկատվություն:
- 2. Հավաքագրելու, մշակելու և վերլուծելու անհրաժեշտ տեղեկատվություն:
- 3. Օգտագործելու HTML, CSS, JavaScript, PHP լեզուների նորացված տարբերակները:
- 4. Աշխատելու թիմի կազմում:
- 5. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
- 6. Գործնականում կիրառելու ձեռք բերած գիտելիքները:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.** Ներկայացնելու և բացատրելու ծրագրավորման ժամանակակից սկզբունքները, մեթոդները (կառուցվածքային մեթոդ, օբյեկտային կողմնորոշված մեթոդ, ֆունկցիոնալ ծրագրավորման մեթոդ, համակարգային մեթոդ, տարրային ծրագրավորման մեթոդ), և արդի տեխնոլոգիաները:

**Ա2.** Թվարկելու ծրագրավորման արդի լեզուները, դասակարգելու և ներկայացնելու դրանց առանձնահատկությունները, հիմնավորելու տարբեր խնդիրների ծրագրային իրականացման համար կոնկրետ լեզվի ընտրությունը:

**Ա3.** Բացատրելու գուգահեռ և բաշխված ծրագրավորման, տարբեր լեզուներով աջակցվող web-ծրագրավորման, գրաֆիկական միջերեսի ծրագրավորման, տեխնիկական համակարգերի և միկրոկոնտրոլերների ծրագրավորման առանձնահատկությունները, սկզբունքները և մեթոդները, ներկայացնելու ծրագրերի օրինակներ:

**Ա7.** Բացահայտելու, ներկայացնելու, վերլուծելու և մեկնաբանելու ծրագրային համակարգերի, ապարատային և ծրագրային լուծումների մարքետինգային բնութագրիչները և ցուցանիշները:

**Բ3.** Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:

|   |
|---|
| <p><b>F4.</b> Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:</p> <p><b>F5.</b> Նախագծելու անվտանգ և պաշտպանված հաշվողական համակարգեր և ցանցեր՝ կիրառելով համակարգչային և ցանցային ճարտարապետության առանձնահատկությունները, դրանց ապարատային և տարրային հենքի կառուցվածքը:</p> <p><b>F6.</b> Հավաքագրելու մասնագիտական տեղեկատվություն ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ պահանջող տարբեր պարզ և բարդ խնդիրների լուծման համար՝ օգտագործելով հաղորդակցման և որոնողական ժամանակակից տարբեր համակարգեր, նորարարական մեթոդներով իրականացնելու հավաքագրված մասնագիտական տվյալների քանակական և որակական վերլուծություններ, կատարելու տրամաբանական եզրահանգումներ:</p> <p><b>F8.</b> Ուսումնասիրելու ծրագրային համակարգերի սպառման շուկաները, պլանավորելու, նախագծելու և կառուցելու շուկայում պահանջված ծրագրային համակարգեր, հավաքագրելու և վերլուծելու ծրագրային համակարգերի ներդրման և շահագործման ցուցանիշները:</p> <p><b>Գ1.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ3.</b> Որոշելու իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:</p> <p><b>Գ5.</b> Մասնագիտական հանրություն կառուցելու տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ բանավոր ու գրավոր խոսք մայրենի և որևէ օտար լեզվով:</p> |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ</li> <li>• փոքր խմբերում տարբեր հարցադրումներ և քննարկումներ</li> <li>• գործնական պարապմունքներ</li> <li>• լաբորատոր աշխատանքներ</li> <li>• տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ,</li> <li>• խմբային աշխատանք և նախագծեր:</li> </ul>   |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><i>Եզրափակիչ գնահատումով</i> դասընթաց, առավելագույնը <b>20 միավոր</b> (4+4+7+2+3):</p> <p><b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն.</b> հետազոտական աշխատանք, գնահատվում է առավելագույնը <b>4 միավոր</b>՝ ըստ գնահատման կարգի:</p> <p><b>Եզրափակիչ քննություն.</b> բանավոր՝ առավելագույնը <b>7 միավոր</b> քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 1 տեսական հարց (առավելագույնը 2 միավոր), երկու խնդիր (1-ինը՝ 2 միավոր և 2-րդը՝ 3 միավոր):</p> <p><b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>2 միավոր</b>,</p> <p><b>Ինքնուրույն աշխատանք.</b> Առավելագույնը <b>3 միավոր</b>՝ կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջադրանքներից և ինքնուրույն աշխատանքներից ձեռք բերումների համար:</p>   |
| <p><b>1. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Բաժին 1. Web-ծրագրավորում և PHP լեզու</b></p> <p><b>Թեմա 1.</b> Համաշխարհային սարդոստայն. World Wide Web: Դիտարկիչներ և խմբագրեր: <b>Թեմա 2.</b> HTML հիպերտեքստերի նշագրման լեզու: <b>Թեմա 3.</b> CSS ոճերի աստիճանական լեզու: <b>Թեմա 4.</b> JavaScript լեզուն, նրա քերականությունը և նրա օպերատորները, ֆունկցիաները և օբյեկտները: <b>Թեմա 5.</b> PHP լեզուն, սերվեր, հոսթինգ:</p> <p><b>Բաժին 2. Java ծրագրավորման լեզու</b></p> <p><b>Թեմա 1.</b> Դասեր, կոնստրուկտորներ, մեթոդներ, ինտերֆեյսներ, փաթեթներ: <b>Թեմա 2.</b> Ապլետների ծրագրավորում: <b>Թեմա 3.</b> Պատահարներ, դրանց օգտագործումը ապլետներում և կիրառություններում: <b>Թեմա 5.</b> Պրոցեսներ, հոսքեր, նախապատվություններ: Մինխորնիզացիայի մեխանիզմներ: Ֆայլերի հետ կապված հոսքերի ստեղծում: <b>Թեմա 7.</b> Հիշողության ղեկավարում: Պաշտպանության մեթոդներ: Ցանցային կիրառությունների ստեղծում: <b>Թեմա 8.</b> Տվյալների փոխանցում սոկետների միջոցով: Հոսքային և դատագրամային սոկետներ: <b>Թեմա 9.</b> Java-կիրառության կապը Web-սերվերի հետ: <b>Թեմա 10.</b> Java-ի գրաֆիկական միջոցները:</p> <p><b>Բաժին 3. C# ծրագրավորման լեզու</b></p>  |

**Թեմա 1.** .NET Framework-ի հիմնական հասկացությունները: **Թեմա 2.** C# ծրագրավորման լեզուն: **Թեմա 3.** C# օբյեկտային կողմնորոշմամբ ծրագրավորումը: **Թեմա 4.** Բնութֆեյսներ ու հավաքածուներ: **Թեմա 5.** Բազմահոսքային ծրագրավորում .NET միջավայր: **Թեմա 6.** Հավաքում: Անվտանգություն: **Թեմա 7.** Տվյալներ: Աշխատանք XML –ի հետ: **Թեմա 8.** Windows հավելվածներ: Կառավարման էլեմենտներ:

**Բաժին 4. Python ծրագրավորման լեզու**

**Թեմա 1.** Web-հավելվածների ստեղծման համար կիրառվող Python լեզվի կառուցվածքները: **Թեմա 2.** Python լեզվով Web-հավելվածների արագ մշակման համար նախատեսված Django շրջանակը: **Թեմա 3.** Python լեզվի աջակցմամբ Web-հավելվածների մշակման Tornado, Flask, aiohttp և այլ միջավայրեր: **Թեմա 4.** Հարորդագրությունների փոխանակման արձանագրություններ. http, Protocol Buffers:

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Матросов А., Сергеев А., HTML 5.0, «БХВ-Петербург», 2005.
2. Джон Дакетт, "HTML и CSS. Разработка и дизайн веб-сайтов", 2013.
3. Пол Мак Федерик, использование JavaScript, 2002.
4. <https://www.w3schools.com> / HTML, CSS, JavaScript, PHP tutorials.
5. Монахов В.В. Язык программирования Java и среда NetBeans. 3-е изд., БХВ-Петербург, 2011.
6. Шилдт Г. Полный справочник по Java. Java SE 6 Edition, 7-е изд., М.,Изд. Дом «Вильямс», 2007.
7. Машнин Т.С. Современные технологии Java на практике, БХВ- Петербург, 2015.
8. Блох Дж. Java. Эффективное программирование. М., Лори, 2002.
9. Троелсен Э., С#, и платформа .NET. Библиотека программиста.pdf
10. Павловская Т.А., С#. Программирование на языке высокого уровня. Учебник для вузов. СПб.: Питер, 2009. 432 с:
11. Златопольский Д. М. Основы программирования на языке Python. Изд-во ДМК, М., 2017г.
12. <https://habr.com/ru/hub/django/>
13. <https://tproger.ru/translations/create-your-first-django-app/>
14. <https://www.djangoproject.com/start/>
15. <https://docs.djangoproject.com/en/4.0/>

|   |   |                 |
|---|---|-----------------|
| 1. 0105/B45   | 2. Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ | 3.5 ECTS կրեդիտ |
| 4. 5 ժամ/շաբ.   | 5. 45/30/0                              |                 |
| 6. 7-րդ կիսամյակ  | 7. Եզրափակիչ գնահատումով                |                 |
| <p><b>8. Մոդուլի նպատակն է</b> ուսանողներին ծանոթացնել մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումներին, նրանց համար դրված խնդիրներին, գտնել լուծման մաթեմատիկական և մտավոր մեթոդները, պարզել դրված խնդրի կոռեկտությունը:</p> <p><b>Մոդուլի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ուսանողներին ծանոթացնել գծային, ոչ գծային մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումների հետ, նրանց դասակարգման և կանոնական տեսքերի հետ,</li> <li>2. ծանոթացնել հիպերբոլական, պարաբոլական և էլիպտական տիպի հավասարումների հետ, նրանց համար դրված եզրային խնդիրներին,</li> <li>3. բացատրել փոփոխականների անջատման մեթոդի ընդհանուր սխեման,</li> <li>4. լուծել հիպերբոլական, պարաբոլական և էլիպտական տիպի հավասարումների համար դրված որոշ եզրային խնդիրներ:</li> </ol>  |   |                 |
| <p><b>9. Մոդուլի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և խնամքություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Սահմանելու գծային, քվադրատային մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարում, հավասարման կարգ:</li> <li>2. Դասակարգելու երկրորդ կարգի մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումները երկու փոփոխականի դեպքում:</li> <li>3. Ձևակերպելու I, II, III եզրային խնդիրները հիպերբոլական, պարաբոլական և էլիպտական հավասարումների համար:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Երկու փոփոխականի երկրորդ կարգի մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումները բերելու կանոնական տեսքի:</li> <li>2. Գտնելու երկրորդ կարգի մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարման ընդհանուր լուծումը:</li> <li>3. Լուծելու I, II, III եզրային խնդիրները հիպերբոլական, պարաբոլական և էլիպտական հավասարումների համար:</li> <li>4. Պարզելու խնդրի կոռեկտությունը:</li> </ol> |   |                 |

|   |  |  |
|---|--|--|
| <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Կառուցելու մաթեմատիկական մոդելներ:</li> <li>Աշխատելու թիմում:</li> <li>Հստակ ներկայացնելու միտքը:</li> <li>Օգտվելու տարբեր աղբյուրներից, վերլուծելու և դասակարգելու ստացած տեղեկատվությունը:</li> <li>Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</li> </ol>   |  |  |
| <p><b>10. Մոդուլը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Բ1.</b> Լուծելու մասնագիտական ոլորտի խնդիրներ՝ օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար գաղափարները, մոդելները, սկզբունքները, դրույթները, խնդիրների լուծման եղանակները:</p> <p><b>Բ2.</b> Օգտվելու խնդիրների մաթեմատիկական մոդելավորման և մոդելների ծրագրավորման մեթոդներից, մաթեմատիկական վերլուծական և վիճակագրական գործիքներից, էլեկտրոնային համակարգերի նախագծման և տեխնիկապես իրագործման ծրագրային և ապարատային միջոցներից, ինչպես նաև վիրտուալ հարթակների գործիքակազմից:</p> <p><b>Բ3.</b> Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:</p> <p><b>Բ4.</b> Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:</p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> |  |  |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>դասախոսություն</li> <li>գործնական</li> <li>քննարկում</li> <li>զեկուցում</li> <li>ինքնուրույն աշխատանք:</li> </ul>  |  |  |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Եզրափակիչ գնահատումով դասընթաց</b>՝ առավելագույնը <b>20 (4+4+7+5)</b> միավոր:</p> <p><b>2 ընթացիկ քննություններ.</b> գրավոր՝ յուրաքանչյուրը՝ առավելագույնը <b>4 միավոր:</b> Տոմսը պարունակում է 5 առաջադրանք (2x0.5+3x1):</p> <p><b>Եզրափակիչ քննություն.</b> բանավոր՝ առավելագույնը <b>7 միավոր:</b> Տոմսը պարունակում է 3 հարց. 2 տեսական հարց՝ յուրաքանչյուրը 2 միավոր և մեկ խնդիր՝ 3 միավոր:</p> <p><b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>5 միավոր,</b> կիսամյակի ընթացքում իրականացրած ստուգողական աշխատանքների և տնային առաջադրանքների համար: Միավորների քայլը 0,25 է:</p>   |  |  |
| <p><b>13. Մոդուլը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Երկրորդ կարգի մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումների դասակարգումը:</p> <p><b>Թեմա 2.</b> Կոշիի խնդիր և եզրային խնդիրներ: <b>Թեմա 3.</b> Հիպերբոլական տիպի հավասարումներ: <b>Թեմա 4.</b> Պարաբոլական տիպի հավասարումներ: <b>Թեմա 5.</b> Էլիպտական տիպի հավասարումներ:</p>   |  |  |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Ա.Ֆյան Ս., Պոդոլայան Ա., Մաթֆիզ խնդիրների ժողովածու, Եր., 2001:</li> <li>Ա.Ֆյան Ս., Մաթֆիզ հավասարումներ, Եր., 2007:</li> <li>Тихонов А.Н., Самарский А.А., Уравнения математической физики, МГУ, Москва, 1999.</li> <li>Владимиров В.С., Сборник задач по уравнениям математической физики, Наука, Москва, 1982.</li> </ol>   |  |  |

|   |                                  |                  |
|---|----------------------------------|------------------|
| 1. 0105/B46   | 2. Մաթեմատիկական տրամաբանություն | 3. 2 ECTS կրեդիտ |
| 4. 3 ժամ/շաբ.   | 5. 30/0/0                        |                  |
| 6. 7-րդ կիսամյակ  | 7. Առանց եզրափակիչ գնահատման     |                  |
| <p><b>8. Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին տեսությունների ֆորմալիզացման անհրաժեշտությամբ, հնարավորություններին, ֆորմալ տեսությունների հատկություններին և կիրառման ոլորտներին:</b></p>   |                                  |                  |
| <p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Ներկայացնելու ֆորմալ տեսությունների սահմանման հնարավորությունները, նրանց ներկայացվող</li> </ol> |                                  |                  |

|  |
|--|
| <p>պահանջները, թվարկելու նրանց հատկությունները:</p> <p>2. Ձևակերպելու ֆորմալ տեսությունների հատկություններին վերաբերող հայտնի պնդումները և նշելու նրանց կիրառումները:</p> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <p>1. Աշխատելու արքիոմատիկ տեսությունների սահմաններում:</p> <p>2. Հետազոտելու ֆորմալ տեսությունների հատկությունները:</p> <p><b>գ. քննիչական/փոխանցելի կարողություններ</b></p> <p>1. Կատարելու ճշգրիտ և տրամաբանված դատողություններ:</p>  |
| <p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Բ1.</b> Լուծելու մասնագիտական ոլորտի խնդիրներ՝ օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար գաղափարները, մոդելները, սկզբունքները, դրույթները, խնդիրների լուծման եղանակները:</p> <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ3.</b> Որոշելու իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:</p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p>   |
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ</li> <li>• բանավոր հարցումներ</li> <li>• տնային աշխատանք</li> <li>• ինքնուրույն աշխատանք</li> <li>• ստուգողական աշխատանք:</li> </ul>   |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Առանց եզրափակիչ գնահատման</b> դասընթաց՝ առավելագույնը <b>20 (4+4+7+3+2)</b> միավոր:</p> <p><b>2 ընթացիկ քննություններ.</b> գրավոր՝ յուրաքանչյուրը առավելագույնը <b>4 միավոր:</b> Տոմսը պարունակում է 4 հարց՝ յուրաքանչյուրը 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p> <p><b>Ինքնուրույն աշխատանք.</b> առավելագույնը <b>7 միավոր</b>՝ ինքնուրույն և անհատական աշխատանքների համար:</p> <p><b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>3 միավոր</b>՝ ստուգողական աշխատանքների և դասերին ակտիվության համար:</p> <p><b>Մասնակցություն.</b> առավելագույնը <b>2 միավոր:</b></p>  |
| <p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Տարբեր տեսություններում առաջացած հակասությունները և անհեթեթությունները որպես տեսությունների ֆորմալիզացման անհրաժեշտության խթանիչ: <b>Թեմա 2.</b> Ֆորմալ տեսության սահմանման տարբեր եղանակներ: <b>Թեմա 3.</b> Ֆորմալ տեսություններին ներկայացվող պահանջները: <b>Թեմա 4.</b> Ասույթային դասական հաշիվ, նրա անհակասելիությունը, լրիվությունը, լուծելիությունը: <b>Թեմա 5.</b> Առաջին կարգի ֆորմալ տեսության սահմանումը: <b>Թեմա 6.</b> Մեկնաբանություններ, նրանց հատկությունները: <b>Թեմա 7.</b> Առաջին կարգի պրեդիկատային հաշվի համակարգեր, նրանց անհակասելիությունը: <b>Թեմա 8.</b> Գյոդելի թեորեմը պրեդիկատային հաշվի լրիվության մասին: Հենկինի, Սկոլեմի ապացույց: <b>Թեմա 9.</b> Ֆորմալ թվաբանությունը որպես առաջին կարգի տեսության օրինակ: <b>Թեմա 10.</b> Ֆորմալ թվաբանության հատկությունները: <b>Թեմա 11.</b> Գյոդելի թեորեմը ֆորմալ թվաբանության ոչ լրիվության մասին:</p> |
| <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Мендельсон Э., Введение в математическую логику, Москва, "Наука", 1971.</li> <li>2. Клини С.К., Введение в метаматематику, И. Иностран.Литер., Москва, 1957.</li> <li>3. Н.К.Верещагин, А.Шень, Лекции по математической логике и теории алгоритмов. Часть 2. Языки и исчисления. М., МЦНМО, 2002.</li> </ol>  |

|  |   |                  |
|--|---|------------------|
| 1. 0104B47   | 2. Էլեկտրատեխնիկա և էլեկտրոնային սարքեր | 3. 4 ECTS կրեդիտ |
| 4. 4 ժամ/շաբ.  | 5. 30/0/30                              |                  |
| 6. 4-րդ կիսամյակ   | 7. Առանց եզրափակիչ գնահատման            |                  |
| <p><b>8. Դասընթացի նպատակն է</b> ուսումնասիրել էլեկտրատեխնիկական, էլեկտրական չափիչ և էլեկտրոնային սարքերի կառուցվածքները, կատարել տեխնիկական և ֆիզիկական օբյեկտների էլեկտրական շղթաների հաշվարկներ և մշակումներ:</p>   |   |                  |
| <p><b>Դասընթացի խնդիրները</b><br/>Ուսանողներին ուսուցանել՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. էլեկտրական շղթաների տեսության օրենքները,</li> <li>2. էլեկտրամագնիսական և մագնիսական դաշտերի հաշվարկները,</li> <li>3. ոչ գծային էլեկտրական շղթաների ֆունկցիոնալ հավասարումները,</li> <li>4. լուծելու ոչ գծային էլեկտրական շղթաների ֆունկցիոնալ հավասարումները,</li> <li>5. կատարելու մագնիսական շղթայի հաշվարկ,</li> <li>6. կատարելու հաստատուն հոսանքի շղթայի վերլուծություն,</li> <li>7. կատարելու փոփոխական հոսանքի շղթայի վերլուծություն:</li> </ol> |   |                  |
| <p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p>   |   |                  |
| <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p>  |   |                  |
| <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնելու էլեկտրական շղթաների տեսությունը, բացատրելու նրա օրենքները,</li> <li>2. Բնութագրելու հաստատուն հոսանքի և փոփոխական հոսանքի շղթաները, ներկայացնելու նրանց առանձնահատկությունները, մեկնաբանելու նրանց բնութագրերը,</li> <li>3. Ներկայացնելու ռեզոնանսի երևույթը և հաշվարկելու շղթաների հաճախականային բնութագրերը,</li> <li>4. Ներկայացնելու և մեկնաբանելու գծային էլեկտրական շղթաների ֆունկցիոնալ հավասարումները,</li> </ol>  |   |                  |
| <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p>  |   |                  |
| <ol style="list-style-type: none"> <li>1. Կատարելու էլեկտրական շղթաներում անցողիկ պրոցեսների հաշվարկ և վերլուծություն,</li> <li>2. Հաշվարկելու էլեկտրամագնիսական դաշտը,</li> <li>3. Հաշվարկելու մագնիսական շղթաները,</li> <li>4. Վերլուծելու հաստատուն և փոփոխական հոսանքների շղթաները,</li> <li>5. Լուծելու գծային և ոչ գծային էլեկտրական շղթաների ֆունկցիոնալ հավասարումներ,</li> </ol>  |   |                  |
| <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p>   |   |                  |
| <ol style="list-style-type: none"> <li>1. Կիրառելու հաշվողական տեխնիկա և տարբեր ծրագրային համակարգեր հաշվարկներում և հետզոտական գործընթացներում,</li> <li>2. Կիրառելու էլեկտրաչափիչ սարքավորումները և սարքերը</li> <li>3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը,</li> <li>4. Աշխատելու թիմում, կատարելու նախագծային աշխատանք:</li> </ol>   |   |                  |
| <p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p>  |   |                  |
| <p><b>Ա6.</b> Ներկայացնելու ռոբոտատեխնիկական օբյեկտների ծրագրային ապահովման սկզբունքները և դրանց վրա հիմնված ավտոմատ կառավարման համակարգերի սխեմատեխնիկական իրականացման հիմնական հասկացությունները և եղանակները:</p>   |   |                  |
| <p><b>Բ4.</b> Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:</p>   |   |                  |
| <p><b>Բ5.</b> Նախագծելու անվտանգ և պաշտպանված հաշվողական համակարգեր և ցանցեր՝ կիրառելով համակարգչային և ցանցային ճարտարապետության առանձնահատկությունները, դրանց ապարատային և տարրային հենքի կառուցվածքը:</p>   |   |                  |
| <p><b>Բ7.</b> Նախագծելու և կառուցելու ավտոմատ կառավարման համակարգեր (ռոբոտներ), մշակելու դրանց սխեմատեխնիկական իրականացման միջոցները և ծրագրային ապահովումը:</p>   |   |                  |
| <p><b>Գ2.</b> Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p>   |   |                  |
| <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p>  |   |                  |
| <p><b>Գ5.</b> Մասնագիտական հանրություն կառուցելու տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ բանավոր ու գրավոր խոսք մայրենի և որևէ օտար լեզվով:</p>  |   |                  |

|  |
|--|
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• քննարկում /բանավեճ</li> <li>• համագործակցային աշխատանք</li> <li>• մտազրոհ</li> <li>• վերլուծական մեթոդ</li> <li>• խոսքային կամ բանավոր մեթոդ</li> <li>• գրավոր մեթոդ</li> <li>• բացատրական մեթոդ</li> </ul>  |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b><br/> <b>Առանց եզրափակիչ գնահատման</b> մոդուլ առավելագույնը <b>20</b> (4+5+8+3) միավոր:<br/> <b>1-ին ընթացիկ քննություն.</b> առավելագույնը <b>4</b> միավոր:<br/> <b>2-րդ ընթացիկ քննություն.</b> առավելագույնը <b>5</b> միավոր:<br/> <b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>8</b> միավոր (լաբորատոր աշխատանքների գնահատում):<br/> <b>Մասնակցություն.</b> առավելագույնը <b>3</b> միավոր:</p>   |
| <p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b></p> <p><b>Թեմա 1. Էլեկտրական շղթաների տեսություն:</b> Էլեկտրական շղթաների հիմնական հասկացություններ և տարրեր: Էլեկտրական չափիչ սարքեր:</p> <p>Շղթաների տեսության հիմնական հասկացությունները, էներգիայի աղբյուրներ. Էլեկտրական շղթաների հիմնական օրենքները: Էլեկտրական չափող սարքերի դասակարգումը և բնութագրերը: Մագնիսաէլեկտրական սարքեր, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը և կիրառման տիրույթը: Չափիչ կամրջակների աշխատանքի սկզբունքը: Հաստատուն հոսանքի չափող կամրջակ: Ունակություն և ինդուկտիվություն չափող փոփոխական հոսանքով չափող կամրջակի աշխատանքի սկզբունքը:</p> <p><b>Թեմա 2 Հաստատուն հոսանքի էլեկտրական շղթաներ</b><br/> Կիրխհովի օրենքները, պոտենցիալների դիագրաման: Վերադրման մեթոդ, փոխադարձության սկզբունքը: Կոնտուրային հոսանքների մեթոդ: Հանգուցային պոտենցիալների մեթոդ, համարժեք գեներատորի մեթոդ: Հաստատուն հոսանքի շղթայում հզորությունը: Հզորությունների բալանսը: Հզորության չափումը վատմետրով:</p> <p><b>Թեմա 3. Միևուստիպալ էշու-ով և հոսանքներով գծային շղթաներ</b><br/> Միաֆազ փոփոխական հոսանքի հասկացությունը և նրա պատկերը կոմպլեքս հարթության վրա: Փոփոխական հոսանքի շղթայում ակտիվ դիմադրությունը, ինդուկտիվությունը և ունակությունը: Փոփոխական հոսանքի շղթայում հզորությունը: Հզորության չափումը վատմետրով: Հզորությունների բալանսը, դաշտերի էներգիան: Ռեզոնանսը էլեկտրական շղթայում: Շղթաների հաշվարկը ռեզոնանսի դեպքում: Լարումների ռեզոնանսի դեպքում ամպլիտուդա-հաճախականային բնութագրերը: Հոսանքների ռեզոնանսի դեպքում ամպլիտուդա-հաճախականային բնութագրերը:</p> <p><b>Թեմա 4. Եռաֆազ շղթաներ</b><br/> Եռաֆազ շղթաների հասկացությունը: «Աստղ» միացված սիմետրիկ եռաֆազ շղթա: «Եռանկյուն» միացված եռաֆազ շղթա: Ոչ սիմետրիկ եռաֆազ շղթաներ: Հզորությունը եռաֆազ շղթայում:</p> <p><b>Թեմա 5. Էլեկտրական շղթաների անցողիկ պրոցեսներ</b><br/> Անցողիկ պրոցեսների հասկացությունը, ընդհանուր դրույթները և կոմուտացայի օրենքները: Կոճի միացումը հաստատուն լարման շղթայում: RC շղթայի միացումը հաստատուն լարմանը: RLC շղթաների միացումը, անցողիկ պրոցեսը փոփոխական շղթայում:</p> <p><b>Թեմա 6. Ոչ գծային շղթաներ: Ոչ սինուսոիդալ շղթաներ</b><br/> Ոչ սինուսոիդալ հոսանքի և լարման շղթաներ, հիմնական պարամետրերը: Փոփոխական հոսանքի ոչ գծային շղթաներ, ոչ գծային ինդուկտիվությամբ ոչ գծային շղթաներ: Ֆերոմագնիսական միջուկով: Ֆերոմագնիսական միջուկ ունեցող կոճով անցնող հոսանքը Ոչ սինուսոիդալ հոսանքի կերպափոխումը սինուսոիդալ հոսանքի: Ֆերոմագնիսական միջուկով կոճ: Ֆերոմագնիսական միջուկով կոճի փոխարինման սխեման: Տրանսֆորմատոր: Հիմնական առնչությունները, տրանսֆորմացիայի գործակից:</p> <p><b>Թեմա 7.Մագնիսական շղթաներ</b><br/> Երկար լարեր: Փոխարինման սխեմա, նախնական պարամետրեր, դիֆերենցիալ հավասարումներ: Երկար լարի աշխատանքը հաստատված ռեժիմը սինուսոիդալ սնման աղբյուրի դեպքում: Էլեկտրամագնիսական դաշտ. Էլեկտրամագնիսական դաշտի տեսության հիմնական դրույթները: Մաքսվելի հավասարումները:</p> <p><b>Թեմա 8.Քառաբևեռ տեսություն</b><br/> Հիմնական հավասարումները, քառաբևեռով փոխարինման սխեմաներ: Քառաբևեռի գործակիցների գործնական որոշումը: Քառաբևեռի բնութագրիչ պարամետրերի որոշումը: Քառաբևեռի հավասարումներ, համարժեք փոխարինման սխեմաներ:</p> <p><b>Թեմա 9. Էլեկտրական սարքեր տարրային հենք</b><br/> Կիսահաղորդիչ, հաղորդականություն: Խառնուրդային կիսահաղորդիչներ: Հիմնական և ոչ հիմնական</p> |

կրիչներ: P-ն անցումը հավասարակշռված վիճակում: Կոնտակտային պոտենցիալների տարբերություն: Փակող շերտ: p-ն անցման ուղիղ և հակառակ միացումներ: Վոլտ-ամպերային բնութագիր: Ծակում: Կիսահաղորդչային դիոդներ, հիմնական պարամետրեր, տեսակները: Երկբևեռ տրանզիստորի աշխատանքի սկզբունքը: Տրանզիստորի ուժեղացնող հատկությունները, աշխատանքի ռեժիմները: Ակտիվ, հագեցում, փակում, բացատում: Տարբեր սխեմաներում երկբևեռ տրանզիստորների ստատիկ բնութագրերը և նրանց կապը տրանզիստորի պարամետրերի հետ: Տրանզիստորների մոդելավորումը: Դաշտային տրանզիստորներ: Դասակարգումը, դեկավարող p-ն անցումով դաշտային տրանզիստորի աշխատանքի սկզբունքը: Բնութագրեր: Մեկուսացված փականով դաշտային տրանզիստորներ, նրանց պարամետրերը և բնութագրերը: Տարբեր դաշտային տրանզիստորների համեմատական բնութագրեր:

**Թեմա 10 Թվային էլեկտրոնային սարքեր: Տրամաբանական տարրեր: Կոմբինացիոն թվային սարքեր: Հաջորդական թվային սարքեր: Տրիգերներ: Կոմբինացիոն թվային սարքեր: Հաջորդական թվային սարքեր: Ռեգիստրներ: Հաշվիչներ: Թվային հիշող տարրեր, պարամետրերը, տեսակները և նրանց վրա հիմնված սարքեր:**

Ինպուլսային ազդանշաններ. Պարամետրեր, անցողիկ պրոցեսները ինպուլսային սխեմաներում: Տրանզիստորային բանալիներ: Տրամաբանական տարրեր, դասակարգում և հիմնական պարամետրերը, տարբեր տիպի տրամաբանական տարրերի առանձնահատկությունները: Կոմբինացիոն թվային սարքեր, հաջորդական թվային սարքեր, Ասինխրոն թվային սարքեր: Ասինխրոն և սինխրոն թվային սարքեր: Հաշվիչներ, ռեգիստրներ, դեշիֆրատորներ: Թվային սարքեր, տեսակները, պարամետրերը: Թվային հիշող սարքերով հիմնված սարքեր:

**Թեմա 11. Անալոգային էլեկտրոնային սարքեր**

Տրանզիստորային ուժեղարար, միակասկաղ տրանզիստորային ուժեղարարի հիմնական պարամետրերը, հետադարձ կապը տրանզիստորային ուժեղարարում և նրա ազդեցությունը ուժեղարարի պարամետրերի վրա: Օպերացիոն ուժեղարար և նրա հիմնական պարամետրերը: Օպերացիոն ուժեղարարներով հիմնված գծային և ոչ գծային սարքեր. Լոգարիթմական ուժեղարար, լարման կոմպարատոր, Շմիդտի տրիգեր:

**Թեմա 12. Ինպուլսների գեներատոր. Տիպերը: Ավտոտատանողական և մոնոստաբիլ գեներատորներ: Օպերացիոն ուժեղարարների վրա հիմնված ինպուլսների գեներատորներ, պարամետրերը: Ինտեգրալ թայմերներ: Ինտեգրալ թայմերներով գեներատորային սխեմաներ:**

Ինտեգրալ չիպերով ինպուլսային գեներատորներ և նրանց վրա հիմնված սարքեր: Տրամաբանական տարրերով ինպուլսների գեներատորներ և ինտեգրալ թայմերներ, նրանց վրա հիմնված սարքեր:

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Гальперин М. В. Электротехника и электроника: Учебник Москва: Издательство "ФОРУМ", 2016
2. <http://znanium.com/go.php?id=553180>
3. Бессонов Л. А. Теоретические основы электротехники. Электрические цепи: учебник для бакалавров : допущено М-вом образования РФ в качестве учебника для студентов вузов, обучающихся по направлениям подготовки дипломированных специалистов "Электротехника, электромеханика и электротехнологии", "Электроэнергетика", "Приборостроение", Москва: Юрайт, 2013
4. Сулейманов Р. Я. Теоретические основы электротехники: в 2-х частях : конспект лекций для студентов всех форм обучения Екатеринбург: УрГУПС, 2016
5. [http://biblioserver.usurt.ru/cgi-bin/irbis64r\\_13/cgiirbis\\_64.exe?C21COM=F&I21DBN=KN&P21DBN=KN](http://biblioserver.usurt.ru/cgi-bin/irbis64r_13/cgiirbis_64.exe?C21COM=F&I21DBN=KN&P21DBN=KN)
6. Прянишников В.А. Электроника: Полный курс лекций СПб.: КОРОНА принт, 2006
7. Марченко А. Л. Основы электроники: учебное пособие для студентов вузов, обучающихся по неэлектротехническим направлениям подготовки бакалавров 550000- технические науки по специальности 650000-техника и технология Москва: ДМК Пресс, 2009
8. Чижма С. Н. Электроника и микросхемотехника Москва: Издательство УМЦ ЖДТ (Маршрут), 2012
9. [http://e.lanbook.com/books/element.php?pl1\\_cid=25&pl1\\_id=4196](http://e.lanbook.com/books/element.php?pl1_cid=25&pl1_id=4196)
10. Штрапенин Г. Л., Шнырев В. Т. Электроника: в 2-х ч. : методические указания к выполнению лабораторных работ для студентов спец. 190901 - "Системы обеспечения движения поездов", 221000 - "Мехатроника и робототехника", 230100 - "Информатика и вычислительная техника", 230400 - "Информационные системы и технологии" всех форм обучения Екатеринбург: УрГУПС, 2012
11. Хоровиц П Хилл У - Искусство схемотехники, Пер. с англ.-М.Издательство, 704с., 2014,

|   |                                   |                  |
|---|-----------------------------------|------------------|
| 1. 0104/B48   | 2. Էլեկտրոնիկա և սխեմատեխնիկա /ՀԲ | 3. 5 ECTS կրեդիտ |
| 4. 5 ժամ/շաբ.   | 5. 45/15/15                       |                  |
| 6. 5-րդ կիսամյակ  | 7. Եզրափակիչ գնահատումով          |                  |
| 8. Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացել ժամանակակից էլեկտրոնային սխեմաների կառուցվածքին և սովորեցնել՝ |                                   |                  |

- տեխնիկական և վիրտուալ փորձարարական հարթակների միջոցով մշակել և հավաքել սխեմաներ, կազմել դրանց գործունեությունն ապահովող ծրագրեր և փորձարկել,
- սովորեցնել մշակել և նախագծել ժամանակակից ռոբոտատեխնիկական և մեխատրոնային սարքերի էլեկտրոնային հանգույցներ, փորձարկել դրանք, կատարել դրանց հիմնական բնութագրերի հաշվարկ,
- սովորեցնել կիրառել անհրաժեշտ տվիչային միջոցները, մշակել համապատասխան ծրագրեր, տեղակայել և գործարկել մշակված ծրագրային միջոցները:

**Դասընթացի խնդիրները.**

Ուսանողների մոտ ձևավորել՝

- անալոգային և թվային էլեկտրոնային սարքերի, հանգույցների և տեղեկատվական համակարգերի կառուցվածքների և նրանց աշխատանքի սկզբունքների իմացություն,
- ժամանակակից էլեկտրոնային համակարգերի աշխատանքը վերլուծելու կարողություններ,
- արդյունաբերական ռոբոտների մշակման, նրանց փորձարարական և սպասարկման նախագծահաշվարկային աշխատանքներ կատարելու ունակություններ,
- ինքնուրույն տեխնիկական առաջադրանք կազմելու, էլեկտրոնային սարք սինթեզելու, փորձնական հետազոտություններ կատարելու հմտություններ,
- տեխնիկական տեղեկատվության հետ, օգտվել անհրաժեշտ մասնագիտական գրականությունից օգտվելու ունակություններ:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. ներկայացնելու էլեկտրոնային սարքերի աշխատանքի սկզբունքը,
2. բացատրելու դինամիկ ռեժիմներում էլեկտրոնային սարքերի բնութագրերը,
3. ներկայացնելու նախագծերի մշակման վիրտուալ հարթակների գործիքակազմը,
4. տեխնիկապես հիմնավորելու էլեկտրոնային բլոկում էլեկտրոնային տարրի և հանգույցի կիրառությունը,
5. էլեմենտային բազայից ընտրելու համապատասխան տարրեր,

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. մշակելու էլեկտրոնային սարքեր և սարքավորումներ,
2. կարդալու և կազմելու էլեկտրոնային սխեմաներ, կատարելու կոնկրետ էլեկտրոնային սխեմաների տեխնիկական հաշվարկներ և գնահատելու դրանց աշխատանքի դինամիկան,
3. նախագծելու էլեկտրամեխանիկական և մեխատրոնային համակարգերի էլեկտրոնային սարքեր և կատարելու կոնստրուկտորական մշակումներ,
4. անցկացնելու մշակված և հավաքված էլեկտրոնային սարքերի փորձարկումներ,
5. օգտագործելու վիրտուալ նախագծային հարթակների գործիքակազմը,

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. աշխատելու էլեկտրոնային տեխնիկական փաստաթղթերի և ռեսուրսների հետ:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա6.**Ներկայացնելու ռոբոտատեխնիկական օբյեկտների ծրագրային ապահովման սկզբունքները և դրանց վրա հիմնված ավտոմատ կառավարման համակարգերի սխեմատեխնիկական իրականացման հիմնական հասկացությունները և եղանակները:

**Ա7.**Բացահայտելու, ներկայացնելու, վերլուծելու և մեկնաբանելու ծրագրային համակարգերի ապարատային և ծրագրային լուծումների մարքետինգային բնութագրիչները և ցուցանիշները:

**Բ4.**Իրականացնելու հետազոտություններ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:

**Բ7.**Նախագծելու և կառուցելու ավտոմատ կառավարման համակարգեր (ռոբոտներ), մշակելու դրանց սխեմատեխնիկական իրականացման միջոցները և ծրագրային ապահովումը:

**Գ2.**Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

**Գ4.**Ստանձնելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

**Գ5.**Մասնագիտական հանրություն կառուցելու տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ բանավոր ու գրավոր խոսք մայրենի և որևէ օտար լեզվով:

|   |
|---|
| <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• քննարկում /բանավեճ</li> <li>• համագործակցային աշխատանք</li> <li>• մտազրոհ</li> <li>• վերլուծական մեթոդ</li> <li>• խոսքային կամ բանավոր մեթոդ</li> <li>• գրավոր մեթոդ</li> <li>• բացատրական մեթոդ</li> </ul>   |
| <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b><br/> Եզրափակիչ գնահատումով մուդուլ՝ առավելագույն <b>20</b> (4+4+8+4) միավոր:<br/> <b>1-ին ընթացիկ քննություն.</b> առավելագույնը <b>4</b> միավոր:<br/> <b>2-րդ ընթացիկ քննություն.</b> հետազոտական աշխատանք՝ առավելագույնը <b>4</b> միավոր:<br/> <b>Եզրափակիչ բանավոր քննություն.</b> առավելագույնը <b>8</b> միավոր:<br/> <b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>4</b> միավոր:</p>   |
| <p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b><br/> <b>Ներածություն</b><br/> Դասընթացի խնդիրները և բովանդակությունը: Մեխատրոնային և ռոբոտեխնիկական համակարգերի էլեկտրոնային սարքեր, մեխատրոնիկայում և ռոբոտատեխնիկական համակարգերում էլեկտրական ազդանշաններ:</p> <p><b>Թեմա 1. Ազդանշանների ձևափոխում</b><br/> Ազդանշանների ձևափոխման հիմնական գործողությունները. ուժեղացում, ֆիլտրացիա, սպեկտրալ փոփոխություն, պահպանում, հաղորդում:</p> <p><b>Թեմա 2. Չդեկավարվող ուղղիչներ: Կիսահաղորդչային դիոդներ</b><br/> Մեկկիսապարբերանի ուղղիչներ: Կամրջակային ուղղիչներ: Ֆիլտրերի կիրառությունը: Ուղղիչների արտաքին բնութագրեր: Լարման կայունարարներ: Ուղղիչի կառուցվածքային սխեման, կիրառությունը երկրորդային սնման աղբյուրներում: Էտալոնային հոսանքի և լարման աղբյուրներ:</p> <p><b>Թեմա 3. Տիրիստորներ</b><br/> Ընդհանուր տեղեկություններ տիրիստորների մասին: Տիրիստորների աշխատանքի ռեժիմները և կառուցվածքը: Հիմնական ֆիզիկական պրոցեսները: Տիրիստորների տեսակները. Դինիստորներ, տրինիստորներ, սիմիստորներ: Բնութագրեր և պարամետրեր, վոլտ-ամպերային բնութագրերի յուրահատկությունները: Կիրառության ասպարեզը:</p> <p><b>Թեմա 4. Բիպոլյար տրանզիստորներ: Փոփոխական հոսանքի ուժեղացման կասկադներ</b><br/> Բիպոլյար տրանզիստորի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, հիմնական բնութագրերը: Թույլ ազդանշանների դեպքում փոխարինման սխեմաներ: Ընդհանուր էմիտերով ուժեղացման կասկադներ: Ուժեղացման կասկադի գրաֆիկական անալիզ, աշխատանքային /բանվորական/ կետեր, փոխարինման սխեմաներ, ուժեղացման գործակից, կասկադի մուտքային և ելքային դիմադրություններ: Ընդհանուր էմիտերով կասկադի ջերմային կայունացում, հաճախականային բնութագրեր, թողարկման շերտ: Ընդհանուր կոլեկտորով ուժեղացման սխեմաներ, բազմակասկադ միացումներ, ուժեղացման գործակից: Բիպոլյար տրանզիստորի բանալիային միացման սխեմա:</p> <p><b>Թեմա 5. Հաստատուն հոսանքի ուժեղարարներ</b><br/> Հաստատուն հոսանքի ուժեղարարների կառուցվածքային առանձնահատկությունները: Հաստատուն հոսանքի փոխարինման սխեմաներ: Հաճախականային բնութագրեր: Հաստատուն հոսանքի դիֆերենցիալ ուժեղարարներ, աշխատանքի սկզբունքը: Ուժեղացման գործակից, մուտքային և ելքային դիմադրություններ:</p> <p><b>Թեմա 6. Օպտոէլեկտրոնիկայի սարքեր</b><br/> Լույսի կառավարվող աղբյուրներ և նրանց վրա հիմնված սարքեր: Լուսային էներգիայի էլեկտրականի ձևափոխիչներ /ֆոտոընդունիչներ, ֆոտոդիմադրություններ, ֆոտոտրանզիստորներ, ֆոտոդիոդներ/: Ֆոտոընդունիչների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, բնութագրերը և պարամետրերը: Ֆոտոընդունիչների միացման սխեմաները: Կիրառման տիրույթները: Օպտրոններ:</p> <p><b>Թեմա 7. Ուժեղարար սարքերում հետադարձ կապերը</b><br/> Հետադարձ կապով ուժեղարարի ընդհանրացված սխեման, նրա ազդեցությունը ուժեղարարի ընդհանուր պարամետրերի վրա: Ուժեղարարի ազդեցությունը հաճախականային հատկությունների վրա: Հետադարձ կապի միացման տեսակները:</p> <p><b>Թեմա 8. Հզորության ուժեղարարներ</b><br/> Հզորության գծային ուժեղարարներ: Հզոր տրանզիստորների կիրառելու առանձնահատկությունները: Բանալիային ուժեղարարներ:</p> <p><b>Թեմա 9. Օպերացիոն ուժեղարարներով սարքեր</b><br/> Հետադարձ կապով օպերացիոն ուժեղարարների սխեմաներ, ինվերտոր և ոչ ինվերտոր ուժեղարարներ,</p> |

գումարիչ, ինտեգրատոր, դիֆերենցատոր, ինտեգրատոր, ընտրողական ուժեղարար: Ելքային լարման և ուժեղացման գործակցի հաշվարկ: Անալոգային բանալիներ: Երկրորդային սնման աղբյուրներ: Շմիդտի տրիգեր: Օպերացիոն ուժեղարարներով կառուցված էլեկտրական ազդանշանների գեներատորներ:

**Թեմա 10. Ավտոգեներատորներ**

Հարմոնիկ տատանումների գեներատոր, նշանակությունը, գործողության սկզբունքը: RC և LC-տիպի գեներատորներ:

**Թեմա 11. Երկրորդային էլեկտրասնուցման աղբյուրներ**

Սնուցման աղբյուրների ֆունկցիոնալ տարրեր. Փոփոխական լարման ձևափոխում, հաստատուն հոսանքի պարամետրական կայունարարներ: Հաստատուն լարման գծային կայունարարներ:

**Թեմա 12. Կերպափոխմամբ հաստատուն լարման աղբյուրներ**

Դասակարգումը: Հաստատուն լարման բանալիային կայունարարներ: Ղեկավարման սարքեր:

**Թեմա 13. Էլեկտրոնային տեխնիկայի թվային սարքեր:**

Թվային և իմպուլսային տեխնիկայի հիմունքներ: Ինֆորմացիայի ներկայացումը: Տրամաբանության հիմնական հասկացություններ, հաշվանքի համակարգեր: Ինտեգրալ տեսքով թվային տրամաբանական տարրեր: Հիմնական տրամաբանական տարրեր, պլամանական նշանակումներ, անցումային աղյուսակներ: Տրամաբանական տարրերի աշխատանքները, դիողային տրամաբանության, TTL, KMOP տրամաբանության վիճակներ: Մինիստրոն և ապիսիստրոն տրիգերներ: Տեսական բնութագրերը: Էլեկտրոնային սարքավորումներ, կոմբինացիոն սխեմաներ, հաշվիչներ և ռեգիստրներ, դասակարգումները, հիմնական տիպերը: Իմպուլսային ազդանշանների ռեժիմով աշխատող էլեկտրոնային սարքերին ներկայացվող պահանջները: Թվա-անալոգային ձևափոխիչ /ԹԱԶ/ և անալոգա-թվային ձևափոխիչ /ԱԹԶ/: Սկզբունքային կառուցվածքը: Ինտեգրալ ԱԹԶ և ԹԱԶ չիպեր և նրանց սխեմատեխնիկական տարրերը: ԱԹԶ/ԹԱԶ միակցումը օբյեկտի հետ:

**Թեմա 14. Էլեկտրոնային տարատեսակ սարքեր, սարքավորումներ**

Էլեկտրական մեքենաներ, ինդուկտիվության կոճեր, դրոսելներ, տրանսֆորմատորներ և մագնիսական ուժեղարարներ: Էլեկտրաքիմիական հոսանքի աղբյուրներ, թվային տեխնիկայի տարրեր, լարեր, մալուխներ և շինաներ, հեռամեխանիկայի սարքեր և էլեկտրամեխանիկական կոմուտացիոն սարքեր:

**Թեմա 15. Էլեկտրոնային սխեմաների նախագծման և սխեմատեխնիկական մոդելավորման մեթոդներ և միջոցներ**

Էլեկտրոնային սխեմաների նախագծման և սխեմատեխնիկական մոդելավորման մեթոդներ և միջոցների լուսաբանում: Proteus միջավայրի հնարավորությունները: Մոդելի տարրեր: Տպասալերի ավտոմատ նախագծման ծրագրերի /օրինակ՝ PCad տիպի/ հնարավորությունները: Պետական ստանդարտներ. Էլեկտրոնային սխեմաների տեսակներ և տիպեր, էլեկտրական սխեմաների իրագործման կանոններ: Պայմանական նշանակումներ: Տպասալերի պատրաստում:

**Թեմա 16. Մենստրներ և տվիչներ**

Հիմնական հասկացություններ և սահմանումներ: Ռոբոտատեխնիկական, մեխատրոնիկական և սենսորների, տվիչների վրա հիմնված տեղեկատվական համակարգեր: Տեղեկատվական համակարգերի կենսաչափական հիմնադրույթները:

**Թեմա 17. Տվիչներ**

Տեղեկատվական համակարգերի տվիչների մասին ընդհանուր տեղեկություններ: Տվիչների բնութագրերը, չափումների պրոցեսը, ինֆորմացիոն մոդելից կախված չափումների որակի գնահատականները, սխալանքների հաշվառումը և կոմպենսացիան: Ինֆորմացիոն համակարգերի տարրերը: Տվիչների զգայուն տարրեր: Տվիչների չափիչ սխեմաներ: Չափող ուժեղարարներ:

**Թեմա 18. Դիրքային տվիչներ**

Ռեզիստիվ տիպի դիրքի և տեղաշարժման կինեստատիկ տվիչներ: Էլեկտրամագնիսական կինեստատիկ տվիչներ: Դիրքային ֆոտոէլեկտրական տվիչներ:

**Թեմա 19. Արագության և դինամիկ մեծությունների չափումներ**

Արագության տվիչներ /հաստատուն և փոփոխական հոսանքների տախոգեներատորներ/: Դինամիկ մեծությունների և արագության տվիչներ. պլեգոէլեկտրական, ձկուն մագնիսական, էլեկտրաստատիկ, էլեկտրամագնիսական:

**Թեմա 20. Լոկացիոն /տեղորոշող/ ինֆորմացիոն համակարգեր:**

Լոկացիայի տեսական հիմունքները: Էլեկտրամագնիսական լոկացիոն համակարգեր: Ակուստիկ լոկացիոն համակարգեր:

**Թեմա 21. Տեխնիկական պատկերային համակարգեր**

Պատկերի ձևավորման և հաղորդման սկզբունքներ: Պատկերի տվիչներ (վիդեոկոններ, հեռախցիկներ, տարբեր տիպի հեռախցիկներ): Պատկերի մուտք/ելքի սարքեր: Պատկերների պահելու ֆորմատներ: Պատկերի մշակման բազային ալգորիթմներ: Պատկերների ճանաչողություն:

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Хоровиц П. Хилл У - Искусство схемотехники, Пер. с англ.-М.Издательство, 2014.
